

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԽԱԶՍԵՐՈՒԿՆԵՐ,  
ՆՈՐ ՍԱՐՏԱԿՐԱՎԵՐՆԵՐ

ՈՌԻԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**ՀԱՏՈՐ 11(2)**

ԵՐԵՎԱՆ – 2013

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# **CONTEMPORARY EURASIA**

**EURASIAN CROSSROADS:  
NEW CHALLENGES**

EDITED BY RUBEN SAFRASTYAN

**VOLUME II (2)**

YEREVAN — 2013

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# **СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ**

**ЕВРАЗИЙСКИЕ ПЕРЕКРЕСТКИ:  
НОВЫЕ ВЫЗОВЫ**

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

**ТОМ II (2)**

ЕРЕВАН — 2013

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**

**Ռուբեն Սաֆրաստյան**, պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Լիլիթ Հարությունյան**, պ. գ. թ., դոցենտ

**Գոհար Իսկանդարյան**, պ. գ. թ., դոցենտ

**Վահրամ Տեր-Մաթևոսյան**, պ. գ. թ.

**Լևոն Հովսեփյան**, պ. գ. թ.

**Նազելի Նավասարդյան**, պ. գ. թ. (հատորի պատասխանատու)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի սույն համարում քննարկվում են Եվրասիայում ընթացող աշխարհաքաղաքական, սոցիալ-քաղաքական գործընթացներն ու դրանց ազդեցությունները տարածաշրջանային զարգացումների վրա: Հատորն ընդգրկում է Մերձավոր Արևելքում, Կենտրոնական և Արևելյան Ասիայում, Կովկասում ընթացող քաղաքական վերափոխումներին, գլոբալացման ու անվտանգության հիմնախնդիրներին վերաբերող հոդվածներ:

Նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող այլ շրջանների համար:

ISSN 1828–3948

PUBLISHED BASED ON THE DECISION OF THE SCIENTIFIC  
COUNCIL OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

**EDITOR IN CHIEF**

**Ruben Safrastyan**, Prof., Dr., Corresponding Member of NAS RA

**EDITORIAL BOARD:**

**Lilit Harutyunyan**, Assoc. Prof., PhD

**Gohar Iskandaryan**, Assoc. Prof., PhD

**Vahram Ter-Matevosyan**, PhD

**Levon Hovsepyan**, PhD

**Nazeli Navasardyan**, PhD, Responsible for the Volume

The current issue of the “Contemporary Eurasia” analyses contemporary geopolitical and socio-political problems in Eurasia and their effects on major regional developments. The articles deal with the political transformations, globalization and security issues in the Middle East and Caucasus, as well as Central Asia and East Asia. The volume may be of interest for scholars, politologist experts and students.

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

### **ГЛАВНЫЙ РЕДАКТОР**

**Рубен Сафрастян**, д. и. н., профессор, член–корреспондент НАН РА

### **РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Лилит Арутюнян**, к. и. н., доцент

**Гоар Исхандарян**, к. и. н., доцент

**Ваграм Тер–Матевосян**, к. и. н.

**Левон Овсепян**, к. и. н.

**Назели Навасардян**, к. и. н., ответственная за выпуск

В выпуске II (2) “Современная Евразия” анализируются актуальные геополитические и социально-политические процессы, проблемы преобразований в Евразии и их влияние на развитие ситуации в регионе. Сборник включает статьи, посвященные вопросам глобализации и безопасности на Ближнем Востоке и на Кавказе, а также в Центральной и Восточной Азии. Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся ближневосточным регионом.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

### ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

«Ծաղրանկարային պատերազմ».  
պայքար գլոբալ արժեքների համար ..... 10

### ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Խաղաղության մոնիթորինգի ուժերի խնդիրն  
Իրաքյան Քուրդիստանում թուրքական ռազմական  
ներկայության համատեքստում ..... 23

### ՆԱՏԱԼՅԱ ՍԼՈՔՈՂՅԱՆ

«Մեծ Մերձավոր Արևելք» նախագիծը.  
ամերիկյան և ռուսական մոտեցումներ ..... 37

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ

### ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Նոր մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու»  
չինական հայեցակարգը ..... 46

### ՆԱՐԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

Ղազախստանի ազգաշինության մարտահրավերները..... 68

### ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռազմականացման նոր խնդիրներն Ասիայում և  
ամերիկյան նոր հայեցակարգը ..... 81

## ԿՈՎԿԱՍ

### ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Անվտանգության խնդիրները Հյուսիսային Կովկասում.  
հայության օրինակը..... 99

### ՆԱՐԵՎ ԳԱԼՍՅԱՆ

Եվրոպական միության հարավկովկասյան քաղաքականության  
հիմքերն ու առանձնահատկությունները ..... 111

## CONTENTS

### MIDDLE EAST

#### **ARAKS PASHAYAN**

“Cartoon War”: Struggle for Global Values .....10

#### **VAHRAM PETROSYAN**

The Issue of the Peace Monitoring Force in the Context of  
Turkish Military Presence in the Iraqi Kurdistan.....23

#### **NATALIA SLOBODYAN**

The Project of “The Greater Middle East”:  
American and Russian Version .....37

### CENTRAL AND EAST ASIA

#### **AGHAVNI HARUTYUNYAN**

The Chinese Concept of “New Silk Road Economic Belt” ..... 46

#### **NAREK MKRTCHYAN**

The Challenges of Kazakhstan’s Nation Building..... 68

#### **ARTSRUN HOVHANNISYAN**

New Issues of Militarization in Asia and American  
New Strategy.....81

### CAUCASUS

#### **VAHRAM TER-MATEVOSYAN**

Security issues in the North Caucasus:  
The case of armenians ..... 99

#### **NAREK GALSTYAN**

Determinants and Features of Geopolitics of the  
European Union in the South Caucasus ..... 111



## СОДЕРЖАНИЕ

### БЛИЖНИЙ ВОСТОК

|   |    |
|---|----|
| <b>АРАКС ПАШАЯН</b>   |    |
| “Карикатурная война”: Борьба за глобальные ценности ....  | 10 |
| <b>ВАГРАМ ПЕТРОСЯН</b>  |    |
| Проблема Сил мониторинга по поддержанию мира<br>в контексте турецкого военного присутствия в<br>Иракском Курдистане ..... | 23 |
| <b>НАТАЛИЯ СЛОБОДЯН</b>   |    |
| Проект «Большой Ближний Восток»:<br>американская и российская версии .....  | 37 |

### ЦЕНТРАЛЬНАЯ И ВОСТОЧНАЯ АЗИЯ

|  |    |
|--|----|
| <b>АГАВНИ АРУТЮНЯН</b>   |    |
| Китайская концепция «Экономического пояса нового<br>шелкового пути» .....  | 46 |
| <b>НАРЕК МКРТЧЯН</b>   |    |
| Вызовы национального строительства Казахстана.....                         | 68 |
| <b>АРЦРУН ОГАНЕСЯН</b>   |    |
| Новые вопросы милитаризации в Азии<br>и новая американская стратегия ..... | 81 |

### КАВКАЗ

|   |     |
|---|-----|
| <b>ВАГРАМ ТЕР-МАТЕВОСЯН</b>   |     |
| Проблемы безопасности на Северном Кавказе<br>на примере армян .....                 | 99  |
| <b>НАРЕК ГАЛСТЯН</b>  |     |
| Детерминанты и особенности геополитики Европейского<br>Союза на Южном Кавказе ..... | 111 |

## ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

---

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

### «ԾԱՂՂԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ». ՊԱՅՔԱՐ ԳԼՈՒԲԱԼ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2006 թ. հունվար-փետրվար ամիսներին սկիզբ առած «ծաղրանկարային պատերազմը» կապված էր 2005 թ. սեպտեմբերի 30-ին Դանիայի ազգային թերթերից մեկի՝ Յիլանդս-փոսթենի (Jyllands-Posten)<sup>1</sup> «Մուհամեդի երեսը» խորագրով հրապարակման հետ<sup>2</sup>: Դրանում քննարկված էր արդի իրողությունների, մասնավորապես արևմտյան ժողովրդավարության նկատմամբ իսլամական ժխտողական մոտեցումների հարցը, որը, ինչպես նշում էր թերթի խմբագրությունը, նպատակ ուներ նպաստել խնդրի շուրջ բանավեճի ծավալմանը: Հողվածի գեղարվեստական ձևավորումը ներկայացված էր Մուհամեդ մարգարեի կերպարի մոտիվներով արված 12 ծաղ-

<sup>1</sup> Յիլանդս-փոսթենը (ամբողջական անվանումն է՝ Morgenavisen Jyllands-Posten) հիմնադրվել է 1871 թ. (կայքում այս թիվն է գրված): Թերթի առաջին համարը լույս է տեսել նույն թվականի հոկտեմբերի 2-ին: Դանիայի ամենամեծ տպագրություն և սպառում ունեցող թերթերից մեկն է: Համարվում է անկախ, ազատական և աջ հայացքներ ունեցող թերթ: Պաշտոնական կայքէջն է՝ <http://jyllands-posten.dk/>

<sup>2</sup> Cartoons of Muhammad, <http://www.aina.org/releases/20060201143237.htm>

րանկարով<sup>3</sup>, որոնցում իսլամի հիմնադիրը պատկերված էր վանող արտաքինով<sup>4</sup>:

Ծաղրանկարների հրապարակումը Դանիայի մուսուլմանների շրջանում ընդհանուր առմամբ բացասականորեն ընկալվեց: Սակայն խնդրին առաջինն արձագանքեցին սուննի և արաբական ծագում ունեցող մի քանի իմամներ՝ կատարվածը մեկնաբանելով սուննի իսլամի տեսանկյունից: Ըստ այդմ՝ արգելվում է պատկերել թե՛ մարդկանց ու կենդանիներին և թե՛ իսլամի մարգարեին: Քննադատները ծաղրանկարները համարեցին իսլամատյացության և ռասայականության դրսևորում, որ նպատակ ուներ նվաստացնել մուսուլմաններին, վիրավորել նրանց կրոնական զգացմունքները<sup>5</sup>: Հոկտեմբերի 8-ին դանիական մուսուլմանական մի քանի խմբեր Յիլանդս-փոսթենից պահանջեցին ներողություն խնդրել, իսկ դանիական կառավարությունից՝ այդ ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկել: Սակայն թե՛ թերթի խմբագրակազմը, որն, ի դեպ, բազմաթիվ սպառնալից նամակներ ստացավ տեղացի մուսուլմաններից, թե՛ դանիական կառավարությունը, հետևողականորեն պաշտպանեցին ազատ խոսքի իրավունքը<sup>6</sup>:

Դանիայում մեծ տեղ է տրվում ոչ միայն մամուլի ազատությանը, այլև քաղաքացիական իրավունքներին: «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության 2005 թ. հրապարակած մամուլի ազատության ինդեքսի տվյալներով Դանիան համարվել է մամուլի ազատությունը պաշտպանող առաջատար երկիր՝ տեղ գտնելով առաջին հորիզոնականում<sup>7</sup>:

Նշենք, որ իսլամը Դանիայի երկրորդ ամենամեծ կրոնն է: Մուսուլմանները կենտրոնացած են հիմնականում մեծ քաղաքներում՝

<sup>3</sup> Ծաղրանկարների մեթոդաբանական վերլուծությունը տես Marion G. Müller, Esra Özcan, The Political Iconography of Muhammad Cartoons: Understanding Cultural Conflict and Political Action, Political Science and Politics, April 2007, [http://www.apsanet.org/imgtest/PSApr07Muller\\_Ozcan.pdf](http://www.apsanet.org/imgtest/PSApr07Muller_Ozcan.pdf)

<sup>4</sup> Ծաղրանկարներում իսլամի մարգարեն մռայլ և անհրապույր հայացք ունի, մուգ և անխնամ մորուք, հաստ ունքեր:

<sup>5</sup> Weiner E., Why Cartoons of the Prophet Insult Muslims, <http://www.npr.org/templates/story/story.php?storyId=5196323>

<sup>6</sup> Ammitzbøll P., L. Vidino, After the Danish Cartoon Controversy, Middle East Quarterly Winter 2007, pp. 3-11, [http://www.meforum.org/1437/after-the-danish-cartoon-controversy#\\_ftn24](http://www.meforum.org/1437/after-the-danish-cartoon-controversy#_ftn24)

<sup>7</sup> Press Freedom Index 2005, <http://en.rsf.org/press-freedom-index-2005,549.html>

Կոպենհագենում, Օդենսում և Աարհուսում<sup>8</sup>: ԱՄՆ-ի պետքարտուղարության տվյալներով՝ Դանիայի 5,4 միլիոն բնակչության 3.7 տոկոսը մուսուլմաններ են (մոտ 210.000 մարդ): Այս հարցի վերաբերյալ կան նաև այլ ուսումնասիրություններ, հրապարակվել են թե՛ ավելի նվազ, թե՛ ավելի բարձր թվեր<sup>9</sup>:

Դանիայում մուսուլմանների՝ որպես աշխատանքային ներգաղթյալների հոսքը հիմնականում սկսվել է 1960-ականների վերջերից, շարունակվել 1980-90-ականներին Մերձավոր Արևելքից և այլ շրջաններից (Իրանից, Լիբանանից, Պաղեստինից, Մարոկոյից, Թուրքիայից, Իրաքից, Սոմալիից, Պակիստանից, Բոսնիայից և այլն): Դանիայում մուսուլմանական առանձին շրջանակներում իսլամական նոր ինքնության և արմատական մոտեցումների ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստել է նաև միջազգային իսլամական քարոզչական կազմակերպությունների գործունեությունը<sup>10</sup>: Տարիների ընթացքում նաև բազմաթիվ դանիացիներ իսլամ են ընդունել<sup>11</sup>:

Ժամանակի ընթացքում, ունենալով նաև կառավարության աջակցությունը, մուսուլմանները հիմնել են սեփական համայնքային կառույցները, այդ թվում՝ մզկիթներ<sup>12</sup>: Դանիայում ընդհանուր առմամբ առկա են մուսուլմանական համայնքներին առնչվող այն խնդիրները, ինչ որ Արևմտյան Եվրոպայում՝ կապված կրոնական իրավունքների ընդլայնման և իսլամի ինստիտու-

<sup>8</sup> Denmark, Bureau of Democracy, Human Rights, and Labor, International Religious Freedom Report 2009, October 26, 2009, <http://www.state.gov/j/drl/rls/irf/2009/127307.htm>

<sup>9</sup> Brian Arly Jacobsen, Muslims in Denmark: A Critical Evaluation of Estimation, Islam in Denmark. The Challenge of Diversity. Published by Lexington Book, edited by Jørgen S. Nielsen, UK, 2012, [http://books.google.am/books?id=TVohQNHA48cC&printsec=frontcover&hl=ru&source=gbs\\_ge\\_summary\\_r&cad=0#v=onepage&q&f=false](http://books.google.am/books?id=TVohQNHA48cC&printsec=frontcover&hl=ru&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false); Population in Denmark, <http://www.dst.dk/en/Statistik/emner/befolkning-og-befolkningensfremskrivning/folketal.aspx>

<sup>10</sup> Եվրոպայում և աշխարհի տարբեր հատվածներում իսլամի արմատական գաղափարների ամրապնդման գործում բացառիկ դերակատարություն են ունեցել և ունեն առանձին մուսուլմանական երկրներ, որոնց մեջ առանձնաձևում է սալաֆիականություն արտահանող ամենամեծ պետություն համարվող Սաուդյան Արաբիան՝ իր իսկ կողմից ստեղծված միջազգային քարոզչական կառույցների միջոցով:

<sup>11</sup> Jørgen Bæk Simensen, Denmark, Islam and Muslims: Socioeconomic Dynamics and the Art of Becoming, Islam in Denmark. The Challenge of Diversity. Published by Lexington Book, edited by Jørgen S. Nielsen, UK, 2012, [http://books.google.am/books?id=TVohQNHA48cC&printsec=frontcover&hl=ru&source=gbs\\_ge\\_summary\\_r&cad=0#v=onepage&q&f=false](http://books.google.am/books?id=TVohQNHA48cC&printsec=frontcover&hl=ru&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false)

<sup>12</sup> Lene Kuhle, Mosques and Organisations, Islam in Denmark. The Challenge of Diversity. Published by Lexington Book, edited by Jørgen S. Nielsen, UK, 2012.

ցիոնալացման պահանջների հետ: Մասնավորապես մուսուլմանական ներգաղթի և իսլամի ընդլայնման դեմ ակտիվ է գործել աջ ուղղվածությամբ Դանիայի ժողովրդական կուսակցությունը<sup>13</sup>: Իր հերթին, դանիական կառավարությանը մտահոգում են անվտանգության խնդիրները, մասնավորապես իսլամական շրջանակներից եկող մարտահրավերները<sup>14</sup>, մանավանդ որ Դանիայի մուսուլմանական համայնքներում առկա են նաև ծայրահեղական տրամադրություններ<sup>15</sup>:

Հատկանշական է, որ ծաղրանկարների հրապարակումից մի քանի շաբաթ անց՝ հոկտեմբերի 17-ին, դրանք արտատպեց եգիպտական Ալ-Ֆաշր (եգիպտական արտասանությամբ՝ Ալ-Ֆագր) թերթը: Դրանից առաջ՝ հոկտեմբերի 13-ին, դրանք արտատպել էր ինդոնեզական Rakyat Merdeka կայքէջը, որի խմբագրին զարմացրել էր այն հանգամանքը, որ վիրավորական համարվող ծաղրանկարների արտատպումը գրեթե արձագանք չէր գտել<sup>16</sup>: Իրականում մի քանի ամիս պահանջվեց, որպեսզի ծաղրանկարները միջազգային արձագանք ստանան:

Ծաղրանկարային բանավեճի նախաձեռնողները շուտով ստեղծեցին հանձնախումբ, մշակեցին 11 կետից կազմված գործողությունների ծրագիր, որը նպատակ ուներ միջազգային հնչեղություն տալ խնդրին՝ կազմակերպել տարաբնույթ բողոքի միջոցառումներ թե՛ Դանիայում, թե՛ դրա սահմաններից դուրս, թերթի դեմ դատ բացել, կապ հաստատել քաղաքական, հասարակական ու կրոնական գործիչների ու դիվանագետների հետ: Նախաձեռնության հանգուցային դեմքերից էին լիբանանյան ծագումով շեյխ Ռայիդ Հուլեյիելը՝ հանձնախմբի ղեկավարը, և պաղեստինյան ծագումով իմամ Ահմադ Աբու Լաբանը: Լիբանանյան ծագումով մեկ այլ գործիչ՝ Ահմադ Աքարին՝ Աարիուս քաղաքից,

<sup>13</sup> Anti-Immigration Parties in Denmark and Norway: The Progress Parties and the Danish People's Parties, [http://vbn.aau.dk/files/93212/35031999\\_4.pdf](http://vbn.aau.dk/files/93212/35031999_4.pdf)

<sup>14</sup> Canwal Sheikh M., M.Crone, Muslims as a Danish Security Issue, Islam in Denmark. The Challenge of Diversity. Published by Lexington Book, edited by Jørgen S. Nielsen, UK, 2012.

<sup>15</sup> Sŕu Michael Taarnby Jensen, Jihad in Denmark, An Overview and Analysis of Jihadi Activity in Denmark 1990-2006, <http://subweb.diis.dk/graphics/Publications/WP2006/WP%202006-35%20til%20web.pdf>

<sup>16</sup> Shadid A., Sullivan K., Anatomy of the Cartoon Protest Movement, Washington Post Foreign Service, Thursday, February 16, 2006, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2006/02/15/AR2006021502865.html>

դարձավ խմբի խոսնակը: Շուտով կազմվեց Աքարի-Լարան՝ 43 էջանոց թղթապանակը<sup>17</sup>:

2005 թ. հոկտեմբերի 12-ին հանձնախումբը բողոքագրեր ուղարկեց Դանիայում հավատարմագրված մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցիչներին՝ խնդրելով աջակցել, որպեսզի թերթի խմբագրությունը ներողություն խնդրի: Դրանից առաջ հանձնախումբը հավաքել էր 17 000 ստորագրություն խնդիրը բողոքարկելու համար<sup>18</sup>:

Հոկտեմբերի 14-ին Կոպենհագենում տեղի ունեցավ բողոքի խաղաղ ցույց մոտ 3500 ցուցարարների մասնակցությամբ, ովքեր թերթից պահանջում էին ներողություն խնդրել<sup>19</sup>: Հետաքրքիր է այն փաստը, որ դանիացի մուսուլմաններից շատերը, ովքեր չափավոր հայացքներ ունեին, չմասնակցեցին բողոքի գործողություններին: Հետագայում՝ 2006 թ. հունվարի 16-ին, Յիլանդսփոսթենն իր առաջին էջում հրապարակեց դանիացի քառասունինը մուսուլմանների հայտարարությունը, որում նրանք հավանության չէին արժանացրել իմամների գործունեությունը և դեմ էին մուսուլմանական համայնքի անունից միանշանակ հանդես գալու նրանց մտադրությանը<sup>20</sup>:

2005 թ. հոկտեմբերի 20-ին մուսուլմանական մեծամասնություն ունեցող երկրների տասնմեկ դեսպաններ Թուրքիայից, Սաուդյան Արաբիայից, Պակիստանից, Իրանից, Ինդոնեզիայից, Ալժիրից, Բոսնիայից և Հերցեգովինայից, Լիբիայից, Մարոկոյից, Եգիպտոսից, նաև՝ Պաղեստինյան Ինքնավարությունից Եգիպտոսի դեսպան Մունա Օմար Աթիայի գլխավորությամբ հանդիպում խնդրեցին Դանիայի վարչապետ Անդերս Ֆոգ Ռասմուսենից՝ քննարկելու հրապարակման վերաբերյալ կառավարության դիրքորոշումը<sup>21</sup>:

<sup>17</sup> Հատկանշական է, որ թղթապանակում ընդգրկվեցին նաև այլ ծաղրանկարներ, որոնք Յիլանդսփոսթենի հետ կապ չունեին:

<sup>18</sup> Anatomy of the Cartoon Protest Movement, [http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2006/02/15/AR2006021502865\\_2.html](http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2006/02/15/AR2006021502865_2.html)

<sup>19</sup> Arsenault A., Sh.Powers, The Danish Cartoon Crisis: The Import and Impact of Public Diplomacy, USC Center of Public Diplomacy, [http://www.academia.edu/426018/The\\_Danish\\_Cartoon\\_Crisis\\_The\\_Import\\_and\\_Impact\\_of\\_Public\\_Diplomacy](http://www.academia.edu/426018/The_Danish_Cartoon_Crisis_The_Import_and_Impact_of_Public_Diplomacy)

<sup>20</sup> Ammitzbøll P., Vidino L., After the Danish Cartoon Controversy, Middle East Quarterly Winter 2007, pp. 3-11, [http://www.meforum.org/1437/after-the-danish-cartoon-controversy#\\_ftn24](http://www.meforum.org/1437/after-the-danish-cartoon-controversy#_ftn24)

<sup>21</sup> Ammitzbøll P., Vidino L., After the Danish Cartoon Controversy, Middle East Quarterly Winter 2007, pp. 3-11, [http://www.meforum.org/1437/after-the-danish-cartoon-controversy#\\_ftn24](http://www.meforum.org/1437/after-the-danish-cartoon-controversy#_ftn24)

Բասմուսենը, սակայն, հրաժարվեց հանդիպել դեսպաններին՝ գերադասելով նրանց գրավոր պատասխանել<sup>22</sup>: 2005 թ. հոկտեմբերի 21-ին թվագրված նամակում մասնավորապես նշված էր, որ դանիական հասարակությունը հիմնված է խոսքի ազատության, կրոնական հանդուրժողականության և հավասար կրոնական չափորոշիչների վրա, սակայն դանիական կառավարությունը որևէ լծակ չունի ազդելու մամուլի վրա: Նամակում նաև խոսվում էր այն մասին, որ դանիական օրենսդրությունն, այնուամենայնիվ, արգելում է խտրականությունն ու կրոնապաղծությունը: Դանիայի վարչապետն ակնարկում էր, որ տուժող կողմը կարող էր բողոքարկել հարցը դատարանում<sup>23</sup>:

Առաջադրված խնդիրների լուծման հարցում չարձանագրելով շոշափելի արդյունքներ՝ Աբու Լաբանը հայտարարեց, որ իրենք ծրագրել են ընդլայնել գործողությունները, որպեսզի դանիական կառավարությունը գիտակցի, որ վիրավորել են ոչ միայն Դանիայի, այլև ամբողջ աշխարհի մուսուլմաններին<sup>24</sup>: Օրակարգ մտավ երկու պատվիրակությունների՝ Մերձավոր Արևելք ուղևորությունների ծրագիրը՝ ծաղրանկարների թեման արաբական-իսլամական շրջանակներում բարձրացնելու նպատակով: Շրջագայությունը սկսվեց 2005 թ. դեկտեմբերի սկզբին: Պատվիրակները եղան Եգիպտոսում, Լիբանանում, Թուրքիայում, Սիրիայում, Ծոցի արաբական երկրներում, հանդիպեցին քաղաքական և կրոնական գործիչների ու մամուլի ներկայացուցիչների հետ: Արդյունքում, Աքարի-Լաբան թղթապանակը 2005 թ. դեկտեմբերի սկզբներին ներկայացվեց իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական համագործակցության կազմակերպությանը (ԻՀԿ): Դեկտեմբերի 7-ին ԻՀԿ Մեքքայի արտահերթ գագաթնաժողովն ընդունեց ծաղրանկարների հրապարակման փաստը դատապարտող բանաձև և բողոքարկեց խնդիրը ՄԱԿում: Ի դեպ, գագաթնաժողովի օրակարգի հիմնական խնդիրներից մեկը կապված էր սուննի-շիա արդի հակամարտության հետ, սակայն ծաղրանկարների թեման այն երկրորդական դարձրեց՝ ստիպելով իսլամական պետությունների ղեկավարներին մտահոգվել «իսլամի և մուսուլմանների նկատմամբ աճող ատելության

<sup>22</sup> Official Response to Ambassadors from A. F. Rasmussen, <http://web.archive.org/web/20060219083657/http://gfx-master.tv2.dk/images/Nyhederne/Pdf/side3.pdf>

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Harrison F., Danish Muslims in Cartoon protest, <http://news.bbc.co.uk/2/hi/europe/7247817.stm>  
<http://news.bbc.co.uk/2/hi/europe/7247817.stm>

փաստի առիթով»<sup>25</sup>: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնախումբը դանիական կառավարությունից պահանջեց կատարվածի վերաբերյալ բացատրություն տալ<sup>26</sup>: 2005 թ. դեկտեմբերի 29-ին Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը դատապարտեց ծաղրանկարների հրապարակման փաստը և դանիական կառավարությանը<sup>27</sup>: ԱՊԼ-ն նշված թեմային անդրադարձավ նաև 2006 թ. փետրվարին Թունիսում, որի ընթացքում ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսան քննադատեց ընդհանրապես եվրոպական մամուլի չափորոշիչները<sup>28</sup>:

Իսլամական համագործակցության կազմակերպության դիրքորոշումը նպաստեց հարցի միջազգայնացմանը<sup>29</sup>: Ոչ պակաս նպաստավոր դարձավ արաբական-իսլամական աշխարհի ամենահեղինակավոր հեռուստատեսային քարոզիչներից մեկը՝ արմատական հայացքներ ունեցող իսլամիստ շեյխ Յուսուֆ Ալ-Կարդավին, ով, ելույթ ունենալով քաթարական Ալ-Ջազիրա հեռուստաալիքով, մուսուլմաններին կոչ արեց ընդվզելու կատարվածի դեմ<sup>30</sup>: Քարոզարշավն, ի դեպ, անցավ ոչ առանց սադրանքների: Աբու Լաբանը հայտարարեց, որ Դանիայում պատրաստվում են այրելու Դուրանի օրինակները<sup>31</sup>:

Փաստացիորեն, ծաղրանկարների հրապարակումից արդեն ամիսներ անց ողջ աշխարհում սկիզբ առավ բողոքի անախադեպ ալիք, որն ուղեկցվեց բռնություններով<sup>32</sup>: Ճգնաժամն իր գագաթնակետին հասավ 2006 թ. հունվար-փետրվար ամիսներին՝ լայնորեն լուսաբանվելով միջազգային զանգվածային լրատվամիջոցներով: Մի քանի շաբաթ ծաղրանկարների թեման ՋԼՄ-նե-

<sup>25</sup> How a meeting of leaders in Mecca set off the cartoon wars around the world, <http://www.independent.co.uk/news/world/middle-east/how-a-meeting-of-leaders-in-mecca-set-off-the-cartoon-wars-around-the-world-466109.html>

<sup>26</sup> Rynning S., Muhammad Cartoons in Denmark: From Freedom of Speech to Senmark's Biggest International Crisis Since 1945, UNISCI Discussion Papers, May, 2006, No.11, <http://revistas.ucm.es/index.php/UNIS/article/viewFile/UNIS0606230011A/28094>

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Arab Ministers Condemn Cartoons, [http://news.bbc.co.uk/2/hi/middle\\_east/4668068.stm](http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/4668068.stm)

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Rennie D., Day of Anger Threatened over Cartoons of Prophet, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/1509559/Day-of-anger-threatened-over-cartoons-of-Prophet.html>

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Muslim Cartoon Row Timeline, [http://news.bbc.co.uk/2/hi/middle\\_east/4688602.stm](http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/4688602.stm)



րում ամենաառաջնայինն էր և նույնիսկ հետ էր մղել իրաքյան թեման: Արդյունքում, բռնությունների ծավալման հետևանքով մահացավ մոտ 200 մարդ, տեղի ունեցան հարձակումներ դանիական դեսպանատների վրա (մասնավորապես՝ Սիրիայում, Լիբանանում, Ինդոնեզիայում, Պակիստանում փետրվարի 4-5-ը), որոշ եվրոպական դիվանագիտական առաքելությունների, նաև՝ եկեղեցիների և քրիստոնյաների վրա: Ցուցարարները Ղազախից մինչև Ջակարտա այրում էին Դանիայի դրոշն ու Ռասմուսենի խրտվիլակը: Մուսուլմանական առանձին երկրներ (մասնավորապես՝ Սիրիան, Լիբանանը, Սաուդյան Արաբիան, Իրանը) իրենց երկրներում փակեցին Դանիայի դեսպանությունները: Դանիային հասցված ամենաշոշափելի վնասը դանիական ապրանքների դեմ 2006 թ. հունվարի 26-ից Սաուդյան Արաբիայից սկսված արաբական բոյկոտն էր, որից դանիական բիզնեսը մոտ մեկ մլրդ դոլարի վնաս կրեց<sup>33</sup>: Հատկանշական է, որ ծաղրանկարային ճգնաժամն ակտիվացրեց իսլամական կրոնա-քաղաքական ծայրահեղական կազմակերպություններին, այդ թվում՝ Մուսուլման եղբայրներին, որոնց պատկերացումները Արևմուտք-իսլամ անտագոնիզմի մասին նոր թափ ստացան<sup>34</sup>:

Բողոքի գործողություններին զուգահեռ արաբական մուսուլմանական առանձին շրջանակներում քննադատություններ հնչեցին ծաղրանկարների շուրջ առաջացած բռնությունների դեմ: Օրինակ՝ հորդանանյան թերթերից մեկն արտատպեց 12 ծաղրանկարներից երեքը՝ նշելով, որ հրապարակվածն ընդամենը ծաղրանկարներ էին, որոնք վիրավորական էին, սակայն դրանց հրապարակումն արժանի չէր բարձրացված աղմուկին: Հարկ է նշել նաև, որ ծաղրանկարների դեմ տեղի ունեցած ցույցերին մասնակցել են թվով քիչ մարդիկ թե՛ մուսուլմանական երկրներում, թե՛ Եվրոպայում<sup>35</sup>:

Դանիայի վարչապետ Անդերս Ֆոգ Ռասմուսենը Դանիայի շուրջ առաջացած միջազգային ճգնաժամը համարեց ամենածանրը Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր: 2006 թ.

<sup>33</sup> Rynning S., Muhammad Cartoons in Denmark: From Freedom of Speech to Senmark's Biggest International Crisis Since 1945, UNISCI Discussion Papers, May, 2006, No.11, <http://revistas.ucm.es/index.php/UNIS/article/viewFile/UNIS0606230011A/28094>

<sup>34</sup> Guitta O., The Cartoon Jihad, The Muslim Brotherhood's project for dominating the West, The Weekly Standard magazine, FEB 20, 2006, VOL. 11, NO. 22, <http://www.weeklystandard.com/Content/Public/Articles/000/000/006/704xewyj.asp>

<sup>35</sup> Հովհաննիսյան Դ., Գլոբալ հակամարտությունը և ծաղրանկարային պատերազմը, Հանրապետական, թիվ 2/33/, 2006:

հունվարի 31-ին Յիլանդս-փոսթենը պաշտոնապես ներողություն խնդրեց մուսուլմաններից, ինչը ողջունեց վարչապետ Ռասմուսենը՝ նշելով, որ ինքն այնուամենայնիվ չէր կարող դա անել թերթի անունից: Նա նաև ավելացրեց, որ հարգանք ունի կրոնների նկատմամբ և երբեք չէր ներկայացնի Մուհամեդին կամ Հիուսին վիրավորական կերպով<sup>36</sup>:

Նշենք, որ 2005-ի դեկտեմբերի 27-ին դանիական ոստիկանությունը սկսել էր Յիլանդս-փոսթենի դեմ հետաքննությունը, սակայն հանցակազմի բացակայության պատճառով 2006 թ. հունվարի 6-ին գործը կարճվել էր: Իսկ ահա հունվարի 1-ին Ռասմուսենը ամանորյա շնորհավորանքի ժամանակ ափսոսանք էր հայտնել, որ ծաղրանկարները վիրավորել են մարդկանց<sup>37</sup>:

Շուտով, ի համերաշխություն դանիացի լրագրողների, բազմաթիվ թերթեր, բայց և հատկապես Եվրոպայում, արտատպեցին ծաղրանկարները: Քաղաքական ու հասարակական մի շարք գործիչներ հանդես եկան ի պաշտպանություն Դանիայի: Բացի այդ՝ ԱՄՆ-ում սկսվեց «Գնիր դանիականը» միջազգային շարժում, որը կոչ էր անում գնելու դանիական ապրանքներ: Սակայն նույն Արևմուտքում և արևմտյան մամուլում ևս հնչեցին ծաղրանկարները քննադատող տեսակետներ: Ըստ այդմ՝ խոսքի ազատությունը նույնպես պետք է սահմանափակվումներ ունենար<sup>38</sup> կամ արդյո՞ք խոսքի ազատությունը ենթադրում էր վիրավորական նկարներ, որ ոչ մի կապ չունեն այն իրողության հետ, ինչը ցանկություն կար ներկայացնելու<sup>39</sup>:

2006 թ. փետրվարի 19-ին Յիլանդս-փոսթենի մշակութային խմբագիր Ֆլեմինգ Ռոսը «Վաշինգտոն փոսթում» հանդես եկավ «Ինչու՞ տպեցի այդ ծաղրանկարները» հրապարակմամբ<sup>40</sup>, ներկայացնելով իր որոշման պատճառները, որոնցից էին՝ կոտորել իսլամական տաբուները և իսլամի շուրջ ազատ բանավեճ ձևա-

<sup>36</sup> Watt N., Danish paper sorry for Muhammad cartoons, <http://www.theguardian.com/media/2006/jan/31/religion.saudi-arabia>

<sup>37</sup> Чапнин С., Ислам в Европе: манипуляции общественным мнением, [http://chapnin.ru/articles/islam\\_in\\_europe\\_53/](http://chapnin.ru/articles/islam_in_europe_53/)

<sup>38</sup> Esposito J., Muslims and the West: A Culture War?, <http://www.commongroundnews.org/article.php?id=1484&lan=en&sp=0>

<sup>39</sup> Levine M., Cartoongate and the Long Road to Civilization, <http://www.beliefnet.com/Faiths/Islam/2006/02/Cartoongate-And-The-Long-Road-To-Civilization.aspx?p=2>

<sup>40</sup> Why I Published Those Cartoons, By Flemming Rose, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2006/02/17/AR2006021702499.html>, Sunday, February 19, 2006.

վորել<sup>41</sup>: Խմբագիրը մուսուլմաններին տեղեկացնում էր, որ թերթը Դանիայի թագավորական ընտանիքի անդամների կերպարներով և ծաղրանկարներ է տպագրել: «Մենք ինտեգրում ենք ձեզ ծաղրանկարների դանիական ավանդույթի մեջ, որովհետև դուք մեր հասարակության մի մասն եք, ոչ թե օտարներ... Ծաղրանկարներն ավելի ներգրավում, քան հեռացնում են մուսուլմաններին», — նշված էր հրապարակման մեջ<sup>42</sup>:

Ի դեպ, թե՛ Յիլանդս-փոսթենի հունվարի 31-ի պաշտոնական ներողությունը և թե՛ նշված հրապարակումը դանիացի մուսուլմաններին արված այլևս ուշացած փոխգիշում էր, նրանց հետ հաշտության եզրեր փնտրելու ցանկություն, որը միևնույն ժամանակ նպատակ ուներ մեղմել Դանիայի շուրջ առաջացած ճգնաժամը:

Հարկ է նշել, որ մինչև ծաղրանկարները Եվրոպայում առանձին հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչներ մեղադրվել են իսլամական սրբությունները վիրավորելու մեջ: Հատկապես ողբերգական էր հոլանդացի ռեժիսոր Թեո վան Գոգի սպանությունը, որը 2004 թ. նոյեմբերի 2-ին իրականացրեց հոլանդացի մի մուսուլման ծայրահեղական: Ոչ պակաս աղմկահարույց էր քաշմիրական ծագում ունեցող բրիտանացի մուսուլման Սալման Ռուշդիի «Սատանայական բանաստեղծությունների» պատմությունը, որի հրապարակումից հետո 1988 թ. Այաթոլլա Խոմեյնին գրողին մեղադրեց անհավատության մեջ և դատապարտեց մահվան: Ծաղրանկարների հեղինակներին դատապարտեցին թալիբները և 100 կգ ոսկի խոստացան մահապատիժն իրականացնողին<sup>43</sup>:

<sup>41</sup> Խմբագրին մտահոգել էր այն հանգամանքը, որ Դանիայում շատ արվեստագետներ խոսափում էին իրենց անունը հրապարակել իսլամին առնչվող իրենց իսկ հեղինակած գործերում՝ մտավախություն ունենալով սեփական անվտանգության համար: Արդյունքում, թերթի խմբագիրն առաջարկել է 25 ծաղրանկարչի պատկերել Մուհամեդ մարգարեին ըստ իրենց պատկերացման: Արձագանքել են 12-ը, որոնց աշխատանքներն էլ տեղ են գտել թերթում: Խմբագրի կարծիքով՝ ծաղրանկարիչներն իսլամին մոտեցել էին այն նույն տեսանկյունից, ինչ՝ քրիստոնեությանը, բուդդիզմին, հինդուիզմին և այլ կրոններին: Նա նաև նշում էր, որ թյուրլմբռնումների տեղիք է տվել մանավանդ այն ծաղրանկարը, որում Մուհամեդը պատկերված էր գլխին ռումբ: Մինչդեռ իրականում դրանում քննադատության թիրախ էր ոչ թե իսլամի մարգարեն՝ որպես ահաբեկիչ, այլ՝ իսլամի անվան տակ ահաբեկչություն կատարողները:

<sup>42</sup> Why I Published Those Cartoons, By Flemming Rose, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2006/02/17/AR2006021702499.html>, Sunday, February 19, 2006.

<sup>43</sup> Taliban promises 100kg of gold for cartoonist's head, <http://english.pravda.ru/world/asia/09-02-2006/75659-taliban-0/>

Առանձին տեսակետների համաձայն՝ «ծաղրանկարային պատերազմի» իրական շարժառիթները կարող էին կապված լինել քաղաքական շահարկումների հետ: Ըստ այդմ՝ ծաղրանկարների խնդիրն նման հնչեղություն կարող էին տալ միջազգային առանձին դերակատարներ, օրինակ՝ Իրանը և ԱՄՆ-ը<sup>44</sup>: Ծաղրանկարային ճգնաժամի օրերին ՄԱԿ-ի օրակարգում էր Իրանի միջուկային թղթապանակը: Հակաիրանական քայլերին հակազդելու համար Իրանը կողմ էր ԱՄՆ-ի դեմ ուղղված բոլոր հնարավոր միջազգային ծրագրերին: Սակայն նրա համար հատուկ նշանակություն ունեին իսլամական գլոբալիզացիոն ծրագրերը<sup>45</sup>:

Իր հերթին, ԱՄՆ-ը ձգտում էր պահովելու Իրանի միջուկային ծրագրերի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների, ինչպես նաև ԵՄ-ի աջակցությունը: Իրականում, եվրոպական երկրների անմիջական շահերից էր բխում Իրանի հետ բնականոն հարաբերությունների պահպանումը՝ վերջինիս նավթային և գազային պաշարներից օգտվելու համար, ինչը թույլ կտար պլանավորել եվրոպական տնտեսության զարգացման դինամիկան՝ չափից ավել կախվածության մեջ չընկնելով Ռուսաստանից<sup>46</sup>:

«Ծաղրանկարային պատերազմի» պատճառների և հետևանքների վերլուծության տեսանկյունից հետաքրքրական և արժեքավոր թեզեր է պարունակում դանիացի գիտնական, կրոնների պատմության մասնագետ Թիմ Յենսենի բավական ծավալուն հետազոտությունը<sup>47</sup>: Դրանում հեղինակը նշում է, որ խնդիրն այդքան մեծ հնչեղություն չէր ստանա, եթե Արևմուտքի և իսլամական աշխարհի միջև խորքային խնդիրներ չլիներին<sup>48</sup>:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև այն փաստը, որ աշխարհիկ հիմքեր ու ավանդույթներ ունեցող Ադրբեջանում ևս 2006-ի սկզբին կազմակերպվեցին բողոքի աննախադեպ ակցիաներ՝ ընդդեմ ծաղրանկարների: Փետրվարի 7-ին

<sup>44</sup> Հովհաննիսյան Դ., Գլոբալ հակամարտությունը և ծաղրանկարային պատերազմը, Հանրապետական, թիվ 2/33/, 2006:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>47</sup> Jensen T., The Cartoon Crisis Revisited: A Danish Perspective, Real Instituto Elcano, ARI 65/2006 - 2.6.2006, [http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano\\_eng/Content?WCM\\_GLOBAL\\_CONTEXT=/elcano/elcano\\_in/zonas\\_in/europe/ari+65-2006](http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano_eng/Content?WCM_GLOBAL_CONTEXT=/elcano/elcano_in/zonas_in/europe/ari+65-2006)

<sup>48</sup> Jensen T., The Cartoon Crisis Revisited: A Danish Perspective, Real Instituto Elcano, ARI 65/2006 - 2.6.2006, [http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano\\_eng/Content?WCM\\_GLOBAL\\_CONTEXT=/elcano/elcano\\_in/zonas\\_in/europe/ari+65-2006](http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano_eng/Content?WCM_GLOBAL_CONTEXT=/elcano/elcano_in/zonas_in/europe/ari+65-2006)

Բաքվում, իսկ հետո շիայական արմատական տրամադրություններով հայտնի Նարդարանում տեղի ունեցած ցույցերի ժամանակ այրվեցին ԱՄՆ-ի, Իսրայելի, Դանիայի, նաև՝ Հայաստանի և Շվեյցարիայի դրոշները: Փետրվարի 11-ին «Յենի խաբար» քիչ հայտնի ադրբեջանական թերթը հրապարակեց Հիսուս Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի ծաղրանկարները<sup>49</sup>:

Միանշանակապես է, որ «ծաղրանկարային պատերազմը» բարդ հանգրվանի առաջ կանգնեցրեց դանիական կառավարությանը՝ բացասական ազդեցություն ունենալով Դանիայի միջազգային վարկանիշի վրա: Իրողությունները հետադարձ հայացքով արժևորելու տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում մի շատ ուշագրավ փաստ՝ կապված բանավեճի մասնակիցներից մեկի՝ Ահմադ Աքարիի հետ: «Ծաղրանկարային պատերազմից» յոթ տարի անց՝ 2013 թ. օգոստոսին, Ահմադ Աքարին հանդես եկավ անսպասելի հայտարարությամբ: Նա, ով ժամանակին խստորեն քննադատել էր թերթի հրապակումը և նպաստել խնդրի միջազգայնացմանը, հայտարարեց, որ Յիլանդս-փոթենն իրավունք ուներ նման հրապարակում անելու<sup>50</sup>: Աքարին խոստովանեց, որ ուղևորությունները նույնպես սխալ էին: Նա նույնիսկ անձամբ ներողություն խնդրեց Քուրտ Վեսթերգարդից<sup>51</sup>, ով գծագրել էր ամենասուր ծաղրանկարներից մեկը, որում Մուհամեդ մարգարեի թուրքանի վրա պատկերված էր ռումբ:

«Ծաղրանկարային պատերազմը» ի ցույց դրեց այն հակասությունները, որ գոյություն ունեին իսլամական և արևմտյան արժեքային համակարգերի միջև: Այն ընդգծեց իսլամական կրոնական և մշակութային իրողությունների նկատմամբ մուսուլմանների ցավագին ընկալումները՝ ընդհանուր առմամբ հակադրելով խոսքի ազատությունն ու կրոնական սրբությունները: Ըստ էության, առնչվելով Դանիայի մուսուլմաններին, այն իրականում մեկ անգամ ևս ի հայտ բերեց մուսուլման ներգաղթյալների և ընդհանրապես Եվրոպայում իսլամի ներկայության դեմ հարածուն բողոքի տրամադրությունները, որոշ իմաստով նաև այն խտրականությունը, որ գոյություն ուներ Հին մայրցամաքում:

Ծաղրանկարների դեմ մուսուլմանական երկրներում տեղ

<sup>49</sup> Юнусов А., Исламская палитра Азербайджана, Институт мира и демократии, Б., 2012, с. 11.

<sup>50</sup> Ahmad Akkari, Danish Muslim: I was wrong to damn Muhammad cartoons, <http://www.theguardian.com/world/2013/aug/09/ahmad-akkari-islam-danish-cartoons-muhammad>

<sup>51</sup> Վեսթերգարդը մշտապես դանիական ոստիկանության հսկողության ներքո է: Տե՛ս նաև [http://chapnin.ru/articles/islam\\_in\\_europe\\_53/](http://chapnin.ru/articles/islam_in_europe_53/)

գտած արձագանքներն ու բողոքի ակցիաները խոսում են թե՛ տվյալ պետությունների, թե՛ միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի ակտիվացման, ինչպես նաև մուսուլմանների շրջանում կրոնական արմատական տրամադրությունների հարաճուն ընդլայնման մասին:

Հարկ է նշել, որ մուսուլմանական երկրներում ծաղրանկարների շուրջ առաջ եկած լարվածությանը նախորդել էին 2001 թ. սեպտեմբերի 11-ը, 2003 թ. Իրաք ամերիկյան ներխուժումը, իրաքյան գործընթացներում ԵՄ երկրների մասնակցությունը, Աֆղանստանում ԱՄՆ-ի ռազմական գործողությունները, իսլամի դեմ ԱՄՆ-ի և ընդհանրապես Արևմուտքի քարոզչությունը և այլն:

Սխալ է «ծաղրանկարային պատերազմը» համարել իսլամական և ոչ իսլամական աշխարհի միջև անշրջելի անջրպետի կամ քաղաքակրթությունների բախման արդյունք: Ավելի հավանական է, որ ծաղրանկարների խնդրին քաղաքական հնչեղություն տրվեց: Թե՛ Դանիայում, թե՛ դրա սահմաններից դուրս հնչած առանձին տեսակետների համաձայն՝ ծաղրանկարների վեճը չէր ընդլայնվի, եթե վարչապետ Ռասմուսենն ավելի ճկուն գտնվեր, հանդիպեր դեսպաններին, փորձեր գտնել խնդրի փոխզիջումային տարբերակներ:

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՈՒԺԵՐԻ  
ԽՆԴԻՐՆ ԻՐԱՔՅԱՆ ՔՈՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՈՒՋՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

1991 թ. սկսած Թուրքիան սկսեց որոշակի փոքրաթիվ ռազմական խմբավորումներ պահել Հյուսիսային Իրաքի տարածքում: Երբ թուրքական զորքերը մուտք էին գործում Իրաքյան Քուրդիստան՝ PKK-ի դեմ գործողություններ իրագործելու նպատակով, գործողությունների ավարտից հետո նրանցից ոչ բոլորն էին հեռանում, այլ մի մասը մնում կամ տեղակայվում էր Իրաքյան Քուրդիստանում՝ իրադրությունն ու PKK-ի գործողությունները վերահսկելու նպատակով<sup>1</sup>: Թուրքական կողմը կարողացավ նաև օգտվել 1994-1998 թթ. Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (հետայսու՝ ԲԴԿ) և Քուրդիստանի հայրենասիրական միության (հետայսու՝ ԲՀՄ) միջև Իրաքյան Քուրդիստանում տեղ գտած քաղաքացիական պատերազմից՝ իր ռազմական ներկայությունն ու միջամտությունն այս շրջանում ընդլայնելու տեսանկյունից: Արդյունքում Իրաքյան Քուրդիստանի՝ Թուրքիայի հետ սահմանամերձ գոտում Թուրքիան ապահովեց ու աստիճանաբար մեծացրեց իր ռազմական ու հետախուզական կայանների ներկայությունը:

1992-2013 թթ. միջև ընկած ժամանակահատվածի տարբեր փուլերում Հյուսիսային Իրաքի տարածքում տեղակայված թուրքական զորախմբի թվաքանակի մասին ճշգրիտ տվյալները բացակայում են: Սակայն, թուրքական աղբյուրների համաձայն, Հյուսիսային Իրաքում (մասնավորապես Իրաքյան Քուրդիստանի

<sup>1</sup> Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq, -Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

տարածքում) Թուրքիան երեք տեսակի զինված խմբավորումներ է պահում: Առաջինը ներառում է Թուրքիայի ու Իրաքի միջև առկա սահմանային գոտու իրաքյան հատվածում՝ ռազմակայաններում ու հենակետերում տեղակայված ու հաստատված թուրքական զորախումբը, որը 2000-ից 2500 մարտիկներ ու համապատասխան սպառազինություն ունի (այդ թվում՝ տանկեր ու հրետանային միջոցներ): Երկրորդը ներկայանում է ի դեմս Էրբիլում, Ջախոյում, Դոհուկում, Սուլեյմանիեում և Քոյսանջակում տեղակայված թուրքական կապի ու փոխազդեցության գրասենյակների (liason offices): Եվ վերջապես երրորդը, այսպես կոչված, թուրքական «խաղաղապահ ուժերն» են կամ «խաղաղության մոնիթորինգի ուժերը», որոնք Իրաքյան Քուրդիստանում էին տեղակայվել 1996 թ. միջբրդական քաղաքացիական պատերազմի բարձրակետին (1996թ.) հաջորդած Անկարայի գործընթացի արդյունքում<sup>2</sup>: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում վերջինիս կարգավիճակը, քանզի այն որոշակիորեն պարզաբանում է առաջին երկուսին և ընդհանրապես թուրքական ռազմական ու հետախուզական ներկայությանն առնչվող մի շարք հարցերի հնարավոր պատասխանները:

**Խաղաղության մոնիթորինգի ուժերը:** Դեռ 1996 թ. հոկտեմբերի 31-ին, միջբրդական՝ Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության և Քուրդիստանի հայրենասիրական միության միջև տեղ գտած քաղաքացիական պատերազմի պայմաններում, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջնորդությամբ Անկարայում ստորագրվեց մի պայմանագիր, որով դադարեցվում էին ռազմական գործողությունները կողմերի միջև: Պայմանագրի կետերի կենսագործման վերահսկողությունն իրագործելու էին, այսպես կոչված, «Խաղաղության մոնիթորինգի ուժերը» («ռազմական դիտորդների զորախումբը»), որի մեջ պետք է ներգրավվեին քրդական այլ կուսակցությունների, ինչպես նաև թուրքոմանների ու ասորիների ներկայացուցիչները: Այդ նպատակով Անկարայի համաձայնագրի կնքումից հետո Իրաքյան Քուրդիստանում նախատեսվում էր հատուկ ռազմական ուժերի ստեղծումը, որում ընդգրկված պետք է լինեին ՔԴԿ-ին և ԲՀՄ-ին չհարող քրդերի, ինչպես

<sup>2</sup> Funda Keskin, Turkey's Trans-Border Operations in Northern Iraq: Before and after the Invasion of Iraq,- Research Journal of International Studies - Issue 8 (November, 2008), p. 62. Տնւ նաև Serhat Erkmén, 2003. "4 Temmuz'dan Sonra Türkiye'nin Kuzey Irak'taki Askeri Varlığı," – Stratejik Analiz 2003, № 4, pp. 48-52.



նաև թուրքոմանների<sup>3</sup> ու ասորիների գորաջոկատներ: Սպառազինությունը նրանց տրամադրելու էին միջնորդները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Թուրքիան: Այդ ջոկատները պետք է տարանջատեին ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի զինյալներին<sup>4</sup>:

Ժամանակի ընթացքում այդ ուժերը մի իրական խնդիր դարձան Իրաքյան Քուրդիստանի համար՝ սպառնալով վերջինիս անվտանգությանն ու կայունությանը: Հետևաբար հիշյալ խնդիրը լուրջ հետազոտման կարիք է զգում:

1996 թ. հոկտեմբերի 31-ի Անկարայի համաձայնագրի 5-րդ և 7-ից 11-րդ հոդվածներն անմիջականորեն վերաբերում էին Խաղաղության մոնիթորինգի ուժերի ստեղծմանն ու գործունեությանը: Պայմանագրում մասնավորապես նշվում էր.

Չեզոք Խաղաղության մոնիթորինգի ուժեր (ԽՄՈՒ, անգլերեն՝ Peace Monitoring Force /PMF-Վ.Պ.) կկազմավորվեն և կտեղակայվեն հրադադարի պահպանման պարտավորությունները դիտարկելու նպատակով: Մոնիթորինգի այս ուժերի ստորաբաժանումները կգործեն հրադադարի գծի երկայնքով՝ նախապես համաձայնեցված դիրքերից: Նրանք կկազմակերպվեն լրկալ հրամանատարական օղակներով և կզեկուցեն էրբիլում հիմնված տարածաշրջանային շտաբին: Հյուսիսային Իրաքի թուրքոմաններից և այլ՝ չեզոք քրդական և ասորական կուսակցությունների ներկայացուցիչներից կազմավորված և բոլոր մասնակիցների կողմից համաձայնեցված, համապատասխան չափի կոնտինգենտ (զինուժ) կստեղծվի՝ որքան հնարավոր է արագ իր գործառույթներին անցնելու համար (Հոդված 7):

Կողմերը լիովին կհամագործակցեն Խաղաղության մոնիթորինգի ուժերի հետ, կնպաստեն նրա աշխատանքներին և կնշանակեն համապատասխան անձնակազմ՝ Խաղաղության մոնիթորինգի ուժերի ստորաբաժանումների, հրամանատարության և շտաբի հետ կապ պաշտպանելու, հրադադարը դիտարկելու, նրանց ջանքերին աջակցություն ցուցաբերելու և վեճերը լուծելու կամ հետաքննություններ անցկացնելու նպատակով (Հոդված 8):

Սույնով հիմնվում է Խաղաղության մոնիթորինգային վերստուգիչ խումբը (ԽՄՎԽ)՝ Խաղաղության մոնիթորինգի ուժերի աշ-

<sup>3</sup> Բրիտանական և ընդհանրապես արևմտյան մասնագիտական գրականության մեջ այդպես էր բնորոշվում Իրաքյան թուրքմենների, թուրքերի և Իրաքում բնակվող այլ թյուրքախոսների ընդհանրությունը: Իրաքյան թուրքոմանների գերակշիռ մեծամասնությունը թուրքմեններն են:

<sup>4</sup> Шахбазян Г.С., Межкурдский конфликт в Южном Курдистане, Южный Курдистан сегодня (Уроки кризиса), Москва, 1997, с. 46-47.

խատանքային գործունեությունը վերահսկելու և կողմերի բողոքները ստանալու և ուսումնասիրելու նպատակով: Խաղաղության մոնիթորինգային վերստուգիչ խումբը իր հետազոտությունների շրջանակներում կհավաքի նաև այլ մատչելի տեղեկատվություն, ինչպես, օրինակ, Իրաքում ՄԱԿ-ի պահապան կոնտինգենտի<sup>5</sup> ստացվելիք մատչելի տեղեկատվությունը (Հոդված 9):

Խաղաղության մոնիթորինգային վերստուգիչ խումբը (ԽՄՎԽ) տեղաբաշխվում էր Անկարայում և կազմված էր Թուրքիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ՔԴԿ-ի, ՔՀՄ-ի և Խաղաղության մոնիթորինգի ուժերի ներկայացուցիչներից: Խումբը կհանդիպի 1996 թ. նոյեմբերի առաջին շաբաթվա ընթացքում՝ որոշելու ներքին աշխատանքային ընթացակարգը (Հոդված 10):

Բողոք կարող է ներկայացվել Խաղաղության մոնիթորինգային վերստուգիչ խմբի ցանկացած անդամի կողմից (Հոդված 11):

ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի ուժերի 1996 թ. հոկտեմբերի 23-ի կեսգիշերվա դրությամբ զբաղեցրած դիրքերը, տեղում հնարավորինս շուտ կսահմանազատվեն (կդեմարկացվեն) Խաղաղության մոնիթորինգի ուժերի ներկայացուցիչների ու երկու կողմերի կապի անձնակազմի կողմից և կսահմանվեն որպես հրադադարի գիծ: Հրադադարի այս գծի մասին կզեկուցվի Խաղաղության մոնիթորինգային վերստուգիչ խմբին (Հոդված 5)<sup>6</sup>:

Ապահովվեց նաև պայմանագրի իրագործման ու ԽՄՈՒ-ի ստեղծման ֆինանսական կողմը: ԱՄՆ-ը 3 միլիոն դոլար կանխիկ գումար և լրացուցիչ՝ Պենտագոնի հաշվին, 4 միլիոն դոլարի փոխադրամիջոցներ, սպառազինություն ու սարքավորումներ տրամադրեց Խաղաղության մոնիթորինգի ուժերի ֆինանսավորման համար<sup>7</sup>: Սակայն ամեն ինչ չէ, որ գնաց հստակ սահմանված նպատակներին համապատասխան: Նախ՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի լուռ համաձայնությամբ ԽՄՈՒ-ն ստեղծվելու էր Թուրքիայի հրամանատարության ներքո: Չեզոք քրդական կուսակցությունների ներկայացուցիչները հիմնականում չներգրավվեցին

<sup>5</sup> Իրաքում ՄԱԿ-ի պահապան կոնտինգենտը (The United Nations Guards Contingent in Iraq /UNGCI) գործել է 1991 թ. մայիսից մինչև 2003 թ. նոյեմբեր ամիսը:

<sup>6</sup> Text: 10/31: Statement on Enforcing Iraqi Kurd Cease-fire (Faction Stand-down Brokered at Ankara Meeting), October 31, 1996, <http://usembassy-israel.org.il/publish/press/state/archive/november/sd31101.htm>

<sup>7</sup> Saadet Oruc, Peace monitoring in Northern Iraq to Begin Immediately, Turkish Daily News (February 28, 1997), <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=peace-monitoring-in-northern-iraq-to-begin-immediately-1997-02-28>

ԽՄՈՒ-ի կազմում: Նախնական որոշման համաձայն՝ ավելի քան 200 զինյալներ (ասորիներ և թուրքոմաններ) պետք է ներառվեին այդ ուժի մեջ<sup>8</sup>: Սակայն հետագայում ԽՄՈՒ կազմում որոշվեց ներառել 400 զինյալների: Ընդ որում՝ Թուրքիային հանգստացնելու և վերջինիս աջակցությունը ստանալու նպատակով ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան համաձայնեցին, որ Խաղաղության մոնիթորինգի ուժերի հիշյալ 400 անդամներից 300-ը լինեն թուրքոմաններ<sup>9</sup>, որոնց միանան նաև թուրք սպաները, փորձագետներն ու օժանդակ անձնակազմը: Այսպիսով՝ ինչպես ՔԴԿ խոսնակն էր նշում, թեև գերազանցապես ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան էին (Թուրքիայի մասնակցությամբ և վերջինիս հետ համատեղ) հիմնել Խաղաղության մոնիթորինգի ուժերը, դրանք հետագայում վերածվեցին զուտ թուրքական ուժերի<sup>10</sup>:

Հյուսիսային Իրաքում Թուրքիայի հրամանատարության ներքո գործող Խաղաղության մոնիթորինգի ուժերը (ԽՄՈՒ/PMF) պաշտոնապես ստեղծվեցին 1997 թ. ապրիլի 15-ին<sup>11</sup> և կազմված էին հիմնականում իրաքյան թուրքմեններից, իսկ ասորիների մասնակցությունը հիմնականում ձևական բնույթ էր կրում: Ժամանակի ընթացքում այդ ուժերում ներգրավված զինյալների թիվը որոշ տվյալներով հասցվեց 800-ի<sup>12</sup>:

1996 թ. հոկտեմբերի 31-ի Անկարայի համաձայնագրի կնքումից հետո պատերազմական գործողություններում որոշակի դադար արձանագրվեց: Սակայն ՔԴԿ-ՔՀՄ ընդհարումները (PKK-ի ու Թուրքիայի գործադրած «ջանքերի» արդյունքում) վերսկսվեցին 1997 թ. գարնանը: Իր հերթին Թուրքիան 1997 թ. մայիսին

<sup>8</sup> Saadet Oruc, Peace monitoring in Northern Iraq to Begin Immediately, Turkish Daily News (February 28, 1997), <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=peace-monitoring-in-northern-iraq-to-begin-immediately-1997-02-28>

<sup>9</sup> Quil Lawrence, նշվ. աշխ., էջ 88:

<sup>10</sup> Daren Butler, “Kurds ask Turkish peacekeepers to leave north Iraq”, Arbil, 14 May, 2003, <http://www.freedom-for-ocalan.com/bulletin/2003/eMay14.htm>

<sup>11</sup> Տես Iraqis Kurds (1932-present), University of Central Arkansas, <http://uca.edu/politicalscience/dadm-project/middle-eastnorth-africapersian-gulf-region/iraqkurds-1932-present/>

<sup>12</sup> Տես Iraqis Kurds (1932-present), University of Central Arkansas, <http://uca.edu/politicalscience/dadm-project/middle-eastnorth-africapersian-gulf-region/iraqkurds-1932-present/>:

Reuters լրատվական գործակալությունն ու թուրքական որոշ աղբյուրներ նշում են, որ Խաղաղության մոնիթորինգի ուժերի կազմում 1990-ականներին առավելագույնը եղել են 400 զինվորներ: Տես Turkey withdraws peacekeepers from n. Iraq,- Turkish Daily News, July 5, 2004, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=turkey-withdraws-peacekeepers-from-n.iraq-2004-07-05>

լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսեց Իրաքյան Քուրդիստանում: Այսպիսով՝ միջքրդական քաղաքացիական պատերազմում հրադադարը պահպանվեց ամիսներ շարունակ՝ նախքան ԽՄՈՒ-ի ստեղծումը, իսկ վերջինիս ստեղծումը տեղ գտավ լարվածության սրման պայմաններում: Արդեն 1998 թ. սեպտեմբերի 17-ին ՔԴԿ-ի ու ՔՀՄ-ի միջև ԱՄՆ-ի միջնորդությամբ, ստորագրվեց Վաշինգտոնի համաձայնագիրը: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ 1999 թ. սկսած՝ Խաղաղության մոնիթորինգի ուժերը լուրջ անելիքներ չունեին Իրաքյան Քուրդիստանում: Սակայն այդ ուժերը շարունակում էին պաշտոնապես գործել Թուրքիայի հրամանատարության ներքո:

Քիչ են Խաղաղության մոնիթորինգի ուժերի ունեցած դրական դերակատարման մասին պնդումները, մինչդեռ բացթողմաների ու նույնիսկ հանցանքների վերաբերյալ պնդումները բազմաթիվ են<sup>13</sup>: Ըստ էության, Խաղաղության մոնիթորինգի ուժերի ուշադրության կենտրոնում գերազանցապես իրաքյան թուրքոմանների՝ իբրև խաղաքարտի հզորացման և Հյուսիսային Իրաքում թուրքական ռազմական ներկայությունն ապահովելու հեռանկարն էր:

Թուրք փորձագետ Սոներ Չաղափթայի պնդմամբ 1997 թ. ապրիլից, այն է՝ իր գործարկումից սկսած, Խաղաղության մոնիթորինգի ուժերը ծառայել են որպես մի յուրահատուկ վերապատրաստման դպրոց իրաքյան թուրքմենների համար, և ավելի քան 2.000 իրաքյան թուրքմեններ են այդ ընթացքում մասնակցել այդ ուժերի գործունեությանը՝ ծառայությանը զուգահեռ ստանալով մասնագիտական գիտելիքներ և պրոֆեսիոնալ ռազմական ցուցումներ ու հրահանգավորում թուրքական բանակից<sup>14</sup>: Սա, բնական է, հետագայում պետք է խորացներ իրաքյան քրդերի ու թուրքոմանների միջև լարվածությունը, ինչը չէր բխում իրաքյան թուրքոմանների շահերից<sup>15</sup>:

<sup>13</sup> Secret: Northern Iraq: Masoud Barzani in Ankara: Despite Improvement in “Tone” of Relations W/Got, Turkish Military Presence in Iraq Unacceptable (January 10, 2003), <http://www.cablegatesearch.net/cable.php?id=03ANKARA278>

<sup>14</sup> Soner Cagaptay, Turkmens, the Soft Underbelly of the War in Northern Iraq, The Washington Institute for Near East Policy, Policy Watch #735, March 27, 2003, <http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkmens-the-soft-underbelly-of-the-war-in-northern-iraq>

<sup>15</sup> Թուրքոման որոշ գործիչներ (միանգամայն տարբեր հիմնավորումներով) դեմ էին Խաղաղության մոնիթորինգի ուժերին (ԽՄՈՒ-ին) իրաքյան թուրքոմանների այդքան ակտիվ մասնակցությանը: Քրդամետի համարում ունեցող թուրքոման գործիչները մտահոգված էին իրաքյան քրդերի ու թուրքոմանների միջև հարաբերությունների սրման հեռանկարով: Նույնիսկ նախկինում

Խաղաղության մոնիթորինգի ուժերի մնացյալ մութ էջերը հետագայում բացեցին իրենք՝ իրաքյան քրդերը: 2003 թ. հակաիրաքյան պատերազմից առաջ օրակարգում էր դրված կոալիցիոն ուժերի կազմում թուրքական զորքերի Հյուսիսային Իրաք ներխուժելու հարցը: Իրաքյան Քուրդիստանի ղեկավարությունն ու մասնավորապես ՔԴԿ-ն կտրականապես դեմ էին նման հեռանկարին: Այս համատեքստում Իրաքյան Քուրդիստանում թուրքական զորքերի ներկայության խնդիրն ընդհանրապես և Խաղաղության մոնիթորինգի ուժերի խաղացած դերը մասնավորապես հայտնվեցին առանձնահատուկ ուշադրության կենտրոնում: 2003 թ. հունվարի 7-9-ը Անկարա այցելած Մասուդ Բարզանին մատնանշում էր Թուրքիայի հրամանատարության ներքո և ՔԴԿ-ի ու ՔՀՄ-ի միջև հրադադարը վերահսկելու նպատակով ստեղծված Խաղաղության մոնիթորինգի ուժերի գործոնը, որպես օրինակ, թե ինչու իրաքյան քրդերը չեն ցանկանում լրացուցիչ թուրքական զորքերի մուտքն Իրաքյան Քուրդիստան: Մասուդ Բարզանին նշում էր. «Ես ձեզ հստակ կասեմ, թե ինչ է անում ԽՄՌԻ-ն. ամեն ինչ՝ բացի մեր (ՔԴԿ-ի – Վ.Պ.) և ՔՀՄ-ի միջև միջնորդությունը: Նրանք փորձում են մարզել և զինել Իրաքի թուրքոմանների ճակատին, նրանք սեփականում են պատմական արտե-

թուրքամետ դիրքորոշում ունեցող գործիչներն էին արտահայտում իրենց անհամաձայնությունը: Մասնավորապես Իրաքի ազգային թուրքմենական կուսակցության նախկին ղեկավար և իրաքյան թուրքոմանների (թուրքմենների) առաջատար գործիչ Մուլաթթեք Արսլանը քննադատեց Խաղաղության մոնիթորինգի ուժերի ստեղծման ծրագիրը, որում նախատեսվում էր ներառել նաև թուրքոմաններին (թուրքմեններին): Մուլաթթեք Արսլանը գտնում էր, որ Իրաքի թուրքմենները չպետք է ներգրավվեն Խաղաղության մոնիթորինգի ուժերին՝ տալով հետևյալ հիմնավորումը. «Թուրքմենների խնդիրները չեն կարող լուծվել առանց Բաղդադի հետ խորհրդակցելու: Թուրքմենների մեծագույն մասն ապրում է Իրաքի ներսում (Սադդամ Հուսեյնի վերահսկողության տակ գտնվող տարածքներում-Վ.Պ.) և ոչ թե քրդերի կողմից վերահսկվող իրաքյան տարածքներում: Իրաքյան Սահմանադրությունը պետք է ճանաչի թուրքմեններին, ինչպես դա անում է քրդերի դեպքում: Սահմանադրության մեջ Իրաքը նշվում է միայն որպես արաբների և քրդերի (բայց ոչ թուրքմենների) կողմից բնակեցված հող: Մշտական լուծման կարելի է հասնել միայն Բաղդադի կառավարության հետ բանակցելու միջոցով: Թուրքմենները չեն կարող որևիցե դերակատարում ունենալ քրդերի միջև խաղաղության հաստատման գործում: Տարիների ընթացքում հաստատված իրողությունն է, որ քրդերը երբեք չեն հրաժարվի պատերազմելուց»: Միաժամանակ, մեկնաբանելով Թուրքիայի՝ թուրքմեններին ցուցաբերվող աջակցության խնդիրները, Մուլաթթեք Արսլանը նշում էր. «Ազգային շարժումը ոչ կարող է վաճառվել և ոչ էլ գնվել: Ինքը՝ ժողովուրդը, պետք է համոզված լինի»: SEn Saadet Oruc, Peace monitoring in Northern Iraq to Begin Immediately, Turkish Daily News (February 28, 1997), - <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=peace-monitoring-in-northern-iraq-to-begin-immediately-1997-02-28>

Ֆակտեր, ներգրավված են թմրանյութերի մաքսանենգության և նույնիսկ սպանության պատմություններում, և նրանք չեն հեռանում: Սա դեռ այն դեպքում, երբ նրանք ընդամենը մի քանի հարյուրն են: Եթե ԱՄՆ-ը ստորագրի մի փաստաթուղթ, որում ասվի, որ թուրքերը պետք է հեռանան իրենց առաջադրանքներն ամբողջությամբ կատարելուց անմիջապես հետո, մենք կարող ենք քննարկել Հյուսիսային Իրաքում (ռազմական գործողություններին-Վ.Պ.) Թուրքիայի մասնակցությունն աջակցելու հարցը»<sup>16</sup>:

Նախքան 2003 թ. իրաքյան պատերազմն ու 2008-2009 թթ. մինչ օրս Թուրքիա-Քուրդիստանի ռեգիոնալ կառավարություն (այսուհետ՝ ՔԴԿ) հարաբերություններում տեղ գտած անախադեպ ջերմացումը, թուրքական ռազմական ներկայությունն Իրաքյան Քուրդիստանի տարածքում լրջագույն խնդիր էր Մասուդ Բարզանու համար. «Թուրքիան արդեն իսկ զորքեր ունի Հյուսիսային Իրաքում: Դրանք տեսանելի են, և նրանց ներկայությունն ընդունելի է: Ավելին քան կան ընդունելի չէ: Եթե որոշում կայացվի Իրաքում թուրքական ռազմական ներգրավվածության վերաբերյալ, այն կարող է փոփոխել հանգամանքներն ու հավասարակշռությունը»,— նշում էր Մասուդ Բարզանին ու վերահաստատում. «Թուրքական ռազմական միջամտությունը մեզ համար գոյատևման խնդիր է: Դա կնշանակի, որ մենք ընկնում ենք Թուրքիայի տիրապետության տակ: Եթե մենք չկարողանանք կանգնեցնել դրա իրագործումը, մենք կլքենք երկիրը»<sup>17</sup>:

Իրաքի քրդերը 2003 թ. հակաիրաքյան պատերազմից սկսած ու այդ պատերազմից անմիջապես հետո ձգտում էին հասնել Իրաքյան Քուրդիստանից թուրքական զորքերի դուրսբերմանը՝ նշելով, որ այդ ուժերը կարող են լարվածության հանգեցնել ներիրաքյան զարգացումներում ու թուրք-քրդական ապագա հարաբերություններ-

<sup>16</sup> Secret: Northern Iraq: Masoud Barzani in Ankara: Despite Improvement in “Tone” of Relations W/Got, Turkish Military Presence in Iraq Unacceptable (January 10, 2003), <http://www.cablegatesearch.net/cable.php?id=03ANKARA278>

Բարզանին գտնում էր, որ իրենց առջև մի տագնապալի խնդիր է ծագել. «Թեև թուրքերը ցանկանում են Իրաքում լինել իրենց սեփական նպատակների համար, եթե ՔԴԿ-ն հանդես գա թուրքերի մասնակցության դեմ, նրանք կմեղադրեն իրենց կոալիցիայի դեմ հանդես գալու և պրո-Սադդամական լինելու մեջ, իսկ եթե ՔԴԿ-ն ընդունի թուրքական մասնակցությունը, թուրքերը կուլիսների հետևում կաշխատեն ընդդեմ ՔԴԿ-ի, ինչպես նրանք անում են ԽՍՈՒ-ի շրջանակներում»: Տես նույն տեղում:

<sup>17</sup> Secret: Northern Iraq: Masoud Barzani in Ankara: Despite Improvement in “tone” of Relations W/Got, Turkish Military Presence in Iraq Unacceptable (January 10, 2003), <http://www.cablegatesearch.net/cable.php?id=03ANKARA278>

րում<sup>18</sup>: Սակայն առաջին հերթին դրվում էր Խաղաղության մոնիթորինգի ուժերի գործունեությունը դադարեցնելու հարցը: Թուրքական մնացյալ ուժերի դուրսբերման կամ թուրքական հենակետերի ու ռազմակայանների փակման մասին առնվազն պաշտոնական մակարդակով որոշումներ չէին կայացվում, իսկ քննարկումները մնում էին կուլիսների հետևում: Դա ուներ որոշակի պատճառներ:

ա) ԽՄՈՒ-ն ավելի լուրջ իրավական հիմքեր ուներ՝ ի դեմս 1996 թ. Անկարայի համաձայնագրի, որտեղ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Թուրքիան գործում էին համատեղ:

բ) Քաղաքական տեսանկյունից ավելի տրամաբանական ու հիմնավորված էր միջքրդական քաղաքացիական պատերազմի ավարտից շուրջ հինգ-վեց տարի անց պահանջել իր առաքելությունը ավարտած Խաղաղության մոնիթորինգի ուժերի լուծարումը, քան պահանջել PKK-ի գործունեությունը վերահսկելու նպատակով ստեղծված թուրքական ռազմակայանների ու հետախուզական բյուրոների փակումը, երբ PKK-ի բազաները Հյուսիսային Իրաքի տարածքում շարունակում էին գործել, և վերջինիս սպառնալիքը չեզոքացված չէր:

գ) ԽՄՈՒ-ն, ըստ էության, վերածվել էր Թուրքիայի հրամանատարությամբ գործող թուրքումանական զորախմբի՝ իրաքյան քրդերի համար ներիրաքյան սպառնալիքի: Իսկ հետսադղամյան Իրաքում Քիրքուկի և մյուս վիճելի տարածքների առաջին պլան մղվելու պայմաններում թուրք-թուրքմենական զորախմբի առկայությունը քրդերի համար անհամեմատ ավելի մեծ վտանգ էր ներկայացնում, քան թուրքական ռազմակայանների ու հետախուզական բյուրոների ներկայությունը, քանզի վերջիններիս առաջնահերթ թիրախը PKK-ն էր:

դ) Խաղաղության մոնիթորինգի ուժերի լուծարման խնդիրը քրդերի կողմից դիտվում էր իբրև առաջին քայլ, որին, ամենայն հավանականությամբ, պետք է հետևեր նաև Իրաքյան Քուրդիստանում թուրքական բոլոր ռազմակայաններն ու հենակետերը փակելու և ընդհանրապես թուրքական ռազմական ներկայությունը բացառելու ուղղակի կամ միջնորդավորված պահանջը, որի ուղղությամբ լուրջ փորձ արվեց առնվազն 2008 թ.: Սակայն հետագայում, Թուրքիա-ՔՌԿ հարաբերությունների աննախադեպ սերտացումը ստիպեց իրաքյան քրդերին ձեռնպահ մնալ ռազմակայանների, հենակետերի ու ռազմական ներկայության խնդրի արծարծումից:

<sup>18</sup> Turkey Withdraws Peacekeepers from N. Iraq, Turkish Daily News, July 5, 2004, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=turkey-withdraws-peacekeepers-from-n.iraq-2004-07-05>

Ի վերջո 2003 թ. մայիսի 13-ին Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանն ընդունեց մի բանաձև, որով կոչ էր արվում լուծարելու Հյուսիսային Իրաքում Թուրքիայի հրամանատարության ներքո գործող Խաղաղության մոնիթորինգի ուժերը<sup>19</sup>: Սակայն ինքնին հասկանալի էր, որ Իրաքյան Քուրդիստանի իշխանություններն անկարող են ինքնուրույն հասնել հիշյալ բանաձևի իրագործմանը, առավել ևս, որ ուժային ճնշման տարբերակն ի սկզբանե բացառվում էր<sup>20</sup>: Սակայն այս հարցում Իրաքյան Քուրդիստանը հզորագույն դաշնակից ուներ ի դեմս ԱՄՆ-ի:

Որոշակի աղբյուրներից ամերիկյան կողմին հայտնի դարձավ, որ թուրքական գլխավոր շտաբի որոշ պաշտոնյաներ 2003 թ. կեսերին խնդրել էին ՔԴԿ-ին ճնշում չգործադրել Խաղաղության մոնիթորինգի ուժերը ցրելու հարցում, խոստանալով, որ Թուրքիան միակողմանի կցրի ու կլուծարի այդ ուժերը մինչև 2003 թ. վերջը<sup>21</sup>: ԱՄՆ-ի գլխավոր շտաբի պետի տեղակալ (միացյալ շտաբի պետերի հրամանատարի տեղակալ՝ Vice Chairman of the Joint Chiefs of Staff-VCJCS) գեներալ Փիթր Փեյսի (այդ պաշտոնը վարել է 2001 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2005 թ. օգոստոսի 12-ը) 2003 թ. դեկտեմբերի սկզբներին Անկարա կատարած այցի ընթացքում թուրքական գլխավոր շտաբի պաշտոնյաները հայտարարել էին, որ ԽՄՈՒ-ն հաջողություններ ու ձեռքբերումներ ունեցած նախաձեռնություն էր, «և առաջարկեցին այն ներառել նոր Իրաքի անվտանգության կառույցներում՝ հավանաբար նոր զինվորագրվածներին վերապատրաստելու նպատակով»<sup>22</sup>: ԱՄՆ-ը սկզբունքորեն դեմ չէր հիշյալ առաջարկին: Սակայն Թուրքիան

<sup>19</sup> Sñu Iraqi Kurds (1932-present),-University of Central Arkanzas - <http://uca.edu/politicalscience/dadm-project/middle-eastnorth-africapersian-gulf-region/iraqkurds-1932-present/>

<sup>20</sup> Մինչ Էրբիլի զորանոցների թուրք զինվորները հրաժարվում էին մեկնաբանել Քուրդիստանի խորհրդարանի ընդունած բանաձևն ու խորհուրդ տալիս դիմել պաշտոնական Անկարային, իսկ թուրքական գլխավոր շտաբի պաշտոնյաներն իրենց հերթին նշում էին, որ թուրք խաղաղապահներին դուրս բերելու որևիցե պահանջ իրենք չեն ստացել, ՔԴԿ խոսնակն այն հարցին, թե ինչ քայլեր կձեռնարկեն քրդական իշխանությունները, եթե Թուրքիան մերժի հեռանալու պահանջը, պատասխանեց. «Մի բան հաստատ է, որ ոչ մի ուժ չի կիրառվի»: Daren Butler, “Kurds ask Turkish peacekeepers to leave north Iraq”,- Arbil / 14 May, 2003,- <http://www.freedom-for-ocalan.com/bulletin/2003/eMay14.htm>

<sup>21</sup> Secret: Northern Iraq: Calling in Turks' Promise to End PMF (6 February 2004),- <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA676>, Sñu նաև <http://wikileaks.org/cable/2004/02/04ANKARA676.html>

<sup>22</sup> Secret: Northern Iraq: Calling in Turks' Promise to End PMF (6 February 2004),- <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA676>, Sñu նաև <http://wikileaks.org/cable/2004/02/04ANKARA676.html>



անվերջ հետաձգում էր Խաղաղության մոնիթորինգի ուժերի լուծարման վերաբերյալ որոշման կայացումը:

2004 թ. փետրվարի 6-ին Անկարայում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան (2003–2005 թթ.) Էրիկ Սթիվեն Էդելմանը գերազանցապես Թուրքիայի վերահսկողության ներքո գործող Խաղաղության մոնիթորինգի ուժերի վերաբերյալ տալիս էր հետևյալ եզրակացությունը.

Խաղաղության մոնիթորինգի ուժերը (ԽՄՈՒ կամ PMF), որի միակ նպատակն էր իրագործել 1997 թ. Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության և Քուրդիստանի հայրենասիրական միության միջև հաստատված հրադադարի մոնիթորինգը, այժմ ոչնչի նկատմամբ էլ մոնիթորինգ չեն իրագործում, բայց շարունակում են կայանել Հյուսիսային Իրաքում որպես օտար պետության հրամանատարության ներքո գտնվող զինված Իրաքի թուրքմենների ու ասորիների ռազմական ուժ, որ դուրս է CJTF-7-ի (Combined Joint Task Force 7) հրամանատարության շղթայից և Իրաքի անվտանգության կառույցներից:

ՔԴԿ վարչապետ Նեչիրվան Բարզանու հունվարյան հայտարարությունը և թուրքական մամուլի ու պաշտոնական շրջանակների արձագանքը ցույց են տալիս, որ Թուրքիայի հրամանատարության ներքո գործող Խաղաղության մոնիթորինգի ուժերը (ԽՄՈՒ կամ PMF) Հյուսիսային Իրաքում շարունակվում են մնալ մի գրգռիչ իրողություն, որն ավելի երկար ապրեց, քան իր օգտակարությունն էր<sup>23</sup>:

Էդելմանն առաջարկում էր. «Պետական դեպարտամենտը՝ երկկողմ, սակայն բարձրաստիճան որևիցե մակարդակով, իր մոտեցումների մասին տեղյակ պահի թուրքերին, պարզ դարձնելով, որ ամերիկյան կառավարությունը, կոալիցիայի ժամանակավոր իշխանությունները (The Coalition Provisional Authority-Վ.Պ.), CJTF-7-ը (Combined Joint Task Force 7) և Իրաքի կառավարման խորհուրդը ցանկանում են լուծարել Խաղաղության մոնիթորինգի ուժերը, քանի որ վերջինիս առաքելությունն ավարտված է»: «Մենք պետք է այս մոտեցումը առաջ քաշենք հանգիստ ու հանդարտ կերպով և հնարավորություն տանք թուրքերին՝ պնդելու, թե իրենք են միակողմանիորեն լուծարում հիշյալ ուժերը՝ վերջինիս առաքելության հաջող ավարտից հետո: Մենք պետք է հավաստիացնենք թուրքերին, որ իրաքյան ոչ մի կողմ չի տեղեկացվել այս դեմարշի

<sup>23</sup> Secret: Northern Iraq: Calling in Turks' Promise to End PMF (6 February 2004),- <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA676>, տես նաև <http://wikileaks.org/cable/2004/02/04ANKARA676.html>

մասին, և որ այն չի իրականացվում իրաքյան որևիցե կուսակցության (կողմի) խնդրանքով, այլ այն պատճառով, որ Խաղաղության մոնիթորինգի ուժերի գործունեության ավարտը բխում է ԱՄՆ-ի և Իրաքի շահերից: Եթե մենք հստակ չլինենք այս կետում, թուրքերը կարող են ենթադրել, որ մենք սա պահանջում ենք իրաքյան քրդերի խնդրանքով, ինչի արդյունքում նախ ավելի քիչ հավանական է, որ նրանք ենթարկվեն պահանջին, բացի այդ՝ կնյարդայնացնենք, որ կրկին ամերիկյան կառավարությունը իրաքյան քրդերի կողմն է բռնում՝ ընդդեմ Թուրքիայի: ... Մենք կարող ենք առաջարկել, որ Խաղաղության մոնիթորինգի ուժերի առանձին անդամների խրախուսեն զինվորագրվելու նոր Իրաքի անվտանգության կառույցներին, և հավաստիացնենք թուրքերին, որ կռալիցիան հրապարակավ կողջունի ԽՄՈՒ անդամների դիմումներն այդ կառույցներում պաշտոնների տեղակալման համար»<sup>24</sup>,— նշում էր Անկարայում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան էրիկ Սթիվեն Էդելմանն ու եզրակացնում. «Քանի որ մենք արդեն 2004 թ. երկրորդ ամիսն ենք մտել, ժամանակն է մի կողմ դնենք այս պոտենցիալ գրգռող խնդիրն ու խնդրենք թուրքերին՝ իրենց խոստման համաձայն, ավարտին հասցնել ԽՄՈՒ-ն»<sup>25</sup>:

Թուրքական կողմը, սակայն, ձգձգում էր գործընթացը: Միայն 2004 թ. հուլիսի 2-ին Թուրքիայի ԱԳ նախարարությունը հայտարարեց, որ ԽՄՈՒ-ի առաքելությունն ավարտված է<sup>26</sup>: Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Նամըք Թանը նշել էր, որ ԽՄՈՒ-ն նպաստել է Հյուսիսային Իրաքում խաղաղության և կայունության պահպանմանը, և որ ՔԴԿ-ն ու ՔՀՄ-ն շնորհակալ են այդ ուժերին հաջողությունների ու ձեռքբերումների համար: Թանը նաև վստահություն էր հայտնում, որ այդ ուժերն այժմ կարող են աշխատանքի անցնել նոր Իրաքի անվտանգության համակարգում<sup>27</sup>:

Թուրքիայի ԱԳՆ-ի հիշյալ հայտարարությունը տեղ գտավ այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի գլխավորած կռալիցիոն ուժերն իշխա-

<sup>24</sup> Secret: Northern Iraq: Calling in Turks' Promise to End PMF (6 February 2004), - <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA676>, տես նաև <http://wikileaks.org/cable/2004/02/04ANKARA676.html>

<sup>25</sup> Secret: Northern Iraq: Calling in Turks' Promise to End PMF (6 February 2004), - <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA676>, տես նաև <http://wikileaks.org/cable/2004/02/04ANKARA676.html>

<sup>26</sup> Secret: Northern Iraq: Turks Announce End of PMF – Turkish PMF Troops Waiting to See How We Treat PMF Turkmen Before Returning To Turkey (6 Jul 2004), - <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA3758>

<sup>27</sup> Turkey withdraws peacekeepers from n. Iraq,- Turkish Daily News, July 5, 2004,- <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=turkey-withdraws-peacekeepers-from-n.iraq-2004-07-05>

նությունը փոխանցեցին Իրաքի ժամանակավոր կառավարությանը (Interim Government of Iraq): Իսկ թուրքական զանգվածային լրատվամիջոցները մի շարք շեշտադրումներ էին կատարում.

Հայտարարվում էր, որ Թուրքիան որոշել է Հյուսիսային Իրաքից դուրս բերել այնտեղ մնացած իր խաղաղապահներին:

Հաստատվում էր, որ ԽՄՈՒ-ի լուծարումից ու վերջինիս թուրքական անձնակազմի Թուրքիա վերադառնալուց հետո էլ Թուրքիան կշարունակի մի քանի հազարի հասնող թուրքական այլ զորքեր պահել Հյուսիսային Իրաքի տարածքում՝ ՔԿԿ-ի քուրդ զինյալների գործողությունները կանխելու նպատակով:

Նշվում էր նաև, որ Անկարան Հյուսիսային Իրաքը համարում է իր ազդեցության ոլորտի մի մասը, և մտավախություն ունի, որ հետպատերազմյան Իրաքի պայմաններում քրդերը կփորձեն հոշակել իրենց անկախությունն ու նոր շունչ տալ անջատողականությանը Թուրքիայի քրդերի շրջանում<sup>28</sup>:

Ամերիկյան կողմը փորձեց ճշտել թուրքական ՋԼՄ-ներում հայտնված տեղեկատվությունը, թե ԽՄՈՒ-ում ներգրավված թուրքերը վերադառնում են Թուրքիա: Սակայն Թուրքիայի ԱԳՆ Իրաքի վարչությունը չհաստատեց այդ տեղեկատվությունը, նշելով, որ թուրքական գլխավոր շտաբի տվյալներով ԽՄՈՒ-ի շուրջ 25 թուրք անդամներ դեռ Իրաքում են, և կվերադառնան որոշակի տեխնիկական խնդիրների կարգավորումից հետո միայն<sup>29</sup>: Թուրքիայում ԱՄՆ-ի արտակարգ ու լիազոր դեսպանը հանգեց հետևյալ եզրակացությանը. «Ակնհայտորեն, ԽՄՈՒ-ում ներգրավված թուրք տարրերը դիտարկում են իրականացնում՝ տեսնելու համար, թե արդյոք մենք քայլեր կձեռնարկենք Իրաքի անվտանգության կառույցներում ԽՄՈՒ-ի անդամներին աշխատանքի տեղավորելու նախկինում արված մեր առաջարկների շրջանակներում: Մեր արագ քայլերն այս ուղղությամբ կերաշխավորեն ԽՄՈՒ թուրք տարրերի դուրսբերումն ու կհանգեցնեն ԽՄՈՒ-ի վերջնական փակմանը»<sup>30</sup>:

Խաղաղության մոնիթորինգի ուժերը պաշտոնապես լուծար-

<sup>28</sup> Turkey withdraws peacekeepers from n. Iraq,- Turkish Daily News, July 5, 2004,- <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=turkey-withdraws-peacekeepers-from-n.iraq-2004-07-05>

<sup>29</sup> Secret: Northern Iraq: Turks Announce End of PMF – Turkish PMF Troops Waiting to See How We Treat PMF Turkmen Before Returning To Turkey (6 Jul 2004), - <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA3758>

<sup>30</sup> Secret: Northern Iraq: Turks Announce End of PMF – Turkish PMF Troops Waiting to See How We Treat PMF Turkmen Before Returning To Turkey (6 July 2004), - <http://www.cablegatesearch.net/cable.php?id=04ANKARA3758>

վեց 2004 թ. հոկտեմբերի 3-ին: Անձնակազմը, սակայն, լիովին չէր ցրվում, այլ վերջինիս անդամները պետք է ներգրավվեին Իրաքի անվտանգության կառույցներում<sup>31</sup>:

ԽՄՈՒ-ի լուծարումից ու վերջինիս թուրքական անձնակազմի Թուրքիա վերադառնալուց հետո էլ Թուրքիան շարունակում էր մի քանի հազարի հասնող թուրքական այլ ռազմական ուժեր պահել Հյուսիսային Իրաքի տարածքում՝ PKK-ի քուրդ զինյալների գործողությունները կանխելու և Իրաքյան Քուրդիստանի իշխանություններին վերահսկելու նպատակով: Մինչդեռ որոշակի փորձագիտական շրջանակներ թյուրիմացաբար կամ կանխամտածված կերպով Իրաքյան Քուրդիստանում տեղաբաշխված ու մինչ օրս գործող թուրքական ռազմական խմբավորումներն ու ռազմակայանները նույնացնում էին արդեն իսկ լուծարված Խաղաղության մոնիթորինգի ուժերի հետ: Հիշյալ «թյուրըմբռնումը» նպաստավոր էր թուրքական կողմի համար, քանզի Խաղաղության մոնիթորինգի ուժերի գործունեությունը Իրաքյան Քուրդիստանի տարածքում իրավական տեսանկյունից անհամեմատ ավելի հիմնավորված էր:

---

<sup>31</sup> ԽՄՈՒ-ի լուծարման և վերջինիս իրաքցի անդամների ապագային առնչվող պլանների մասին տես Video: Turkish Peace Monitoring Force Transitions to Iraqi Security Forces,- <http://www.dvidshub.net/video/86253/turkish-peace-monitoring-force-transitions-iraqi-security-forces#.URKnM6UT8n0>

## ПРОЕКТ «БОЛЬШОЙ БЛИЖНИЙ ВОСТОК»: АМЕРИКАНСКАЯ И РОССИЙСКАЯ ВЕРСИИ

*В статье проанализированы американская и российская версии понятия «Большой Ближний Восток». Исследованы основные принципы определения границ Большого Ближнего Востока.*

*The article is focused on the American and Russian versions of the notion of «Greater Middle East». The author analyses main principles for the determination of the borders The Greater Middle East.*

На сегодняшний день мировые историко-политические школы не имеют единого подхода к определению содержания понятия и границ Ближнего Востока. Историки и политологи определяют границы ближневосточного региона, ссылаясь исключительно на географический, культурный, экономический либо исторический принцип, что окончательно усложняет концептуальное определение данного понятия. Содержание термина «Ближний Восток» неоднократно менялось и уточнялось в связи с происходящими в геополитическом ландшафте мира изменениями, а в наши дни упомянутая дефиниция существенно расширилась, приобретя контур так званого «Большого Ближнего Востока». Поэтому сегодня актуальным заданием является корректный выбор для научного оборота понятия «Ближний Восток» либо «Большой Ближний Восток», а также комплексное исследование границ и содержания данного термина.

Важное значение для понимания проблематики темы имели научно-аналитические работы отечественных и зарубежных исследователей, в частности, Н. Арбатовой, Л. Васильевой, Р. Дэвисо-

на, К. Коппс, Е. Коппель, С. Лузянина и др. Также использовались энциклопедические словари, исторические и географические справочники, официальные интернет-ресурсы Госдепартамента США и администрации президента Российской Федерации.

Цель статьи – определить границы и содержание понятия «Большой Ближний Восток».

Термин Средний Восток, по словам английского ученого К. Коппса, впервые употреблен британским генералом Т. Гордоном в статье «Проблема Среднего Востока» в 1900 году. В своей работе генерал проанализировал проблемы обороны Индии, а также влияние Персии и Афганистана на безопасность региона, именно в этом контексте зону вокруг Индии, автор определил как Средний Восток<sup>1</sup>. Впоследствии, в 1902 году американец А. Мехен в статье «Персидский залив и международные отношения» исследуя «треугольник» отношений государств, – Англия, Россия и Германия, – конкурировавших в Азии за природные богатства, называет регион их соперничества Средним Востоком<sup>2</sup>.

Д. Хогарт, английский археолог, в своей работе «Ближний Восток» в состав данного региона включил Албанию, Македонию, юг Сербии, Болгарию, Грецию, Египет, все Османские владения в Азии, включительно с Аравийским полуостровом и двумя третями Ирана с полосой пустыни и гор между Каспийским морем и Индийским океаном<sup>3</sup>. Позицию археолога можно понять, ведь в таких широких географических пределах он искал общие культурные черты народов, поэтому и существенно расширил территориальные пределы для своих научных поисков.

Во время Первой мировой войны события на южном фронте (англо-французское противостояние с Турцией) широко освещались в прессе. Однако, наблюдалась определенная путаница относительно названия района ведения боевых действий. Данный регион называли Востоком, Ближним Востоком, а также Средним Востоком, в результате журналистская информация носила искаженный характер. В дальнейшем путаница с названиями региона

---

<sup>1</sup> Koppes C. Captain Mahan, General Gordon, and the Origins of the Term Middle East / C.Koppes // Middle Eastern Studies.- 1976.- №12.- p. 95–98

<sup>2</sup> Davison R.H. Where Is The Middle East? / R. Davison // Foreign Affairs.- 1960. - Vol.38, №4. [Электронный документ] Режим доступа: [http://www.state.gov/www/about\\_state/history/vol\\_xxi/a.html](http://www.state.gov/www/about_state/history/vol_xxi/a.html) (Дата обращения 21.03.2013)

<sup>3</sup> Там же.

продолжилась и на официальном уровне: в 1920 г. Королевское географическое общество Великой Британии решило, что Ближний Восток – это географическая территория Балкан, а Средний Восток представлен территорией от Босфора до восточных границ Индии<sup>4</sup>. В 1921 г. Госсекретарь по делам колоний Уинстон Черчилль учредил в Министерстве колоний Отдел Среднего Востока, в обязанности которого входило наблюдение, контроль и поиск решений в случае возникновения проблемных ситуаций в таких странах, как Палестина, Синай, Египет и государства Аравийского полуострова<sup>5</sup>.

Во время Второй мировой войны в Британии к составу региона Средний Восток относились такие страны, как Египет, Судан, Кения, Палестина, Иордания, Ирак, Аден, Мальта, Эфиопия, Сомали, Эритрея, Ливия, Греция, Крит и Иран<sup>6</sup>. В послевоенный период британские парламентарии обратились к правительству с предложением ввести два понятия Ближний Восток и Средний Восток, так как рамки термина Средний Восток постоянно расширяются, что в перспективе неуклонно приведет к потере точности определения. Тем не менее, правительство Объединенного Королевства воздержалось от каких-либо изменений, мотивируя это тем, что понятие Средний Восток употребляется для обозначения арабского мира и некоторых соседних стран, потому нет потребности нарушать принятую практику. В 1946 г. британский премьер-министр К. Эттли географически определил Средний Восток как «территорию Египта, Палестины, Киренаики, Сирии, Ливана, Трансиордании, Ирака, государств Аравийского полуострова, а также Персии и Турции». Уже в 1951 г. правительство Великой Британии существенно расширило границы данного региона, зачисляя к нему Египет, Турцию, Ирак, Иран, Сирию, Ливан,

<sup>4</sup> Davison R.H. Where Is The Middle East? / R. Davison // Foreign Affairs.- 1960.- Vol.38, №4. [Электронный документ], Режим доступа: <http://www.foreignaffairs.com/articles/71575/roderic-h-davison/where-is-the-middle-east> (Дата обращения 22.03.2013), с.668.

<sup>5</sup> Foreign Relations of the United States: 1964-1968, Volume XXI. Near East Region. - Department of State. - Washington, DC. [Электронный документ] Режим доступа: [http://www.state.gov/www/about\\_state/history/vol\\_xxi/a.html](http://www.state.gov/www/about_state/history/vol_xxi/a.html) (Дата обращения 21.03.2013)

<sup>6</sup> Davison R.H. Where Is The Middle East? / R. Davison // Foreign Affairs.- 1960.- Vol.38, №4. [Электронный документ], Режим доступа: <http://www.foreignaffairs.com/articles/71575/roderic-h-davison/where-is-the-middle-east> (Дата обращения 22.03.2013), с. 669.

Иорданию, Израиль, Саудовскую Аравию, Оман, Кувейт, Бахрейн, Катар, Маскат, Аденский протекторат и Йемен<sup>7</sup>.

В то время как в Британии длилась дискуссия относительно разделения стран региона на Ближний и Средний Восток, американские картографические издания изображали Ближний Восток от западной границы Египта до восточной границы Ирана, а Средний Восток – от западной границы Афганистана до восточной границы Бирмы<sup>8</sup>. Впервые для политического истеблишмента США проблема определения границ Среднего Востока возникла в конце 1950-х годов, когда ливанский кризис (1957-1958 гг.) и революция в Ираке (1958 г.) несли прямую угрозу национальной безопасности Америки. В связи с этими событиями была принята резолюция Конгресса США о предоставлении военной и экономической помощи странам Среднего Востока, в которой указано, что данный регион состоит из «Ливии на западе и Пакистана на востоке, Турции на севере и Аравийского полуострова на юге», а также к нему относятся Судан и Эфиопию. Однако, уже в августе в 1958 г. президент Д. Эйзенхауэр в своем выступлении на сессии Генеральной Ассамблеи ООН вспоминал лишь о Ближнем Востоке, ни разу не употребив понятие Средний Восток. В итоге, Госдепартамент США объяснил, что Ближний Восток и Средний Восток – это взаимозаменяемые понятия для обозначения региона, в состав которого входит Египет, Сирия, Израиль, Иордания, Ливан, Ирак, Саудовская Аравия и монархии Персидского залива<sup>9</sup>.

Научная дискуссия по вопросу определения границ региона Ближний Восток получила новый толчок к развитию с решением Великой Британии в конце 1960-х годов вывести войска из Персидского залива. Соответственно, в этот исторический период особое значение проблема определения границ Ближнего Востока имела для Соединенных Штатов, которые с углублением своего влияния в регионе стремились расширить границы своего влияния. Таким образом, государственные институты и научные школы США огромный регион от Марокко до Пакистана рассмат-

---

<sup>7</sup> Там же, с. 672.

<sup>8</sup> Davison R.H. Where Is The Middle East? / R. Davison // Foreign Affairs. - 1960. - Vol.38, №4. [Электронный документ], Режим доступа: <http://www.foreignaffairs.com/articles/71575/roderic-h-davison/where-is-the-middle-east> (Дата обращения 22.03.2013), с. 673

<sup>9</sup> Там же, с. 673.



ривали как единое целое не только в культурном, но и в политическом плане<sup>10</sup>.

Важное значение для определения границ региона имела речь президента Дж. Буш-младший «Свобода в Ираке» (ноябрь в 2003 г.), в которой глава Белого дома презентовал программу «Ближневосточная партнерская инициатива», направленную на демократическую перестройку так званого «Большого Ближнего Востока и Северной Африки»<sup>11</sup>. Согласно логике официального Вашингтона, в состав региона входят не только арабские государства, но и Афганистан, Иран, Пакистан.

Таким образом, мы уверены, что американское видение определения региона Ближний Восток не соответствует общепринятым географическим параметрам, а также противоречит историческим и культурным принципам, выступая сугубо политическим термином. В конечном итоге, дефиниция Ближний Восток, по американской версии, отражает прежде всего единую политику США касательно тех государств Западной Азии и Северной Африки, которые расположены в непосредственной близости один от другого и имеют жизненно важное значение для Белого дома. Обтекаемое и неточное толкование границ региона как в научных, так и политических кругах США прежде всего соответствует гегемонистическим целям Вашингтона – закрепить свое влияние и стать безальтернативной доминирующей силой в ближневосточном регионе. Поэтому, с точки зрения практики, выполнить поставленную в цель полном объеме вполне реально в пределах одного региона, в противном случае намного сложнее обосновывать американским гражданам и мировому сообществу необходимость присутствия в нескольких регионах мира.

В последние годы Российская Федерация, как единственное государство, способное в системе международных отношений открыто и эффективно конкурировать с Соединенными Штатами, акцентирует свое внимание на ближневосточном регионе. В данном контексте важно изучить содержание и границы понятия «Ближний Восток» по российской версии. Итак, в Концепции

<sup>10</sup> Near Eastern Affairs: Countries and Other Areas [Электронный документ] Режим доступа : <http://www.state.gov/p/nea/> (Дата обращения 26.03.2013)

<sup>11</sup> President G. W. Bush. Freedom in Iraq and Middle East. Remarks at the 20th Anniversary of the National Endowment for Democracy. U.S. Chamber of Commerce. Washington. D.C. 2003, November, 6 // [Электронный документ] Режим доступа: <http://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2003/11/20031106-2.html> (Дата обращения 23.03.2013)

внешней политики России (2000 г.) и Концепции национальной безопасности Российской Федерации (2000 г.) нет четкого распределения государств на регионы Ближнего и Среднего Востока. Согласно указанным документам в состав ближневосточных государств входят страны Персидского залива и Северной Африки. Хотя термин «Средний Восток» в обеих Концепциях не фигурирует, однако, отмечена важность развития отношений с Ираном и Афганистаном для обеспечения безопасности южных границ России, а также с Пакистаном с целью нераспространения ядерного оружия<sup>12</sup>.

Понятие «Большой Ближний Восток», предложенное американской научной элитой, быстро вошло в политическую лексику российского истеблишмента. В работе С. Лузянина «Восточная политика Владимира Путина» отмечено, что руководство Российской Федерации «под этим термином условно рассматривает совокупность таких регионов, как Ближний Восток (Иран, Афганистан, Турция), «классический» Ближний Восток (Сирия, Ирак, Израиль, Палестинская Автономия, Иордания, Ливан, Египет), ареал Персидского залива (ОАЭ, Саудовская Аравия, Катар, Бахрейн, Оман) и район Магриба (Алжир, Тунис, Марокко, Ливия, Мавритания)»<sup>13</sup>. Следует отметить, что глобальный стратегический интерес России к данному региону возрастает с точки зрения обеспечения экономической и политической безопасности. Как отмечают российские исследователи, ядро стран Большого Ближнего Востока составляют такие региональные «центры силы», как Саудовская Аравия, Иран, Турция, Израиль, Египет и Ирак.

Е. Коппель, украинская историк-международник оценивая российскую и американскую версии понятий «Ближний и Средний Восток» делает вывод, что сегодня существует столько вариантов определений понятия, сколько третьих сторон заинтересовано присутствовать в данном регионе. Так «Ближний Восток» Соединенных Штатов существенно отличается от «Ближнего Востока» России. Поэтому, с точки зрения исследовательницы, «Ближний Восток» стоит воспринимать не только как существующий политико-географический регион, но и как интеллектуальную

---

<sup>12</sup> Концепция внешней политики Российской Федерации. [Электронный документ] Режим доступа: <http://www.nationalsecurity.ru/library/00014/> (Дата обращения 22.03.2013)

<sup>13</sup> Лузянин С.Г. Восточная политика Владимира Путина. Возвращение России на «Большой Восток» (2004-2008 гг.) / С. Лузянин – М.: АСТ, 2007, с. 5.

конструкцию, которая в установленное время и при определенных обстоятельствах обозначает пространство на стыке Европы, Азии и Африки, где реализуется политика внерегиональных государств»<sup>14</sup>.

Сложность определения границ Ближнего Востока, как целостного геополитического региона, объясняется наличием на его территории субрегионов, которые одновременно выступают самостоятельными подсистемами международных отношений и составными частями ближневосточной региональной системы. Дополнительным аргументом в пользу данного утверждения является геополитический подход Н.К. Арбатовой, в котором отмечено, что отдельные субрегионы Ближнего Востока в результате родства политических проблем и близости границ, словно наслаиваются друг на друга и перекрещиваются, поэтому одно государство может входить в несколько субрегионов<sup>15</sup>.

По мнению ученого-востоковеда Л.С. Васильева, ядром ближневосточной системы выступают арабские государства, объединенные общей исторической судьбой, языком, религией, культурой, и многими другими этническими признаками. «Однако такое самопризнание не способствует их интеграции»<sup>16</sup>, – констатирует Л. С. Васильев. Согласно географическому подходу арабские страны разделяются на три зоны: африканскую, восточно-средиземноморскую и аравийскую. Однако, по мнению Л.С. Васильева, между этими районами нет четких границ, разница между африканской и средиземноморской зонами не значительна. Например, самая большая арабская страна Египет относится одновременно к двум зонам, Ирак – к восточно-средиземноморской зоне, хотя, учитывая «нефтяной фактор» и влияние этой страны на систему региональных отношений, его можно частично отнести и к аравийскому региону<sup>17</sup>.

Следует отметить, что окончание «холодной войны» существенно трансформировало мировую систему международных отношений, изменив геостратегические параметры Ближ-

<sup>14</sup> Коппель О.А. Близькосхідний регіон як чинник впливу на процеси міжнародної безпеки / О. Коппель [Электронный документ] Режим доступа: <http://helen-koppel.narod.ru/012.htm> (Дата обращения 19.03.2013)

<sup>15</sup> Арбатова Н. К. Средиземноморье: проблемы безопасности / Н. Арбатова. – М.: Наука, 1990.

<sup>16</sup> Васильев Л.С. История Востока: Учебник в 2-х томах. Т.2 / Л. Васильев. – М.: Высшая школа, 1994, с. 158.

<sup>17</sup> Там же.

него Востока. Традиционно ближневосточным регионом считали территорию на западе Азии и северо-восточную часть Африки, зачисляя к нему такие государства как Египет, Судан, Израиль, Иорданию, Сирию, Ливан, Турцию, Ирак, Саудовскую Аравию, Йемен, Кувейт, Катар, Объединенные Арабские Эмираты, Бахрейн, Кипр<sup>18</sup>.

Географический словарь, выданный в Вебстере в 1972 году, описывает Ближний Восток как огромный регион, в состав которого входят государства Юго-западной Азии и Северо-восточной Африки<sup>19</sup>. Авторы лондонской энциклопедии «Британика» считают, что Ближний Восток – территория вокруг южного и восточного берегов Средиземного моря, то есть от Марокко до Аравийского полуострова и Ирана<sup>20</sup>. Госдепартамент США к ближневосточным странам относит государства Северной Африки, Леванта, Персидского залива, кроме Турции, поскольку она является членом НАТО, а Министерство обороны США уверено, что таковыми являются те страны, которые подконтрольны Центральному командованию, – Египет, Судан, Эфиопия, Джибути, Кения, Сомали, Иордания, Йемен, Ирак, Иран, государства-члены Совета сотрудничества арабских государств Персидского залива, Афганистан и Пакистан<sup>21</sup>. Советский энциклопедический словарь определял Ближний Восток как «территорию на западе Азии и северо-восточной части Африки, на которой находятся Египет, Судан, Израиль, Иордания, Сирия, Ливан, Турция, Ирак, Саудовская Аравия, Йемен, Кувейт, Катар, ОАЭ, Бахрейн, Кипр»<sup>22</sup>.

С точки зрения автора, в американской и российской академической науке наблюдается широкое толкование границ ближневосточного региона в силу того, что кроме географических факторов важное значение занимает вся совокупность политико-экономических и стратегических проблем региона. Более того,

<sup>18</sup> Украинский советский энциклопедический словарь [Текст] : в 3-х томах. - К.: Главная редакция Украинской советской энциклопедии. Т. 1 : А-КАПСЮЛЬ: з додатком. – 1988, с.156.

<sup>19</sup> Webster's New Geographical Dictionary. –London: G and C Merriam Company, 1972. – 218 maps, p. 760.

<sup>20</sup> The New Encyclopedia Britannica, 15-th ed. In 32 volume set. –Vol.8. –L., 1992, p. 108.

<sup>21</sup> Wallerstein I. Geopolitics and geoculture: essays on the changing world system / I. Wallerstein. – Cambridge: Cambridge university press, 1992, p. 104.

<sup>22</sup> Украинский советский энциклопедический словарь, с. 146.

на современном этапе наблюдается конкурентная борьба между Соединенными Штатами и Российской Федерацией за контроль над природными ресурсами, влиянием на политическую элиту и управлением системой безопасности региона. В расширениях геополитических параметров региона одинаково заинтересованы как Соединенные Штаты, так и Россия, так как в контексте глобальных угроз безопасности (терроризм, экстремизм, дефицит энергоресурсов и пр.) без расширения толкования границ региона невозможно обеспечить его стабильное развитие. Поэтому сегодня для ключевых международных акторов крайне важно концептуально «расширить» и научно закрепить границы Ближнего Востока, при этом вводя в научно-политический оборот новую терминологию «Большой Ближний Восток».

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ

---

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## «ՆՈՐ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ» ՉԻՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ժամանակակից աշխարհակարգում ուժեղացող ռեգիոնալիզմը հայտնի չափով կապվում է նոր դարաշրջանում նկատվող համաշխարհային քաղաքականության և տնտեսության կենտրոնական-ծայրամասային կառուցվածքի թուլացման հետ: Ամրանում են զարգացման մակարդակով և նպատակներով միմյանց ավելի մոտ գտնվող ոչ արևմտյան երկրների միջև կապերը: Այս ամենը ոչ քիչ չափով պայմանավորվում է Չինաստանի՝ իբրև նոր աշխարհակարգում անկախ, ակտիվ և հզոր խաղացողի աճով, որը բազմակենտրոն աշխարհի ստեղծման հայեցակարգի ջատագովներից է:

20-րդ դարի առաջին տասնամյակի կեսից, երբ Չինաստանը դարձավ համաշխարհային տնտեսության կարևոր խաղացող, և խոսք գնաց անգամ համաշխարհային քաղաքականությունում վերջինիս հնարավոր առաջնորդության մասին, Պեկինի արտաքին քաղաքականությունում նոր առաջնահերթություններ ուրվագծվեցին<sup>1</sup>: Չինաստանի արտաքին քաղաքականությունում կարևորվեց «նոր ռեգիոնալիզմի» հայեցակարգը, որն

---

<sup>1</sup> Михеев В., Роль Китая в глобализующемся мире, Перспективы, 04.09.2008. [http://www.perspektivy.info/oykumena/vector/rol\\_kitaja\\_v\\_globalizujushhemsamire\\_2008-09-04.htm](http://www.perspektivy.info/oykumena/vector/rol_kitaja_v_globalizujushhemsamire_2008-09-04.htm)

ըստ Պեկինի ամենևին չի հակադրվում գլոբալիզմին: Խոսքը ոչ թե ազգային զարգացմամբ չսահմանափակվելու, այլ սեփական հզորացման նպատակով համաշխարհային թատերաբեմի մրցակցային պայքարում տարածաշրջանային համագործակցության առավելություններն օգտագործելու նպատակահարմարության մասին է: Ժամանակակից գլոբալացվող աշխարհակարգում չինական բաց «նոր ռեգիոնալիզմի» էությունը Չինաստանի հետագա խաղաղ ներդաշնակ զարգացման և կայուն աճի համար միջազգային և տարածաշրջանային բարենպաստ միջավայրի ապահովումն է: Չինական «նոր ռեգիոնալիզմի» գաղափարախոսությունը ենթադրում է «չինական տարածաշրջանային կարգերի»՝ այսպես կոչված «Pan-Sinica» տարածաշրջանային հանրույթի ստեղծում այնպիսի խաղաղ մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են տնտեսական, գաղափարական, քաղաքական և մշակութային ռազմավարության զարգացումը<sup>2</sup>:

Ներկայումս ՉԺՀ-ի «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականության նպատակներն ու միջոցները զգալիորեն ընդլայնվել են՝ ներառելով ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, դիվանագիտական, գաղափարական և սոցիալ-մշակութային մեխանիզմներ: ՉԺՀ-ի բարեփոխումների և բացության քաղաքականության շրջանակներում միջազգային և միջտարածաշրջանային կապերի ընդլայնմամբ և կատարելագործմամբ իրականացվող գլոբալ ռազմավարության գործիքներից մեկը բաց սահմանամերձ ռեգիոնալիզմն է: Վերջինս իրականացվում է սահմանամերձ համագործակցության ձևերի ընդլայնման և տարրորջման մեխանիզմների միջոցով: Սահմանամերձ տարածքների զարգացումը «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականության իրականացման անհրաժեշտ պայման է և ՉԺՀ-ի «ներքին շրջանների» զարգացման արդյունավետ միջոց<sup>3</sup>:

Չինաստանի «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականության իրականացման գործում արդյունավետ լծակ է համարվում «փափուկ ուժը», որի տակ հասկանում ենք խաղաղասեր արտաքին քաղաքականությունը, տնտեսական ալտրոլիզմը, ավանդական և ժամանակակից Չինաստանի հոգևոր ու նյութական մշակութային

<sup>2</sup> Ярыгина О. А., Кучинская Т.Н., «Новый регионализм»: Социокультурные Практики Китая, Забайкальский Государственный Университет (ЗабГУ), Чита, Россия, 2013, с. 1. <http://www.scienceforum.ru/2013/pdf/5047.pdf>

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 2:

արժեքներն ու գրավչությունը<sup>4</sup>: Գործի դնելով «փափուկ ուժի» բոլոր մատչելի գործիքները՝ ՉԺՀ-ը «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականություն է իրականացնում ինչպես տարածաշրջանային ու ազգային, այնպես էլ գլոբալ մակարդակներում:

Չինաստանի «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականությունը չինական «սոցիալ-մշակութային տարածությունում» ենթադրում է «նոր ռեգիոնալիզմի» ազդեցության տակ *չինական տարածաշրջանի* երկրներում սոցիալ-մշակութային ինտեգրացիայի կտրուկ աճ և ասիական-խաղաղօվկիանոսյան երկրների ինտեգրմանը նպաստող «նոր ռեգիոնալիզմի», ինչպես նաև տարածաշրջանային ինքնագիտակցության և տարածաշրջանային ինքնության ձևավորմանն ու կայացմանը նպաստող «նոր ռեգիոնալիզմի» աճ: Սա հատկապես վերաբերում է Արևելյան Ասիային, որտեղ ձևավորվում է *չինական տարածաշրջանին* պատկանելության գիտակցությունը<sup>5</sup>:

Չինական «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականությունը հավասարապես առնչվում է Պեկինի **Եվրասիական քաղաքականությունը**, որը վերջին շրջանում ակտիվացել է հատկապես Ռուսաստանի հովանավորությամբ կամ մասնակցությամբ իրականացվող եվրասիական ինտեգրացիոն գործընթացների ֆոնի վրա: Խոսքը գնում է Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ), Եվրասիական տնտեսական ընկերակցության (ԵրԱՀԾ), Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսիայի միջև Մաքսային միության (ՄԵՄ), տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի մասնակիցների կազմի ընդլայնման, օրինակ՝ Տաջիկստանի և Ղրղզստանի հաշվին, իսկ արդյունքում՝ Միասնական տնտեսական տարածության (ԵՅՊ) և Եվրասիական միության (ԵԱԿ) ստեղծման ծրագրերի մասին<sup>6</sup>: Նշենք, որ Եվրասիական միությունը թերևս հետխորհրդային տարածքում Ռուսաստանի ամենալայնածավալ վերամիավորման ծրագիրն է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո<sup>7</sup>:

Չին փորձագետների կարծիքով՝ Եվրասիական միության գա-

<sup>4</sup> Клиентов М. А., Кучинская Т. Н., «Мягкая сила» китайского «нового регионализма» в социокультурном пространстве мира, Успехи современного естествознания, № 5, 2012, с. 125. <http://www.rae.ru/use/pdf/2012/5/176.pdf>

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 125.

<sup>6</sup> Парамонов В., Евразийская интеграция и Китай: виртуальный экспертный форум, Часть 1, Центральная Евразия, 23.11.2011. <http://www.ceasia.ru/forum/evraziyskaya-integratsiya-i-kitay-virtualniy-ekspertniy-forum.-chast-1.html>

<sup>7</sup> Мальцев А. Е., Особенности Политики КНР в Центральной Азии в оценках российских и западных ученых, Сравнительная политика и геополитика, 4 (10), 2012, с. 27. [http://mgimo.ru/files2/z05\\_2013/maltzev.pdf](http://mgimo.ru/files2/z05_2013/maltzev.pdf)



ղափարը կամ ինտեգրացիոն հայեցակարգը Ռուսաստանն առաջ է քաշում ԱՊՀ-ի տարածքում իր աշխարհաքաղաքական առավելությունն ամրապնդելու, Ասլանտյան օվկիանոսի արևմտյան հատվածում իր ռազմավարական ազդեցությունը մեծացնելու, ինչպես նաև ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համակարգ մտնելու գործընթացն արագացնելու նպատակով: Միությանն առաջին հերթին մասնակցելու են հրավիրվում ԱՊՀ-ի երկրները: Ըստ չին փորձագետների՝ նման ինտեգրացիայի նպատակն ազդեցիկ ուժի ստեղծումն է, որը նոր աշխարհակարգում տնտեսական և քաղաքական անկախ խաղացող կդառնա՝ վերածվելով եվրասիական հզոր տերության: Թեև միությունը պետք է կրի տնտեսական բնույթ, սակայն հետագայում այն կարող է վերածվել ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ուժի<sup>8</sup>:

Այստեղ հարց է ծագում, թե որքանով են հետխորհրդային տարածքի ինտեգրացիոն գործընթացները համապատասխանում կամ հակասում Չինաստանի «նոր ռեգիոնալիզմի» քաղաքականությանը, հատկապես նրա տնտեսական բաղկացուցչին: Եվ ընդհանրապես, դրանք համատեղելի են համարվում, թե՛ ոչ: Խոսքը ԱՊՀ-ի երկրների, առաջին հերթին Կենտրոնական Ասիայի երկրների մասին է, որտեղ Չինաստանի ներկայությունը, հատկապես տնտեսական ոլորտում, վերջին տասը տարիներին խիստ մեծացել է: Նման պայմաններում անհավանական է թվում տարածաշրջանում չինական գործոնի անտեսման գնով ցանկացած խոշոր կամ միջին «միջոցառումների», հատկապես նման լայնածավալ ինտեգրացիոն գործընթացների ծրագրավորում և իրականացում<sup>9</sup>: Հարկ է նկատել, որ չինական գործոնի հետ հաշվի չնստել չեն կարող ոչ միայն ԱՊՀ-ի երկրներում, այլև ողջ համաշխարհային տնտեսությունում և քաղաքականությունում<sup>10</sup>:

Նշենք, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ 1991-1992 թթ. ժամանակահատվածում, ՉԺՀ-ն ԱՊՀ-ի բոլոր երկրների հետ հաստատել է պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ և վերջիններիս նկատմամբ հետամուտ է եղել Դեն Սիաոպինի «ժառանգած» հավասարակշռված և զուսպ դիրքորոշմանը՝ միաժամանակ ԱՊՀ-ի երկրների նկատմամբ բազմավեկտոր քաղաքա-

<sup>8</sup> Ли Син, Китай с одобрением смотрит на планы России по созданию Евразийского союза, Газета Хуанью шибао, Китай, 05.07.2013. <http://www.inosmi.ru/russia/20130705/210678606.html>

<sup>9</sup> Парамонов В., նշվ. աշխ., էջ 1:

<sup>10</sup> Китай безразличен к интеграции со странами СНГ, Регион.Кг, 21.12.2011. [http://www.region.kg/index.php?option=com\\_content&view=article&id=373:2011-12-21-09-26-59&catid=4:politika&Itemid=5](http://www.region.kg/index.php?option=com_content&view=article&id=373:2011-12-21-09-26-59&catid=4:politika&Itemid=5)

կանություն իրականացնելով<sup>11</sup>: Չինաստանի համար ԱՊՀ-ն ունի կենսական կարևորություն և ռազմավարական նշանակություն: ԱՊՀ-ի երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների զարգացումը և համագործակցությունը կարևոր դեր են խաղում Չինաստանի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան սահմանների անվտանգության պահպանման, սահմանային խնդիրների կարգավորման գործում, այսինքն՝ Հյուսիսարևելյան\* և Կենտրոնական Ասիայի\*\* կայունության ապահովման համար, ինչպես նաև գլոբալ ռազմավարական հավասարակշռության պաշտպանության և Չինաստանի արտաքին քաղաքական ազդեցության մեծացման գործում: ԱՊՀ-ի աշխարհագրական առավելությունների շնորհիվ ԱՊՀ-ը Չինաստանի համար հսկայական հնարավորություններ է ներկայացնում. այն ահռելի արտահանման շուկա է ՉԺՀ-ի տնտեսության համար: ԱՊՀ-ի երկրների մի մասը՝ մասնավորապես Ռուսաստանը, Կենտրոնական Ասիայի և Կասպից ծովի երկրները, Չինաստանին էներգակիրների ներկրման աղբյուրների տարրորոշման հնարավորություն են ընձեռում: ԱՊՀ-ն մնում է համաշխարհային տրանսպորտային կարևոր ուղիներից մեկը և Եվրոպական շուկա չինական ապրանքների արտահանման տրանսպորտային միջանցքներից ամենահարմարավետը<sup>12</sup>: Իր աշխարհագրական դիրքի առանձնահատկությունների շնորհիվ ԱՊՀ-ն Եվրոպայի և ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջև աշխարհաքաղաքական կապերի զարգացման կարևորագույն միջանցք է համարվում<sup>12</sup>:

<sup>11</sup> Мокрецкий А. Ч., Отношения КНР И СНГ: Новые горизонты развития, Китай в мировой и региональной политике. История и современность, Вып. XVII, ИДВ РАН, М., 2012, стр. 164. [http://www.ifes-ras.ru/attaches/books\\_\\_texts/kitmir3\\_08\\_2.pdf](http://www.ifes-ras.ru/attaches/books__texts/kitmir3_08_2.pdf)

\* Սառը պատերազմի ավարտից հետո Կորեական թերակղզում միջուկային խնդիրները, ամերիկաճապոնական անվտանգության վերաբերյալ պայմանագրի վերանայումը, չին-ճապոնական հարաբերություններում անկայունությունը և այլն վկայում են Հյուսիսարևելյան Ասիայում անվտանգության ոլորտում իրադրության բարդացման մասին:

\*\* Կենտրոնական Ասիայում վտանգավոր են մնում «չարիքի երեք ուժերը»՝ միջազգային ահաբեկչությունը, էթնիկ անջատողականությունը, կրոնական ծայրահեղականությունը:

\*\*\* ԱՊՀ-ի երկրները տնօրինում են տրանսպորտային բավականին զարգացած համակարգերի՝ ներառյալ երկաթուղային, ավտոմոբիլային, գետային, ծովային, խողովակաշարային, օդային միջոցների, որոնց շարքում երկաթուղայինը հիմնականն է:

<sup>12</sup> Ван Шуцунь и Вань Чинсун, СНГ и современная политика Китая, Свободная мысль, №3, Апрель 2013, 2013. <http://svom.info/entry/245-sng-i-sovremennaya-politika-kitaya/>

Ռուս փորձագետների կարծիքով՝ պաշտոնական Պեկինը նախկինում ԱՊՀ-ի երկրների հետ հարաբերություններում հենվում էր երկկողմանի տնտեսական հարաբերությունների վրա: Չմիջամտելով այդ երկրների ներքին գործերին՝ չինական կողմը հետևողականորեն իր գիծն էր առաջ մղում՝ վերնախավի հետ կամուրջներ կառուցելով և իր գործընկերների արտաքին քաղաքական կողմնորոշումներից անկախ (ռուսամետ, ամերիկամետ, եվրոպամետ) սեփական տնտեսական շահերն առաջ տանելով: Այդ սկզբունքով Չինաստանն աշխատում էր ոչ միայն հարևան ՇՀ-ի անդամ-երկրների հետ, այլև Բելառուսիայի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ՝ վերջիններիս պարբերաբար տնտեսական օգնություն տրամադրելով և համագործակցության պայմանագրեր կնքելով: Որոշ կարծիքների համաձայն՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների լարվածության դեպքում Չինաստանը կարող է ԱՊՀ-ի երկրների համար աստիճանաբար վերածվել Մոսկվայի այլընտրանքի, թեև Պեկինը պաշտոնապես իրեն «հեռու է պահում» նման մտքից<sup>13</sup>:

Պեկինի եվրասիական ռազմավարության կարևոր բաղկացուցիչներից է ՉԺՀ-ի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում: Այն ընդգրկում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են չին-ռուսական և չին-միջինասիական հարաբերությունները, Եվրասիայի ներսում ՉԺՀ-ի էներգետիկ և հեռահաղորդակցային նախագծերը, Պեկինի մասնակցությունը ՇՀ-ին, անվտանգության ու ահաբեկչության դեմ պայքարի հիմնախնդիրները և այլն<sup>14</sup>: Նշենք, որ ՇՀ-ի ստեղծումը Պեկինի համար ռազմավարական ուղի հարթեց դեպի ԿԱ՝ տարածաշրջանի երկրների գործերին մասնակցության և բազմակողմանի կապերի հաստատման հիմք ծառայելով: ՇՀ-ի ստեղծումը ենթադրում էր նաև Ռուսաստանի և Չինաստանի միջև ռազմավարական փոխզիջման կայացում և փախգործակցության զարգացում, ԿԱ-ում ռազմավարական հավասարակշռության հաստատում և փոխադարձ շահերի ճանաչում<sup>15</sup>:

Չին փորձագետների կարծիքով՝ Եվրասիական միության ստեղծումը Չինաստանի արևմտյան շրջանների անվտանգության և կայունության համար կարևորագույն նշանակություն ունի<sup>16</sup>: Վերջին

<sup>13</sup> Китай безразличен к интеграции со странами СНГ, նշվ. աշխ., էջ 1:

<sup>14</sup> Лаумулин М. Т., Центральная Азия в зарубежной политологии и мировой геополитике, Центральная Азия в XXI столетии, Том V, КИСИ при Президенте РК, Алматы, 2009, стр. 156. <http://www.kisi.kz/img/docs/4587.pdf>

<sup>15</sup> Նույն տեղում., էջ 158:

<sup>16</sup> Ли Син, Китай с одобрением смотрит на планы России по созданию Евразийского союза, Газета Хуаньцю шибао, Китай, 05.07.2013. <http://www.inosmi.ru/russia/20130705/210678606.html>

շրջանում Պեկինին խիստ մտահոգում է նաև ՄԱ-ից Կենտրոնական Ասիա (ԿԱ) և Արևելյան Թուրքեստան իսլամական ծայրահեղականության ալիքի տարածման հնարավորությունը, որը կարող է լուրջ սպառնալիք ներկայացնել ոչ միայն ՉՃՀ-ի անվտանգությանը՝ վերջինիս արևմտյան սահմանի երկայնքով, այլև Հարավային Ասիայի խաղաղությանն ու կայունությանը<sup>17</sup>: Թերևս այդ պատճառով Պեկինը խստացրեց իր վերահսկողությունը Չինաստանի Սինծյան-Ույղուրական ինքնավար մարզի նկատմամբ, որտեղ բնակվում են մոտ 22 մլն սուննի մուսուլման, ներառյալ 10 մլն ույղուր, որոնց մեջ, անշուշտ, քիչ չեն իսլամիստ արմատականները: ՄԱ-ում և ԿԱ-ում արմատականության և ծայրահեղականության աճի ֆոնի վրա Պեկինը ձգտում է կանխելու և սահմանափակելու չին մուսուլմանների, գլխավորապես ույղուր անջատողականների ակտիվության հնարավոր դրսևորումները<sup>18</sup>: Ուշագրավն այն է, որ 2013 թ. սեպտեմբերի սկզբին Աստանայում ՇՀԿ-ի գազաթնաժողովին Չինաստանի նախագահ Սի Ծինպինը ոչ միայն աջակցություն ցուցաբերեց Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման վերաբերյալ Ռուսաստանի ներկայացրած ծրագրին, այլև ՇՀԿ-ի անդամների ուշադրությունը Աֆղանստանից սևեռեց Սիրիայի հիմնախնդրի վրա: Սա գնահատվեց իբրև ՆԱՏՕ-ի ավանդական պատասխանատվության տիրույթում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անվտանգության գործառնություններին հակակշիռ ստեղծելու փորձ: Նշենք, որ չին զինվորական փորձագետները 2012 թվից ՇՀԿ-ը սկսել են անվանել «արևելյան ՆԱՏՕ»՝ վերջինիս մեղադրելով Աֆղանստանում ու Լիբիայում տիրող «քաոսի և անկայունության» մեջ: Ավելին, չին փորձագետների համաձայն՝ Չինաստանն ու Ռուսաստանն իբրև ասիական-խաղաղովկիանոսյան երկրներ, պետք է ընդլայնեն ՇՀԿ-ի մանդատը նշյալ տարածաշրջանում՝ սահմանափակելով ՆԱՏՕ-ի ընդլայնումն իբրև «աշխարհի անվտանգության կենտրոնի»<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է Կենտրոնական Ասիայում չինական քաղաքականության ազդեցության աճին և Եվրասիական միության

<sup>17</sup> Mordechai Chaziza, The Arab Spring: Implications for Chinese Policy, The Global Research in International Affairs (GLORIA) Center, 04.08.2013, p. 73. <http://www.gloria-center.org/2013/08/the-arab-spring-implications-for-china-policy/>

<sup>18</sup> Shichor Yitzhak, Storm in a (Jasmine) Teacup: China's Response to the Middle East Upheavals, Paper prepared for the German Marshal Fund's China Forum, Stockholm, 09.06.2011, p. 3. [http://www.academia.edu/3695433/SCF\\_9\\_Paper\\_Series\\_-\\_Yitzhak\\_Shichor\\_-\\_Storm\\_in\\_a\\_Jasmine\\_Teacup](http://www.academia.edu/3695433/SCF_9_Paper_Series_-_Yitzhak_Shichor_-_Storm_in_a_Jasmine_Teacup)

<sup>19</sup> Jacob Zenn, China and the SCO: Dead Wood but a Good Platform, China Brief, Vol.: 13, Issue: 20, The Jamestown Foundation, 10.10.2013, p. 9. [http://www.jamestown.org/uploads/media/China\\_Brief\\_Vol\\_13\\_Issue\\_14.pdf](http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_13_Issue_14.pdf)

ձևավորման վրա դրա հնարավոր հետևանքներին, ապա այս հարցում ռուսական և միջինասիական փորձագիտական շրջանակները դեռևս 2011 թ. դրությամբ տարակարծիք էին: Գերիշխող տեսակետի համաձայն՝ Չինաստանը հանդես էր գալիս տարածաշրջանում տնտեսական առաջատարի դերում, որի դիրքերը միայն պետք է ամրապնդվեին: Եվրասիական միության հեռանկարներն այդ առումով միանշանակ չէին գնահատվում. մի կողմից՝ նշվում էր, որ այդ նախաձեռնությունը տեսականորեն ի վիճակի է ամրապնդելու տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերը, մյուս կողմից՝ Չինաստանի հետ Ռուսաստանի և ԿԱ-ի երկրների տնտեսական ակտիվ հարաբերությունների ձևավորման պայմաններում վերջիններիս վերապահվում էր չինական տնտեսության հումքային կցորդի վերածվելու հեռանկարը<sup>20</sup>: Նշենք, որ ռուս փորձագետների կարծիքով՝ Չինաստանի համար ԿԱ-ն մատակարարման նոր շուկա, հումքի աղբյուր և տարանցիկ «միջանցք» է Չինաստանի և նրա հետամնաց շրջանների, հատկապես Սինձյանի զարգացման համար: Այն եղել է և կմնա իբրև ռազմավարական «թիկունք»՝ պայմանավորված Արևմուտքի և Արևելյան Ասիայի հարևան երկրների հետ Պեկինի բարդ հարաբերություններով<sup>21</sup>:

Ներկայումս, երբ ասիական-խաղաղովկիանոսյան տարածաշրջանում՝ ՉԺՀ-ի արևելյան ջրային սահմաններում, իրադրությունը գնալով լարվում է, ՉԺՀ-ի արմուտքում՝ եվրասիական թիկունքում, տեղի ունեցող գործընթացները Պեկինի համար ավելի մեծ կարևորություն են ստանում<sup>22</sup>: Խնդիրն այն է, որ 2012 թ. հունվարին Բարաք Օբաման Պենտագոնում հանրության ուշադրությանը ներկայացրեց ԱՄՆ-ի ռազմական նոր ռազմավարությունը, որը ծրագրում էր Ատլանտյան տարածաշրջանի խնդիրներից ուշադրությունը տեղափոխել ասիական-խաղաղովկիանոսյան տարածաշրջան: Պեկինում այն չի դիտարկվում այլ կերպ, քան ԱՄՆ-ի համար ռազմավարական նշանակությամբ տարածաշրջանում ՉԺՀ-ի ազդեցության աճը կասեցնելուն ուղղված քայլ: Ուստի ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի միջև աճող հակասությունները բարենպաստ հող են ստեղծում ապագա Եվրասիական միության հետ ՉԺՀ-ի դրական կառուցողական հարաբերությունների զարգացման համար:

<sup>20</sup> Мальцев А. Е., նշվ. աշխ., էջ 27:

<sup>21</sup> Противоречия евразийства России и китайской экспансии, Вопросик, 16.10.2013.

<http://voprosik.net/protivorechiya-evrazijstva-rossii-i-kitajskoj-ekspansii/>

<sup>22</sup> Ли Син, նշվ. աշխ., էջ 1:

ԱՄՆ-ի «ագրեսիվ վարքագիծը» մեծացնում է Չինաստանի համար Եվրասիական միությունը ձևավորող և աշխարհաքաղաքական հարմարավետ դիրքեր զբաղեցնող հուսալի աշխարհաքաղաքական դաշնակիցների ձեռքբերման կարևորությունը<sup>23</sup>:

Փաստորեն Եվրասիան յուրահատուկ մայրցամաքային թիկունք է համարվում Չինաստանի համար ասիական-խաղաղովկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ-ի հետ «մարտնչելու» հեռանկարի դեպքում: Իսկ Եվրասիական միության կայունությունն ու բարգավաճումը Չինաստանի համար դառնում է համաշխարհային տիրապետության համար մղվող պայքարի կարևորագույն գործոն: ԱՄՆ-ի հետ հարաբերություններում լարվածության աճի և ավանդական էներգետիկ աղբյուրներից առաքումների ապահովմանն ուղղված ռիսկերի դեպքում Չինաստանը կարող է ապավինել Եվրասիական միությունից էներգետիկ պաշարների կտրուկ ավալացմանը<sup>24</sup>:

Քանի որ ռազմական հզորությունը Չինաստանի թույլ կողմն է, իսկ զարգացող տնտեսությունը՝ հզոր, ուստի Չինաստանի համար նպատակահարմար է «զարգացնել իր առավելությունները և նվազագույնի հասցնել թերի կողմերը»։ Նախ՝ Արևմուտքում ամրապնդել և կարգի բերել ցամաքային սահմանները, ապա՝ Արևելքում հենարան և երաշխիքներ ստեղծել ցամաքային և ծովային ուժեղ գերտերություն դառնալու համար<sup>25</sup>:

### ***Սի Ծինպինի «Մեդաքսի ճանապարհի տնտեսական գոտու» ստեղծման հայեցակարգը***

Վերջին ամիսներին չինական մամուլում հանդիպում ենք մի շարք հրապարակումների, որոնց համաձայն Եվրասիական միության ստեղծման Մոսկվայի ռազմավարությանը և Վաշինգտոնի «Նոր մետաքսի ճանապարհ» նախագծին Պեկինը հակադրում է իր սեփական Եվրասիական ռազմավարությունը:

Խոսքը վերաբերում է սույն թվի հոկտեմբերին ՉԺՀ-ի կոմկուսի պաշտոնական մարմնի հրատարակած «*Ինչպիսի տարբերություններ կան Կենտրոնական Ասիայում Չինաստանի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի ռազմավարություններում*» և «*Մեդաքսի ճանա-*

<sup>23</sup> Кизима Сергей, Роль Китая в развитии Евразийского Союза, Евразийская интеграция: Экономика, Право, Политика, Международной научно-аналитический журнал, № 12, Межпарламентская Ассамблея Евразийского экономического сообщества, 2012, с. 193-194. [http://www.evrazes.spb.ru/files/Issue\\_12.pdf](http://www.evrazes.spb.ru/files/Issue_12.pdf)

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 195-196:

<sup>25</sup> Ли Син, նշվ. աշխ., էջ 1:

պարհի տնտեսական գոտի. *ինչպիսի՞ մրցակցային առավելություններով է օժտված Չինաստանը Կենտրոնական Ասիայում*» վերնագրերով՝ Եվրասիական միության քննադատությամբ և «Մետաքսի ճանապարհի» չինական նախագծի առավելության նկարագրությամբ հոդվածներին: Վերջիններիս համաձայն՝ Պեկինը թեև դեռևս չի առարկում Ասիայում Ռուսաստանի և ԱՄՆ-ի ակտիվությունը, սակայն առաջարկում է այն դարձնել չինական նախագծի մաս: Պեկինում կարծում են, որ անգամ կովկասյան երկրներ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը և ինքնահռչակված պետությունները երազում են Երկնատակի նոր ռազմավարության մաս կազմել<sup>26</sup>: Չին փորձագետների համաձայն՝ չինական ինտեգրացիոն նախագծերում արդեն ներառված են Անդրկովկասի երկրները, այսինքն՝ Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան և Հարավային Օսեթիան<sup>27</sup>:

*«Ինչպիսի տարբերություններ կան Կենտրոնական Ասիայում Չինաստանի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի ռազմավարություններում*» վերնագրով «Ժենմին Ժիբաո» օրաթերթում հոկտեմբերի 10-ի հրապարակումն անդրադառնում է ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինպինի՝ հոկտեմբերի 7-ին Ղազախստանում ունեցած ելույթին, որը նվիրված էր «համատեղ գեղեցիկ ապագայի ստեղծման համար ժողովուրդների բարեկամության զարգացմանը»: Չին առաջնորդն առաջ է քաշում «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» ստեղծման գաղափարը՝ ուղղված միջտարածաշրջանային զարգացմանը, համագործակցության և բարգավաճման խթանմանը: Ըստ ՉԺՀ-ի նախագահի՝ նախկինում ԱՄՆ-ն առաջարկում էր Աֆղանստան կենտրոնով **«Նոր մետաքսի ճանապարհի»** ծրագիրը, որով Վաշինգտոնը մտադիր էր միավորել Կենտրոնական և Հարավային Ասիան, Անդրկովկասի երկրները, անգամ Մոնղոլիան ու չինական Սինձյանը: Այդ ծրագիրը կոչվում էր նաև «մեծ կենտրոնասիական ծրագիր», որն ասիական-խաղաղովկիանոսյան տարածաշրջան «վերադառնալու» կամ «հավասարակշռությունը վերականգնելու» ուղղությամբ ամերիկյան ռազմավարության կարևոր բաղկացուցիչ է համարվում: Հաշվի

<sup>26</sup> Сергеев М., Пекин дипломатично подвинул путинский проект Евразийского союза, Независимая газета, 14.10.2013. [http://www.ng.ru/economics/2013-10-14/1\\_pekini.html](http://www.ng.ru/economics/2013-10-14/1_pekini.html)

<sup>27</sup> Перспективы стратегического проекта Владимира Путина по созданию Евразийского союза могут сильно измениться, Вечерний Бишкек, №127 (10685), 29.01.2013. [http://members.vb.kg/2013/10/29/tamojen/3\\_print.html](http://members.vb.kg/2013/10/29/tamojen/3_print.html)

առնելով տարածաշրջանային շահերի կառուցվածքը՝ Ռուսաստանն էլ առաջ է քաշում «Եվրասիական միության» ստեղծման գաղափարը, որը տերության կարգավիճակի վերականգնման ռազմավարական հենասյունն է<sup>28</sup>:

Շանհայի հասարակական գիտությունների ակադեմիայի տնօրեն Պան Գուանի համաձայն՝ ԱՄՆ-ի «Նոր մետաքսի ճանապարհի ծրագրում» կենտրոնական տեղ է հատկացվում Աֆղանստանին, որի հիմքում ընկած է երկրում հետպատերազմյան վերականգնողական աշխատանքների իրականացումը: Ամերիկյան ծրագրի էությունն այն է, որ ԱՄՆ-ը ցանկանում է կառավարել Աֆղանստանն՝ առանց փող ներդնելու՝ հուսալով, որ միջոցներ կտրամադրեն Աֆղանստանի մերձակա երկրները: Ներկայումս Հնդկաստանը, Պակիստանը և այլ երկրներ արդեն ակտիվ դիրքորոշում են դրսևորել ամերիկյան ծրագրի նկատմամբ<sup>29</sup>:

Թերթի համաձայն՝ «Եվրասիական միության» զարգացման վերաբերյալ Ռուսաստանի առաջ քաշած գաղափարն ուղղված է հետխորհրդային տարածքում Մոսկվայի ազդեցիկ դիրքերի պահպանմանը: Այդ միությունը հիմնականում ենթադրում է նախկին խորհրդային հանրապետությունների միություն: Մինչդեռ Չինաստանի «**Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին**» իրենից ներկայացնում է մշակույթի և տնտեսության միություն, քանի որ պատմականորեն «Մետաքսի ճանապարհը» միջանցք էր, որով Ասիայից Եվրոպա էր առաքվում մետաքս ու թեյ, և այդ գործընթացում բազմաթիվ միջմշակութային փոխանակումներ էին տեղի ունենում: Այժմ հետամուտ լինելով «տնտեսական գոտու» գաղափարին՝ կարելի է ստեղծել եվրասիական տնտեսական գոտի, որը կընդգրկի Չինաստանը, Կենտրոնական Ասիան և Եվրոպան: Այս նոր գաղափարը Չինաստանի համընդգրկուն զարգացման արտացոլումն է, ինչպես նաև երկրի զարգացման ռազմավարությունը փոխահավետության հիման վրա: «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» շրջանակներում ՇՀԿ-ն և Եվրասիական տնտեսական ընկերակցությունը կարող են միմյանց հետ համագործակցել՝ միաժամանակ չքացառելով ամերիկյան «Մետաքսի ճանապարհի նոր ծրագիրը»: Չինաստանի առաջ քաշած

<sup>28</sup> Какие различия существуют в стратегиях Китая, США и России в Центральной Азии? Жэньминь Жибао, 10.10.2013. <http://russian.people.com.cn/95181/8420655.html>

<sup>29</sup> Какие различия существуют в стратегиях Китая, США и России в Центральной Азии? Жэньминь Жибао, 10.10.2013. <http://russian.people.com.cn/95181/8420655.html>, с.1.



նոր գաղափարը ենթադրում է ՇՀԿ-ի անդամ երկրների, երկխոսության գործընկերների և դիտորդների միավորում: Այդ կերպ կձևավորվի համընդգրկուն զարգացում՝ առկա տարբերությունների, մրցակցության և համագործակցության հիմքերի վրա<sup>30</sup>:

Չինաստանի հասարակական գիտությունների Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների ինստիտուտի Ռուսաստանի արտաքին քաղաքականության բաժնի վարչի տեղակալ Յզյան Իի համաձայն՝ ռազմավարական տեսանկյունից Ռուսաստանի առաջ քաշած Եվրասիական միության գաղափարը ենթադրում է Կենտրոնական Ասիայի միավորում: Մինչդեռ ԱՄՆ-ի ներկայությունը տարածաշրջանում համեմատաբար երկար չէ, ուստի նրանց ռազմավարական գլխավոր նպատակը ԿԱ-ում դիրքերի ամրապնդումն է: Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա ԿԱ-ի տարածաշրջանը կապված է Չինաստանի անվտանգության հետ, Պեկինը նաև հույս ունի տարածաշրջանային փոխազդեցության ընդլայնման միջոցով խթանել երկրի արևմտյան շրջանների զարգացումը: Հետևաբար «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» գաղափարը տնտեսական համագործակցության տարբեր միջոցներով Կենտրոնական, Արևելյան և Արևմտյան Ասիաները միավորելու փորձ է<sup>31</sup>:

ՉԺՀ-ի Պետխորհրդի զարգացման հետազոտական կենտրոնի Ռուսաստանի արտաքին քաղաքական ուսումնասիրության բաժնի վարիչ Վան Չենցայի համաձայն՝ Կենտրոնական Ասիայում Չինաստանն առնվազն հինգ խոշոր առավելություն ունի.

1. Զարգացման հայեցակարգի առավելությունը: Ռուսական «Եվրասիական միության» և ամերիկյան «Նոր մետաքսի ճանապարհի» համեմատությամբ չինական «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին» բազմակողմանի նախագիծ է, որը տարածվում է Արևելքի, Արևմուտքի, Հյուսիսի ու Հարավի վրա: Եթե այն զարգացում ստանա, ապա օգուտ կբերի երեք մլրդ մարդու\*: Չինաստանը հստակ արտահայտվել է, որ չի ձգտում տարածաշրջանային գերիշխանության, չի ձգտում այստեղ ազդեցության ոլորտ հաստատել և չի միջամտում խոշոր այլ տերությունների ներքին

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 1:

<sup>31</sup> Какие различия существуют в стратегиях Китая, США и России в Центральной Азии? Жэньминь Жибао, 10.10.2013. <http://russian.people.com.cn/95181/8420655.html>, с.1.

\* Ռուսական նախագիծը կարող է միավորել 10–15 անգամ ավելի քիչ թվով բնակչության, հետևաբար՝ ստեղծել 10–15 անգամ փոքր շուկա:

քաղաքականությանը: Այս առումով Չինաստանի առաջ քաշած նոր հայեցակարգը չի նսեմացնում Ռուսաստանի շահերը:

2. Աշխարհագրական առավելությունը: Չինաստանն ընդհանուր սահման ունի ԿԱ-ի երեք երկրի հետ, ինչը նշանակում է աշխարհագրական մերձավորություն:

3. Ավանդույթների առավելությունը: Հնագույն մետաքսի ճանապարհը ժողովրդի սրտում խոր տեղ ունի, բոլորը հաղթող են մնում: Տնտեսական գլոբալիզացիայի ալիքի վրա «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին» հեշտությամբ է ընկալվում հասարակության կողմից:

4. Կովկասյան երկրները հույս ունեն, որ Կենտրոնական Ասիայում Չինաստանի ռազմավարությունը կարող է տարածվել մինչև Կովկաս:

5. Ֆինանսական առավելությունը: Կես տարվա ընթացքում ՉՀՀ-ի նախագահ Սի Ծինպինն առանձին բանակցություններ է վարել ԿԱ-ի չորս պետության ղեկավարների հետ, որի արդյունքում Չինաստանի և այդ պետությունների միջև հարաբերությունները բարձրացել են ռազմավարականի մակարդակի: Օրինակ՝ Ուզբեկստանն ու Չինաստանը 11 մլրդ ԱՄՆ դոլարի համագործակցության պայմանագիր են ստորագրել: Ինչ վերաբերում է ենթակառուցյուններին, ապա Չինաստանը կարող է մինչև Եվրոպա հասարակական և երկաթուղային ճանապարհների վերականգնման և կառուցման գործում օգնություն տրամադրել ԿԱ-ի երկրներին: Ռուսաստանը ևս ուրախ է դրանցում մասնակցություն ունենալ<sup>32</sup>:

Շանհայի հասարակական գիտությունների ակադեմիայի տնօրեն Պան Գուանի համաձայն՝ Չինաստանի ամենից ակնհայտ առավելությունը նրա տնտեսական հզորությունն է: ՇՀԿ-ի անդամ պետությունները հույս ունեն, որ Չինաստանը կավելացնի իր ներդրումները: Ներկա պահին ՇՀԿ-ի շրջանակներում խոշոր ներդրումային նախագծերը հիմնականում իրականացնում են Չինաստանը և Ռուսաստանը: Չինաստանն արդեն հանդես է եկել ՇՀԿ-ի զարգացման բանկի ստեղծման առաջարկությամբ, որը կարագացնի ՇՀԿ-ի աճը: ՇՀԿ-ի զարգացման բանկի ստեղծումն արդեն օրակարգում է, սակայն ներդրումային իրավունքի, ձայնի իրավունքի և այլ խնդիրներ պահանջում են բանակցությունների շարունակում: Չինաստանի հասարակական գիտությունների Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի

<sup>32</sup> «Экономический пояс Шелкового пути» - какими конкурентными преимуществами обладает Китай в Центральной Азии? Жэньминь Жибао, 10.10.2013. <http://russian.people.com.cn/31518/8420265.html>

ուսումնասիրությունների ինստիտուտի Ռուսաստանի արտաքին քաղաքականության բաժնի վարչի տեղակալ Յզյան Իի համաձայն՝ վերջին 20 տարիներին Չինաստանի և ԿԱ-ի երկրների միջև հարաբերությունները կայուն են եղել. կողմերի միջև համագործակցության զարգացումը բարենպաստ քաղաքական հարաբերությունների լավ երաշխիք է: Չինաստանն ու ԿԱ-ի երկրները տնտեսապես լրացնում են միմյանց: Վերջիններս հույս ունեն, որ ՉԺՀ-ը, հավասարակշռող դեր կատարելով, հանդես կգա իբրև դրական ուժ առողջ համագործակցության գործում<sup>33</sup>:

«Չինաստանը ջանքեր է գործադրում նոր «ծովային մեդաքսի ճանապարհի» սրեղծման համար» վերնագրով «Жэньминь жибао» օրաթերթի հոկտեմբերի 11-ի հրապարակման մեջ ՉԺՀ-ի Պետխորհրդի զարգացման հետազոտական կենտրոնի Ռուսաստանի արտաքին քաղաքական ուսումնասիրության բաժնի վարիչ Վան Չենցայը հայտնում է՝ «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» իրականացումը պետք է նպաստի տարածաշրջանի երկրների տնտեսական զարգացմանը և աշխատուժի տեղաշարժին, ԿԱ-ը վերածի խաղաղ, կայուն բարգավաճման և ներդաշնակ շրջանի, որն իր հերթին պետք է նպաստի «չարիքի երեք ուժերի» դեմ արդյունավետ պայքարին: Սակայն **առաջին և մեծագույն մարտահրավերը** ԿԱ-ի երկրների, Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հաստատումն է, քանի որ այդ տարածքի տերերը ԿԱ-ի երկրներն են, իսկ ՌԴ-ը, ԱՄՆ-ը և ՉԺՀ-ը կապեր են հաստատել այդ երկրների հետ: Այստեղ միահյուսվում են շահերը, բախվում հակասությունները. անհրաժեշտ է հստակ մշակված ռազմավարություն և մարտավարություն՝ փոխշահավետ հաստան կետերի որոնման համար<sup>34</sup>:

**Երկրորդ մարտահրավերը** Չինաստանի և ԿԱ-ի երկրների միջև մշակութային տարբերություններն են և փոխըմբռնման խորացման խնդիրը: Շատ կարևոր է մարդասիրական փոխանակությունը: ՉԺՀ-ն ծրագրում է կենսագործել ուսանողների փոխանակման ծրագրեր:

**Երրորդ մարտահրավերն** է արդարության և օգուտի վերաբերյալ ճիշտ պատկերացումների հստակեցումը, փոխադարձ շահն ու համագործակցությունը: Զարգացման գործում անհրաժեշտ է հարցերը քննարկել ԿԱ-ի երկրների շահերի դիրքերից, հանուր պատշաճի հաշվի առնել տարածաշրջանի զարգացման կարիքները:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 1:

<sup>34</sup> Китай прилагает усилия для создания нового «морского шелкового пути», Жэньминь Жибао, 11.10.2013. <http://russian.people.com.cn/31521/8421498.html>

**Չորրորդ մարտահրավերը** կապված է զարգացման ուղղության հաստատման հետ, որից հետո փոքր, միջին ու մեծ ձեռնարկությունները կարող են դուրս գալ ԿԱ-ի շուկա: Այսպիսով՝ Չինաստանին հարկավոր կլինի համակենտրոնացնել ներքին ընկերությունների զարգացման կարիքները, միևնույն ժամանակ հաշվի առնել չինական և արտասահմանյան ձեռնարկությունների պահանջները:

**Եվ վերջինը**, բացի ԿԱ-ի զարգացման վճռականությունից և վստահությունից, անհրաժեշտ է համբերություն: Տարածաշրջանային երկրների զարգացման փուլերը և տնտեսական կառույցները այդքան էլ միանման չեն. գոյություն ունեն տարբերություններ Չինաստանի և ԿԱ-ի երկրների շահերում: Այդ պատճառով էլ զարգացումը երկարատև ծրագրավորման կարիք ունի:

Հասարակական գիտությունների Շանհայի ակադեմիայի ՇՀԿ-ի հետազոտությունների կենտրոնի տնօրեն Պան Գուանի համաձայն՝ ներկայումս «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին» դեռևս գաղափար է, ուստի **գլխավոր մարտահրավերը** դրա ստեղծման գործում մասնակցելու նպատակով երկրների ներգրավումն է: **Երկրորդ**, ակնհայտ են անվտանգության հետ կապված խնդիրներ. անհրաժեշտ է հաղթահարել ահաբեկչությունը, պայքարել «չարիքի երեք ուժերի» դեմ, ապահովել էներգակիրներ մատակարարող խողովակաշարերի անվտանգությունը: ՇՀԿ-ի համար անվտանգության ոլորտում համագործակցությունն առաջին տեղում է, նախկինի պես տարածաշրջանային երկրների ուշադրության կենտրոնում են թմրանյութերի ապօրինի շրջանառության, զենքի առևտրի դեմ պայքարը, անդրասահմանային հանցագործությունը, ինչպես նաև հարցեր՝ կապված շրջակա միջավայրի պաշտպանության հետ:

Չինաստանի հասարակական գիտությունների Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների ինստիտուտի Ռուսաստանի արտաքին քաղաքականության բաժնի վարչի տեղակալ Յզյան Իի համաձայն՝ *Չինաստանի համար մեծագույն մարտահրավերը Ռուսաստանի հետ հարաբերությունների հարթեցումն է*: Անհրաժեշտ է թույլ չտալ, որպեսզի ԿԱ-ի հետ սերտ կապերը վնասեն ռուս-չինական հարաբերությունները: Միաժամանակ անհրաժեշտ է մտածել տարածաշրջանի երկրների միջև կապերի կորրեկցիանցման և բարեկամական հարաբերությունների պահպանման ուղղությամբ<sup>35</sup>:

<sup>35</sup> Китай прилагает усилия для создания нового «морского шелкового пути»,

Թերթի համաձայն՝ տարածաշրջանի իրապայմաններին և «Մետաքսի ճանապարհի» երկանքով ընկած երկրների պահանջներին համապատասխան՝ ապագայի տնտեսական միջանցքն իր մեջ կներառի մի քանի «հատուկ գոտիներ»: Օրինակ՝ տրանսպորտի և փոխադրումների, էներգակիրների, տեղեկատվական փոխանակման, գիտական համագործակցության, ապրանքային առևտրի, գյուղատնտեսական և զբոսաշրջության զարգացման, անվտանգության ապահովման, քաղաքական փոխվստահության և այլն: «Հատուկ գոտիներ» կառուցումը կարող է իրականացվել միաժամանակ, ինչպես նաև հերթականությամբ՝ կախված մասնակից երկրների իրապայմանների հասունությունից, ակտիվությունից և ընկալունակությունից<sup>36</sup>:

Ներկայումս Չինաստանն ու ԿԱ-ի երկրներն արդեն **A և B** նավթամուղեր են կառուցել Թուրքմենստանից Ուզբեկստանի և Ղազախստանի միջով մինչև Չինաստան: Ապագայում կկառուցվի **C և D** նոր ուղիները՝ Թուրքմենստանից Ղրղզստանի և Տաջիկստանի միջով դեպի Չինաստան: Եթե դրան ավելացվի չինդազախական նավթամուղը և Չինաստանի ու Ղրղզստանի միջև ծրագրվող էլեկտրահաղորդման նախագիծը, ապա կձևավորվի «էներգետիկ տնտեսության գոտին»: «Չինաստան-Կենտրոնական Ասիա» գազամուղը հսկայական տնտեսական օգուտ կբերի ոչ միայն Չինաստանին, այլև գազարդյունահանող երկրներին՝ Թուրքմենստանին ու Ուզբեկստանին, տարանցիկ երկրներ Ղրղզստանին ու Տաջիկստանին, որոնց միջով անցնում է գազամուղը՝ հսկայական եկամուտ ապահովելով «տարանցիկ վճարումներից»: Ակնհայտ է, որ դա ձեռնտու է շատ երկրների: Այդ է, թերևս, պատճառը, որ «Մետաքսի ճանապարհի տնտեսական միջանցքի» կառուցման գաղափարը լայն արձագանք առաջացրեց հատկապես ԿԱ-ի երկրներում, ինչպես նաև Արևմտյան Ասիայում ու Ռուսաստանում<sup>37</sup>:

Ինչ վերաբերում է տրանսպորտի խնդրին, ապա արդեն բաց է Չինաստանից Ղազախստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի միջով մինչև Ռուսաստան և Եվրոպա ձգվող երկրորդ երկաթգիծը: Մյուս երկաթգծի նախագիծը Չինաստանից Ղրղզստանի,

Жэньминь Жибао, 11.10.2013. <http://russian.people.com.cn/31521/8421498.html>, с. 1.

<sup>36</sup> Что принесет с собой «экономический коридор Шелкового пути»? russian.china.org.cn, 14.10.2013, с. 1. [http://russian.china.org.cn/exclusive/txt/2013-10/14/content\\_30289396.htm](http://russian.china.org.cn/exclusive/txt/2013-10/14/content_30289396.htm)

<sup>37</sup> Երկն տեղում, էջ 2:

Ուզբեկստանի միջով մինչև Թուրքմենստան, Իրան և Արևմտյան Ասիա մշակման փուլում է: Չինաստանի և Ղրղզստանի, Ղազախստանի, Տաջիկստանի միջև ավտոմայրուղիներն արդեն վաղուց բաց են, ճանապարհային պայմաններն արդեն կատարելագործվում են: Դրանք իրար են միանում Կենտրոնական Ասիայից մինչև Արևմտյան Ասիա և Եվրոպա ճանապարհային ցանցով: Պեկինից, Շանհայից, Գուանջոուից և ՉժՀ-ի այլ քաղաքներից մինչև ԿԱ-ի երկրներ ուղիղ չվերթով կամ Ուրումչիի միջով արդեն մոտ 10 ավիաուղի է բացվել, նախատեսվում են նոր չվերթներ: Փաստորեն վերոնշյալ ցամաքային և օդային ուղիները միանգամայն համարավետ «տրանսպորտային տնտեսության գոտի» են ստեղծում<sup>38</sup>:

Ուրումչին՝ իբրև միջազգային տեղեկատվական հանգույց, միավորում է Չինաստանը, Կենտրոնական, Արևմտյան Ասիան և Եվրոպան: Այդ տեղեկատվական ցանցի արագընթաց ճանապարհն անընդմեջ կատարելագործվում է: Չինաստանի և Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Թուրքմենիայի միջև արդյունաբերական պուրակների, գյուղատնտեսական ցուցադրական գոտիների, գիտական պուրակների կառուցումը տնտեսական համագործակցության ընդլայնման և համապատասխան տնտեսական գոտիների ստեղծման նոր հարթակ է դառնում: Եթե դրան ավելացվի հումանիտար և մշակութային ոլորտում համագործակցությունն ու «մետաքսի ճանապարհով շրջագայության» և տուրիզմի ընդլայնումը, ապա Սի Ծինպինի առաջ քաշած «Մետաքսի ճանապարհի տնտեսական միջանցքի» նախատիպը կձևավորվի<sup>39</sup>:

Ուշագրավն այն է, որ հոկտեմբերի վերջին Ղրղզստանի Հանրապետության նախագահին առընթեր կառավարման ակադեմիայում Չինաստանի միջազգային հարաբերությունների ինստիտուտի (ՉՄՀԻ) փոխնախագահ Ժուան Յզունցզեն (Жуань Цзунцзэ) դասախոսություն կարդաց «Չինաստանի արտաքին քաղաքականությունը» թեմայով: Չին փորձագետի ելույթում հետաքրքիր թեզ հնչեց, որի համաձայն՝ վերջինս **Ղրղզստանին հրավիրում էր Մաքսային միության փոխարեն միանալ չինական «Մետաքսի ճանապարհին»**՝ միաժամանակ չբացառելով, որ Ռուսաստանը ևս կարող է ժամանակի հետ նման ընտրու-

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 1:

<sup>39</sup> Что принесет с собой «экономический коридор Шелкового пути»? russian.china.org.cn, 14.10.2013, с. 2 [http://russian.china.org.cn/exclusive/txt/2013-10/14/content\\_30289396.htm](http://russian.china.org.cn/exclusive/txt/2013-10/14/content_30289396.htm).

թյուն կատարել, քանի որ «Մաքսային միությունն ընդամենը երեք երկրներ են, և դեռ հայտնի չէ, թե ով կորոշի դառնալ նրա անդամ»<sup>40</sup>:

Փաստորեն վերոնշյալ հրապարակումներում չին հայտնի փորձագետների կողմից փորձ է արվում հիմնավորել չինական «Մետաքսի ճանապարհի» նախագծի առավելությունը ռուսական և ամերիկյան մրցակիցների հանդեպ: Չին փորձագետների կարծիքով եթե Ռուսաստանի նախաձեռնած եվրասիական ինտեգրացիան հետխորհրդային տարածքում Մոսկվայի տիրապետող դերի պահպանման նպատակ է հետապնդում, ապա չինական ռազմավարությունը բարեկամական և փոխշահավետ համագործակցություն է ենթադրում Ռուսաստանի «Եվրասիական տնտեսական միության» և չինակենտրոն «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» ուղղությամբ: Ինչ վերաբերվում է ամերիկյան ծրագրի էությանը, ապա վերջինիս համաձայն՝ «ԱՄՆ-ը ցանկանում է կառավարել Աֆղանստանը, սակայն փող ներդնել չի ցանկանում»:

***Սի Ծինայինի միջինասիական շրջագայությունն իբրև «Մե-  
տաքսի ճանապարհի տնտեսական գոտու» վերաբերյալ չինա-  
կան հայեցակարգի իրականացմանն ուղղված գործնական քայլ***

Կարելի է ենթադրել, որ չինական «Մետաքսի ճանապարհի» հայեցակարգի շրջանակներում իրականացվեց նաև ԿԱ-ի երկրներով այս տարվա սեպտեմբերին ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինայինի շրջագայությունը, այսինքն՝ նախքան «Женьминь жибао»-ում վերոհիշյալ հոդվածների հրապարակումը: Որոշ փորձագետների համաձայն՝ ՇՀԿ-ի բիշքեքյան գագաթնաժողովը հաստատեց նաև ժամանակակից աշխարհակարգում ռեգիոնալիզմի ուժեղացող միտումների վրա հենվող միավորումների կամ դաշինքների կենսունակությունը<sup>41</sup>:

Չին առաջնորդը եղավ ԿԱ-ի չորս երկրում, որոնց հետ 60 մլրդ ԱՄՆ դոլարի պայմանագիր կնքեց<sup>42</sup>: Նշենք, որ 2012 թ. դրությամբ ՉԺՀ-ի և ԿԱ-ի երկրների միջև առևտրափոխանակությունը կազմել է 46 մլրդ ԱՄՆ դոլար: Ներկայումս Չինաստանը Ղազախստանի և Թուրքմենստանի համար առաջին,

<sup>40</sup> Терентьев Святослав, Куда ведёт «Великий шёлковый путь»? Парламентская газета, 07.11.2013. <http://www.pnp.ru/column/detail/41015>

<sup>41</sup> Противоречия евразийства России и китайской экспансии, նշվ. աշխ., էջ 1:

<sup>42</sup> Терентьев Святослав, նշվ. աշխ., էջ 1:

իսկ Ուզբեկստանի և Ղրղզստանի համար առևտրային երկրորդ գործընկերն է<sup>43</sup>:

Ըստ ՉՄՀ-ի փորձագետ Ժուան Յզունցզեի (Жуань Цзунцзэ)՝ ՉԺՀ-ի արտաքին քաղաքականությունը թելադրվում է զարգացման ներքին ծրագրերով, և ներկայումս Չինաստանի առջև հանդիպում է գլոբալ երկու մարտահրավեր՝ անվտանգությունն ու տնտեսական զարգացումը: Այս առումով Չինաստանն ակտիվորեն մշակում է «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» հայեցակարգը, որը պետք է միավորի Երկնատակը ԿԱ-ի հետ<sup>44</sup>:

Թուրքմենստանում չին առաջնորդի հետ հանդիպման ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվեց գազի թեմային: Սի Ծինպինը մասնակցեց «Գալկինիշ» նոր նավթահորի գործարկման արարողությանը<sup>45</sup>, որը, ըստ բրիտանական Gaffney, Cline & Associates ընկերության գնահատականների՝ աշխարհի գազի պաշարների ծավալով երկրորդ տեղն է զբաղեցնում (26 տրլն խոր. մետր): Անհրաժեշտ համարվեց արագ ավարտին հասցնել «Չինաստան-Կենտրոնական Ասիա» **С** գաղամուղի և հնարավորինս արագ սկսել **D** գաղամուղի շինարարությունը՝ 2016 թ. ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով<sup>46</sup>: Թուրքմենստանը 10 մլրդ ԱՄՆ դոլար է հատկացրել նավթահորի շահագործման համար, որից առավել քան ութ մլրդ դոլարը Չինաստանը ներկայացրել է իբրև նպատակային վարկ: Չին-թուրքմենական պայմանավորվածության համաձայն՝ Չինաստան կատարվող գազի առաքումները պետք է տարեկան կազմեն 65 մլրդ խոր. մետր<sup>47</sup>:

Սեպտեմբերի 7-ին Աստանայում՝ Նազարբան համալսարանում, իր ելույթի խոսքում Սի Ծինպինն առաջարկեց ստեղծել

<sup>43</sup> Концепция создания «экономического коридора Великого шелкового пути» послужит движущей силой для комплексного сотрудничества в Евразии, Жэньминь Жибао, 14.09.2013. <http://russian.people.com.cn/31518/8400415.html>

<sup>44</sup> Терентьев Святослав, նշվ. աշխ., էջ 1:

<sup>45</sup> Си Цзиньпин и Г. Бердымухамедов присутствовали на церемонии пуска первой очереди газового месторождения «Галкыныш», Жэньминь Жибао, 09.04.2013. [http://russian.news.cn/dossiers/2013-09/04/c\\_132691995\\_2.htm](http://russian.news.cn/dossiers/2013-09/04/c_132691995_2.htm)

<sup>46</sup> Политические лидеры Китая и Туркменистана изложили свои предложения по поводу дальнейшего двустороннего сотрудничества, Жэньминь Жибао, 04.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8389051.html>; Китай и Туркменистан развивают энергетическое сотрудничество, Жэньминь Жибао, 04.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8388475.html>

<sup>47</sup> Глава КНР откроет самое крупное газовое месторождение Туркмении, Жэньминь Жибао, 03.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8387133.html>



«Մեծ մետաքսի ճանապարհի տնտեսական գոտին»<sup>48</sup>: Սի Ծինպինի առաջարկին Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը պատասխանել է, որ սկզբում կարելի է կառուցել «Տեղեկատվական մետաքսի ճանապարհ»<sup>49</sup>:

Ղազախստան կատարած այցի ընթացքում շեշտը դրվեց նավթային համագործակցության խնդիրների վրա: Այցելության արդյունքում «China National Petroleum Company»-ն (CNPC) 5 մլրդ ԱՄՆ դոլարով ստացավ կոնսորցիումի բաժնետոմսերի 8 %-ը, որը շահագործում է Կասպից ծովում Կաշագանի նավթահորը: Նախատեսվեց կառուցել նաև նոր նավթավերամշակման գործարան և կրկնապատկել Ղազախստանը Չինաստանի հետ կապող նավթամուղի թողունակությունը<sup>50</sup>: Նշենք, որ Չինաստանը Ղազախստանի հետ համակողմանի ռազմավարական համագործակցության պայմանագիր է ստորագրել դեռևս 2011 թ.<sup>51</sup>: Չինաստանը Ղազախստանի խոշորագույն առևտրային գործընկերն է, իսկ Ղազախստանն ԱՊՀ-ում չինական ներդրումների խոշորագույն օբյեկտը: Երկու երկրների համատեղ ջանքերով կառուցվել է Չինաստանի պատմության մեջ առաջին ցամաքային նավթամուղը: ՉԺՀ-ի օգնությամբ Ղազախստանն իր անկախության ձեռքբերումից հետո կառուցել է առաջին խոշոր ծավալի ջերմաէլեկտրակայանը<sup>52</sup>:

Տաշքենդում Սի Ծինպինը և Ուզբեկստանի նախագահ Իսլամ Բարիդովը ստորագրեցին «Ռազմավարական երկկողմ համագործակցության հետագա զարգացման և խորացման վերաբերյալ համատեղ հռչակագիրը»: Ուզբեկստանում նավթամուղերի կառուցմանը զուգահեռ ծրագրավորվում է Չինաստանը տարածաշրջանի երկրներին կապող երկաթգիծ կառուցել: Ենթադրվում է, որ 2017 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կավելանա մինչև 5 մլրդ դոլար<sup>53</sup>:

<sup>48</sup> Си Цзиньпин предложил создать экономическую зону «Великого шелкового пути», Жэньминь Жибао, 07.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8392919.html>

<sup>49</sup> Что принесет с собой «экономический коридор Шелкового пути»? նշվ. աշխ., էջ 1:

<sup>50</sup> Терентьев Святослав, նշվ. աշխ., էջ 1:

<sup>51</sup> Китайско-казахстанские двусторонние отношения характеризуются близостью, стабильностью, скоростью и прагматичностью - Лэ Юйчэн, Жэньминь Жибао, 06.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8391649.html>

<sup>52</sup> Си Цзиньпин и Нурсултан Назарбаев присутствовали на учредительном собрании Китайско-казахстанского совета предпринимателей, Жэньминь Жибао, 08.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8393042.html>

<sup>53</sup> Китай и Узбекистан намерены приложить усилия к диверсификации экономического сотрудничества, Жэньминь Жибао, 10.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8393042.html>

Բիշքեքում Սի Ծինպինը և Ղրղզստանի նախագահ Ալմազ բեկ Աթամբաևը սեպտեմբերի 11-ին համատեղ հռչակագիր ստորագրեցին՝ հայտարարելով չին-ղրղզական հարաբերությունները ռազմավարական մակարդակի բարձրացման մասին<sup>54</sup>: Փաստաթղթում ընդգծվում է «տրանսպորտի և հաղորդակցությունների ոլորտում համագործակցության ամրապնդման ձգտումը՝ համատեղ ուսումնասիրելով ավտոմոբիլային, երկաթուղային և ենթակառուցվածքային այլ նախագծերի տեղաշարժման հնարավորությունը», «Օ2-Սարի-Տաշ-Իրկեշտամ» և «Բիշքեք-Տորուգարտ» ավտոմոբիլային ճանապարհների վերակառուցման նախագծերի ավարտման անհրաժեշտությունը, ինչպես նաև «Հյուսիս-Հարավ» ճանապարհի շինարարությունը<sup>55</sup>:

Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռախմոնի հետ ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինպինը հանդիպեց սեպտեմբերի 12-ին Բիշքեքում ՇՀԿ-ի գազաթնաժողովին: Երկու երկրների միջև ռազմավարական համագործակցություն հաստատվել էր դեռևս այս տարվա մայիսին: Տաջիկստանի նախագահի հետ բանակցությունների ժամանակ գերազանցապես քննարկվեցին տրանսպորտային նախագծերը, ընդգծվեց «Չինաստան-Կենտրոնական Ասիա» գազամուղի շինարարական աշխատանքների արագացման անհրաժեշտությունը<sup>56</sup>:

Ընդհանուր առմամբ չին առաջնորդի այցի ընթացքում ենթակառուցվածքային նախագծերի առաջնահերթության շեշտումը ակնհայտ էր, և կասկած չկա, որ Չինաստանն արդեն սկսել է կյանքի կոչել իր «Մեծ մետաքսի ճանապարհի» հայեցակարգը: Հարցը միայն այն է, թե արդյոք Չինաստանը կսահմանափակվի «տնտեսական գոտու» շինարարությամբ, թե Պեկինի կողմից շոայլորեն իրականացվող ֆինանսական

com.cn/31519/8394819.html

<sup>54</sup> Президент Кыргызстана А. Атамбаев: Кыргызстан должен сохранять и приумножать добрососедские отношения с великим соседом – Китаем, Жэньминь Жибао, 10.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8395287.html>; Си Цзиньпин и Алмазбек Атамбаев объявили о повышении уровня китаец-кыргызских отношений до стратегического партнерства, Жэньминь Жибао, 12.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8397451.html>

<sup>55</sup> Китай и Кыргызстан подписали Совместную декларацию об установлении отношений стратегического партнерства, Жэньминь Жибао, 11.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8397483.html>

<sup>56</sup> Состоялась встреча председателя КНР Си Цзиньпина и президента Таджикистана Эмомали Рахмона, Жэньминь Жибао, 13.09.2013. <http://russian.people.com.cn/31519/8398925.html>

ներդրումները, տնտեսական հարթակ ստեղծելով, վաղ թե ուշ կհանգեցնեն հետխորհրդային հանրապետությունների, մասնավորապես ԿԱ-ի նկատմամբ ՉԺՀ-ի քաղաքական ազդեցության աճին:

Ուշագրավն այն է, որ թեև չին փորձագետները քիչ հավանական են համարում «Մեծ մետաքսի ճանապարհի» հայեցակարգի կյանքի կոչման գործում երկրորդական դեր խաղալու հարցում Ռուսաստանի համաձայնվելու հնարավորությունը, այնուհանդերձ գտնում են, որ տարածաշրջանում չին-ռուսական շահերը խաչաձևում են: Եվ քանի որ *ռուսական տնտեսությունը գիջում է չինականին*, ուստի կարելի է ակնկալել կողմերի միջև փոխհարաբերությունների հնարավորության շուրջ բանակցությունների հերթական շարքի<sup>57</sup>:

<sup>57</sup> Перспективы стратегического проекта Владимира Путина по созданию Евразийского союза могут сильно измениться, նշվ. աշխ., էջ 1:

## ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԱԶԳԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

### *Ներածություն*

Խորհրդային Միության փլուզումից հետո Ղազախստանը մուտք գործեց բազմաբևեռ կերպափոխումների ժամանակաշրջան: 1991 թ. դեկտեմբերի 16-ին Ղազախստանի անկախության հռչակմամբ կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Նորսուլթան Նազարբանը դարձավ նորանկախ երկրի առաջին նախագահը: Ղազախստանը անկախությունից ի վեր կանգնած է հետխորհրդային քաղաքակրթական մարտահրավերներին համարժեք պատասխան տալու խնդրականի առջև: Այս առումով Նազարբանի վարչակարգի քաղաքականությունը շրջադարձային նշանակություն ունեցավ ղազախական ժողովրդի ինքնագիտակցության և իբրև ազգ կայացման գործում: Նազարբանը Ղազախստանը տարավ վարչական, քաղաքական, հասարակական և տնտեսական լայնածավալ վերափոխումների ուղիներով, որի լեգիտիմությունը ձևավորվում է նրա խարիզմայի շուրջ, և այդ վերափոխումների վերջնական նպատակը հետխորհրդային ազգաշինության կարևոր գործընթացն էր:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել Ղազախստանի հետխորհրդային ազգաշինությանը վերաբերող մի քանի առանցքային առանձնահատկություններ: Նազարբանի նորարարական քաղաքականությունները ներկայացվում են իբրև քաղաքակրթական ճիգ՝ ուղղված հետխորհրդային բոլոր հասարակություններում առկա և արդի հիմնախնդրի լուծմանը՝ հետխորհրդային ազգային ինքնության ձևավորմանը: Նպատակին հետամուտ՝ անդրադարձ է կատարվում Նազարբանի վարչակարգի լեզվական,

քաղաքաշինական՝ մասնավորապես մայրաքաղաքի տեղափոխման, և պետական խորհրդանիշների վերափոխման քաղաքականություններին: Հատկանշական է մահմեդական Ղազախստանի բազմաէթնիկ հասարակության պարագայում ազգային և համաղազախստանյան ինքնության նոր կերպի ուրվագծման քաղաքականությունները: Միջէթնիկ ներդաշնակցային հարաբերությունների ղազախստանյան հարացույցի ինքնատիպությունը նրա՝ արմատական դրսևորումներից հրաժարվելու և տարբեր էթնիկ ընդհանրությունները մեկ հավաքական գաղափարի շուրջ համախմբելու իրողության մեջ է: Ուստի, այս համապատկերում փորձ է կատարվում ներկայացնել Նազարբաևի վարչակարգի քաղաքականության քաղաքացիական և էթնիկ ազգաշինական առանձնահատկությունները: Հասկանալու համար միջէթնիկ ներդաշնակցային համակեցության յուրահատկություններն անհրաժեշտ է դիտարկման ենթարկել պետական կառույցների՝ էթնիկ հարաբերությունների կառավարման և վերահսկման մեխանիզմները: Միջէթնիկ խաղաղ գոյակցության գործում առանցքային դեր ունի *Ղազախստանի ժողովրդի ասամբլեան*, որի կարևորագույն գործառույթներից է առկա էթնիկ խմբերի շրջանում մշակութային և քաղաքական տարածությունների տրամադրմամբ բավարարվածության ձեռքբերման իրողությունը:

### ***Լեզվաքաղաքականություն ազգային ինքնության ճանապարհին***

Նազարբաևի վարչակարգն ըստ էության կանգնած է քիչ թե շատ բարդ քաղաքական և հասարակական որոշումների առջև. ազգաշինության գործընթացի համատեքստում կառուցել միջհասարակական ներդաշնակցային հարաբերություններ 130 էթնիկ և 17 կրոնական խմբերի միջև<sup>1</sup>: Այս համապատկերում ազգաշինության առաջին իսկ օրերից բազմաէթնիկ հասարակությունում անհրաժեշտություն առաջացավ փոխարինել *ռուսները՝ առաջինը հավասարների մեջ* ընկալումը *ղազախները՝ առաջինը հավասարների մեջ* ընկալումով: Սրա համար նախ և առաջ անհրաժեշտ էր ղազախական ազգային ինքնության ձևավորման համապատկերում ստեղծել ընդհանրական ինքնության զգացողություն: Վերջինիս իրագործման ճանապարհին անհրաժեշտ էր լուծել ղազախներեն լեզվի հանրայնացման խնդիրը: Անգամ ան-

<sup>1</sup> Address by the President of the Republic of Kazakhstan, Leader of the Nation, N. Nazarbayev, Strategy “Kazakhstan-2050”: new political course of the established state, (2012).

կախության հաստատումից ի վեր ղազախների մեծ մասը խոսում էր և նախընտրում էր խոսել ռուսերեն: Ռուսերեն լեզվի ժառանգությունը ստեղծեց մի շարք հասարաքաղաքական դժվարություններ Ղազախստանի ազգաշինության գործընթացների համար: Լեզվամտածողությունը կարևոր է ինքնության և ձևավորման, և այլակերպման գործերում: Ինչպես Լյուդվիգ Վիտգենշտեյնն է նկատում *սոցիումը լեզվական խաղերի* միջավայր է<sup>2</sup>, և ղազախական հասարակության մի շարք հասարակական, մշակութային և քաղաքական հիմնախնդիրների պատասխանը ընկած է տվյալ սոցիումի լեզվական ուսումնասիրությունների հիմքում: Խորհրդային լեզվաքաղաքականության հետևանքով ռուսերեն լեզվին շնորհվել էր քաղաքային և քաղաքական լեզվի կարգավիճակ, այնինչ ղազախերենը մարգինալացվելով վերածվել էր կենցաղային լեզվի: Ռուսերենը՝ իբրև «կայսերական» լեզու, դարձել էր ղազախական հասարակության ստորադասման կարևոր ցուցիչներից մեկը: Ասվածի լավագույն ապացույցը Կենտրոնական Ասիայի հասարակություններում գոյություն ունեցող «մանկուրտիզմի»<sup>3</sup> մասին դիսկուրսն էր: Այս համատեքստում, օգտագործելով հետզադուբատիրական տեսության շրջանակը, մենք կարող ենք համեմատական զուգահեռներ տանել Կենտրոնական Ասիայի «մանկուրտիզմի» և աֆրիկյան «սևականության» միջև: Երկու պարագայում էլ այդ եզրերը որպես ինքնութենական բացասականություն ներկայացնող իրողություններ ներմուծվել են գաղութարարների կողմից: Նոր ինքնության ձևավորման համար անհրաժեշտ է դառնում արմատախիլ անել այն բոլոր բացասականությունները, որոնց պատճառով հասարակության անդամները

<sup>2</sup> Sեն Gordon Hunnings. *The World and Language in Wittgenstein's Philosophy*, Suny Press, 1988:

<sup>3</sup> Այս եզրը սկզբնապես օգտագործվել է որդրգ գրող Չինգիզ Այթմատովի՝ «Եվ դարից երկար ձգվում է օրը» աշխատությունում՝ ներկայացնելու համար սեփական պատմության, լեզվական և մշակութային ինքնությունը կորցրած անհատին: «Մանկուրտիզմ» եզրը մեծապես օգտագործվում է ղազախ ազգայնա-կանների կողմից՝ մատնանշելու համար իրենց մշակույթն ու լեզուն կորցրած ռուսախոս ղազախներին: Sեն Aitmatov, C., *The Day Lasts More Than a Hundred Years*, Bloomington, Indiana. USA and Canada: Routledge, 1998, p. 50-51 և Rashmi Doraiswamy, *The Post-Soviet Condition: Chingiz Aitmatov in the '90s*, Aakar Books, 2005: Միջինասիական հասարակություններում ղազախական մանկուրտիզմի մասին դիսկուրսն այն մասին էր, որ ԽՍՀՄ-ը շեշտը դնում էր հենց Ղազախստանին տեխնոլոգիապես զինելու վրա: Ստեղծելով բազմաէթնիկ և նոր տեխնոլոգիաներով հարուստ երկիր՝ խորհրդային իշխանությունը Ղազախստանին վերածեց Կենտրոնական Ասիայի առաջատար պետության՝ հակակշռելու համար տարածաշրջանի՝ մահմեդական քիչ թե շատ միատար պետություններին, հատկապես Ուզբեկստանին:

րը մեկը մյուսի հանդեպ կարող են դրսևորել գերազանցության զգացողություն: Այս առումով, «մանկուրտիզմը» կարող է վերածվել նոր ինքնության ձևավորման դրական աղբյուրի: Ֆրանսիացի պոստգաղութատիրության տեսության ներկայացուցիչ էմե Սեզերը իր՝ «Դիսկուրս գաղութատիրության մասին» գրքում գտնում է, որ սևերը եվրոկենտրոնական եզրի՝ նեգրի ապակառուցմամբ կարող են իրենք իրենց համար ստեղծել նոր ինքնություն<sup>4</sup>: Այսպիսով՝ մանկուրտիզմը ղազախական ազգային ինքնության ձևավորման յուրահատուկ մեխանիզմի է վերածվում, քանզի ապակառուցելով ռուսականությունը՝ ղազախները կփոշիացնեն հասարակության մեջ գոյություն ունեցող մաքուր և ռուսականացված ղազախ հասկացությունները: Փաստորեն կարելի է եզրակացնել, որ ինքնությունը բնական իրողություն չէ, այլ ինչպես Անդերսոնն է նկատում՝ պատումների միջոցով ստեղծված «երևակայական հանրոյթ»<sup>5</sup>: Ինքնությունները ստեղծվում և վերարտադրվում են պատումների (ազգային) և դիսկուրսների միջոցով, սակայն և՛ ցարական, և՛ խորհրդային ռեժիմների ժամանակ ղազախական ինքնության ձևավորման ընթացքում ղազախական ազգային պատումները դուրս էին մնացել ինքնութենական գործընթացներից: Այդուամենայնիվ, ազգային պատումների և ղազախերենի օգնությամբ ազգային ինքնության կառուցումը թերևս բավականին երկար տևողության նախագիծ է, որի կարևորությունը ընկալվում է ներկայիս նախագահ Նազարբաևի վարչակարգի կողմից:

Նազարբաևի լեզվական քաղաքականությունը՝ ղազախերենի հանրայնացումը, ղազախալեզու կրթությունը և այբուբենի կիրիլիցայից լատինականի անցումը<sup>6</sup>, համարվում է այդ երկար տևողությամբ մեծ նախաձեռնության սկիզբը: Հաշվի առնելով ղազախերենի լուսանցքային կարգավիճակը և ղազախականացման խնդրի արդիականությունը՝ Նազարբաևը «Ղազախստան 2050» ռազմավարությունում, ղազախական լեզուն համարելով ազգի հոգևոր կորիզ, շեշտը դնում է ղազախերենի քաղաքային միջավայր տեղափոխելու, գիտական բառապաշարի հարստացման և միջէթնիկ հաղոր-

<sup>4</sup> Aimé Ce'saire, Discourse on colonialism, J. Pinkham, Trans., New York: Monthly Review Press, 2000.

<sup>5</sup> Benedict Anderson, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London: Verso Press, 2006, pp. 208-209.

<sup>6</sup> Donnacha Ó Beacháin, Rob Kevlihan, State-building, Identity and Nationalism in Kazakhstan: Some Preliminary Thoughts. Centre for International Studies, Dublin City University, Working Papers in International Studies, No. 1. 2011.

դակցության լեզվի վերածելու վրա<sup>7</sup>: Ղազախերեն լեզվի զարգացումն իբրև էթնիկ ինքնության խորհրդանիշ վկայում է պետության ղազախականացման գործընթացների մեկնարկի մասին<sup>8</sup>: Ըստ էության՝ Ղազախստանը կանգնած է *ղազախական* ինքնության նոր հարացույցի մշակման մարտահրավերների առջև: Մարտահրավերներ, որոնց համարժեք պատասխանը կլիներ պաշտոնական գրագրությունը, պետական կառույցների աշխատանքային լեզուն, հանրային և համալսարանական կրթական գործընթացներն ազգային լեզվով կազմակերպելու հնարավորությունը:

Չնայած անկախության առաջին տարիներին Նազարբաևի՝ ռուսերենի խթանմանը միտված քաղաքականությանը՝ նա ամենաբարձր մակարդակով աջակցում էր հասարակությունում ղազախերենի տարածման առաքելությամբ զբաղվող «*Ղազախ Թըրլը Քոդամ*» (*Ղազախական լեզվի հասարակություն*) ոչ պաշտոնական կազմակերպությանը<sup>9</sup>: Այս կազմակերպության անդամները, լինելով մտավորականներ և հանրային դեմքեր, շեշտում էին ղազախերենի պետական կարգավիճակի շնորհմամբ ռուսական գաղութային լեզվի հակազդման կարևորությունը<sup>10</sup>: Բնականաբար ճարտասանական (ռիտորիկայի) տիրույթում նման դրսևորումը խթանիչ ազդեցություն ուներ ղազախականացման գաղափարների վրա: Սակայն հաշվի առնելով ռուսականության կարգավիճակով պայմանավորված հնարավոր ներհասարակական անկայունության ռիսկերը՝ Ղազախստանի իշխանությունը 1995 թ. ընդունեց նոր սահմանադրություն, որի 7.2 հոդվածը սահմանում է. «*Կառավարական կազմակերպություններում և տեղական ինքնակառավարման մարմիններում պետական լեզվին՝ ղազախերենին հավասար պաշտոնապես օգտագործել ռուսերենը*»<sup>11</sup>: Հատկանշական է, որ լեզվի մասին քաղաքացիական դիսկուրսն արդիական է նաև ժամանակակից Ղազախստանում:

<sup>7</sup> «Ղազախստան 2050» ռազմավարություն, Ղազախստանի նախագահ, ազգի առաջնորդ Ն. Ա. Նազարբաևի ուղերձը Ղազախստանի ժողովրդին, Ղազախստանի Հանրապետության դեսպանություն Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2013, էջ 73-74:

<sup>8</sup> Özgecan Kesici, “The Dilemma in the Nation-Building Process: The Kazakh or Kazakhstani Nation?” *Journal on Ethnopolitics and Minority Issues in Europe*, Vol 10, No 1, 2011, pp. 31-58.

<sup>9</sup> William Fierman, “Kazakh Language and Prospects for its role in Kazakh “Groupness”, *AbImperio*, Vol. 2, 2005, p. 410.

<sup>10</sup> Pauline J. *Luong*, *The Transformation of Central Asia: States and Societies from Soviet Rule to Independence*, Cornell University Press, 2004, p. 128.

<sup>11</sup> Section I, Article 7, point 2, Constitution of the Republic of Kazakhstan. Available at: <http://www.akorda.kz/en/category/konstituciya> [accessed: 6 March 2013].



«Ղազախստան 2050» ռազմավարությունում նախագահ Նազարբաևը, ընդգծելով պետական լեզվի զարգացման անհրաժեշտությունը, միաժամանակ նշում է ռուսական լեզվի կարևորությունը. «Ոչ ոք չի կարող ուրանալ այն փաստը, որ դարերի ընթացքում Ղազախստանի քաղաքացիները ռուսաց լեզվի միջոցով են ձեռք բերել հավելյալ գիտելիքներ, ընդլայնել իրենց հեռանկարներն ու ներքին և արտաքին հաղորդակցությունները»<sup>12</sup>: Այնուամենայնիվ, չնայած երկլեզվության մասին դիսկուրսին, ղազախստանյան կրթական, մեդիայի և օրենքի ոլորտներում առկա են միալեզվության հստակ միտումներ:

Արդի Ղազախստանի լեզվաքաղաքականության հիմնասյուներից մեկը համարվում է այբուբենի կիրիլիցայից լատինականի անցումը: Չնայած այն հանգամանքին, որ լատինական այբուբենի անցման որոշումը պաշտոնապես կայացվել է դեռևս 1996 թ.<sup>13</sup>, այն քաղաքական օրակարգ մտավ միայն 2006 թ. նախագահ Նազարբաևի անմիջական միջնորդությամբ<sup>14</sup>: Պետք է ընդունել նաև, որ այբուբենի լատինականացումը համարվում է ղազախստանի լեզվի արդիականացման գործընթացի միայն մի փոքր հատվածը: Խնդիրը կայանում է նրանում, որ ղազախերենը, օրինակ, ի տարբերություն հայերենի, խորհրդային տարիներին չի կարողացել կայանալ իբրև գիտության լեզու: Այժմյան Ղազախստանի հանրակրթական և համալսարանական դասագրքերի այն հատվածը, որը վերաբերում է բնական գիտություններին, գրված է և դասավանդվում է ռուսերենով: Դպրոցական դասագրքերը՝ առաջնային սոցիալականացման կարևորագույն գործիքները, մեծավ մասամբ գրված լինելով ռուսերեն, խոչընդոտում են ազգային լեզվամտածողության խթանմանը: Ասվածին լավագույն օրինակ կարող է ծառայել ղազախական լեզվի դպրոցական դասագրքերից մեկը, որի շապիկին կարելի է կարդալ հետևյալ վերնագիրը. «*Учимся и учим говорить по казахски*» (սովորում ենք և սովորեցնում ենք խոսել խազախերեն)<sup>15</sup>:

Այդուամենայնիվ, եթե դիտարկենք Ղազախստանի լեզվա-

<sup>12</sup> Address by the President of the Republic of Kazakhstan, Leader of the Nation, N. Nazarbayev, “Strategy Kazakhstan 2050”: new political course of the established state, 2012.

<sup>13</sup> Jacob M. Landau, Barbara Kellner-Heinkele, Politics of Language in the Ex-Soviet Muslim States: Azerbaijan, Uzbekistan, Kazakhstan, Kyrgyzstan, Turkmenistan and Tajikistan, C. Hurst & Co. Publishers, 2001, p. 141.

<sup>14</sup> Leila Tanayeva, “The Politics of the Latin alphabet in Kazakhstan”, The Annual of Language & Politics and Politics of Identity, 2007, p. 79.

<sup>15</sup> Jacob M. Landau, Barbara Kellner-Heinkele, Op. cit., p. 200.

քաղաքականության մեդաֆորային կողմը, ապա կարելի է եզրահանգումներ կատարել ղազախական ընտրախավի էթնիկ ձգտումների վերաբերյալ: Բազմաէթնիկ հասարակությունում ղազախական լեզվին առաջնահերթություն ընձեռելով՝ ղազախական ընտրախավը փորձում է ընդգծել իրենց էթնիկության պաշտոնական և բացառիկ կարգավիճակը: Ըստ էության, Նազարբաևի լեզվական քաղաքականությունը երկրի ներքին քաղաքականության արտացոլումն է: Նազարբաևի ձեռնարկած և՛ ժողովրդագրական, և՛ լեզվական քաղաքականությունները ուղղակիորեն կապված են միմյանց հետ:

### **Աստանա: Հեթիորհրդային նորարարության մոդել**

Ղազախստանը, ի տարբերություն նախկին խորհրդային հանրապետությունների, մայրաքաղաքի ճարտարապետությունում ազգային խորհրդանիշերի և արտեֆակնտերի ներդրման փոխարեն որոշեց տեղափոխել և կառուցել նոր մայրաքաղաք: Մայրաքաղաքի կառուցումը մի կողմից՝ ազգային ինքնությանը քաղաքային կերպ հաղորդելու, մյուս կողմից՝ երկրի ժողովրդագրական մարտահրավերներին պատասխանելու նախաձեռնություն էր:

Համաձայն Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաքի մասին 1995 թ. սեպտեմբերի 15-ի նախագահական որոշման՝ պետական հանձնաժողով է կազմվում՝ կազմակերպելու բարձրագույն և կենտրոնական իշխանական մարմինների տեղափոխումը Ակմոլա քաղաք (Աստանա)<sup>16</sup>: Արդեն 1998 թ. նախագահական մեկ այլ որոշմամբ Ակմոլան հայտարարվեց Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք և վերանվանվեց Աստանա<sup>17</sup>: Չնայած Նազարբաևը իր ինքնակենսագրական աշխատությունում մայրաքաղաքը տեղափոխելու 32 պատճառ է նշում<sup>18</sup>, որոշումը անկասկած ուներ էթնիկ ազգաշինական ենթատեքստ: Նպատակը հետևյալն է. մայրաքաղաքը տեղափոխել երկրի ռուսախոս ժողովուրդներով բնակեցված հյուսիս և խթանել ղազախախոս գյուղաբնակ բնակչության ներգաղթը դեպի նոր կառուցվող մայրաքաղաք: Ս. Հանթինգտոնի սահմանմամբ «քաղաքի մշակույթը բաց է, աշխարհիկ և արդի, այնինչ գյուղական մշակույթը փակ է, կրոնական և ավանդական»<sup>19</sup>: Այսինքն՝ Աստանա քաղաքը

<sup>16</sup> Norsultan Nazarbaev, *The Kazakhstan Way*, Stacey International, 2008, p. 303.

<sup>17</sup> Norsultan Nazarbaev, նշվ. աշխ., էջ 310:

<sup>18</sup> Norsultan Nazarbaev, նշվ. աշխ., էջ 299:

<sup>19</sup> Samuel Huntington, *Political Order in Changing Societies*, London: Yale Univ. Press, 2006, p. 72.

մշակութային տարածություն է ապահովելու տարիներ շարունակ փակ մշակութային տարածքում գտնված ղազախական լեզվի և մշակույթի նորովի դրսևորման համար: Աստանա քաղաքը իրենից ներկայացնում է սոցիալական ուտոպիայի մի միջավայր, որտեղ *անցյալի* ավանդական արքեպիսկոպոսի և ազգային խորհրդանշանները *ներկայի* արդիական ճարտարապետական լուծումների մեջ դառնում են Ղազախստանի երևակայական *ապագայի* տեսլականը: Նման ճարտարապետական կառույցներից են ղազախստանյան քոչվորական յուրտ հիշեցնող կառույցը՝ «*Խան Շապիր*» ժամանցային կենտրոնը, քաղաքի գլխավոր խորհրդանիշը՝ «*Քայտերեկ աշտարակը*», որը ներկայացնում է թյուրքական առասպելաբանության կենաց ծառը, և նրա վրա գտնվող երջանկության սրբազան թռչնի՝ Սամրուկի հյուսած բույնը, մյուսը Ղազախստանի հանդուրժողականության սիմվոլն է՝ «*Խաղաղության և համերաշխության պալատը*»<sup>20</sup>:

Նշենք նաև, որ ժողովրդագրական խնդիր լուծելով՝ կարճ տևողության ժամանակաշրջանում ազգային նոր ինքնություն և քաղաքաբնակ հասարակություն դժվար է ձևավորել, քանի որ այն պետք է անցնի այնպիսի գիտակարգերի միջով, ինչպիսիք են երաժշտությունը, գրականությունը, կինոմատոգրաֆիան, թատրոնը և կրթությունը: Այսպիսով՝ Աստանայի կառուցումը հիմնված է արևմտյան մոդելի վրա, որը, լինելով քաղաքակրթական, նորարարական, ինչպես նաև ուտոպիկ նախաձեռնություն, Ղազախստանին հնարավորություն է տալու գտնվելու աշխարհի հետ հարաբերությունների մեջ:

### **Պեպական խորհրդանիշերի դերը**

Բազմամշակութայնության պայմաններում Ղազախստանը միաժամանակ ընդգծում է ն էթնիկ, ն քաղաքացիական ազգաշինության գործընթացների կարևորությունը: Հարկավ, քաղաքական, տնտեսական և մշակութային յուրաքանչյուր հաջող քաղաքականության համար կարևոր է երկրի ներսում ունենալ կայուն իրավիճակ: Իսկ այդ կայունության համար կարևոր է երկրի տարբեր հասարակական խմբերի միջև ձևավորել կոլեկտիվ ինքնության զգացողություն: Այս երևույթը հատկապես առանձ-

<sup>20</sup> Ազգաշինության գործընթացում քաղաքային ճարտարապետական միջավայրի ազդեցության մասին առավել խորքային պատկերացում կազմելու համար տես Narek Mkrtchyan, “Astana: A New Post Soviet Text”, International Journal of Humanities and Social Science, Vol. 4 No., 2014:

նահատուկ է Ղազախստանում, երբ էթնո-ազգայնության և բազմաէթնիկության պայմաններում վարչակարգը փորձում է ձևավորել համադազախստանյան ինքնության զգացողություն: Սույն նպատակին հետամուտ Նազարբաևը ձեռնամուխ եղավ մի շարք համակարգային վերափոխումների, որոնք ուղեկցվեցին կառավարման նոր ինստիտուտների ձևավորումից մինչև պետական խորհրդանիշների՝ հիմնի, դրոշի և գերբի փոփոխությամբ:

Ղազախստանի դրոշի կապույտ գույնը լինելով թյուրքական մշակույթի խորհրդանիշներից մեկը, ազգային ոսկեգույն զարդանախշերի, արևի և տափաստանային ճախրող արծվի խորհրդանիշերի հետ միասին միտում ունեն դազախների շրջանում ձևավորել նոր էթնիկ ինքնագիտակցություն: Նշենք նաև, որ Ղազախստանում դրոշի կապույտ գույնը պաշտոնապես ներկայացվում է իբրև խաղաղության, բարգավաճման և միության խորհրդանիշ<sup>21</sup>՝ խթանելու համար էթնիկ խմբերի միջև ներդաշնակ համակեցության գաղափարը: Չնայած Ղազախստանի դրոշի գույնի միջոցով *թյուրքական* ինքնության նոր հարացուցի ձևավորումը փոքր-ինչ ուտոպիական է, այնուամենայնիվ նրա խորհրդանշական ուժն իրատեսական է: Եթե դրոշի պարագայում էթնիկությունն ուներ հստակ շեշտադրումներ, ապա պետական մյուս խորհրդանիշը՝ հիմնը, հնարավորություն է տալիս տարբեր էթնիկ խմբերի շրջանում ձևավորել համադազախստանյան ազգային և քաղաքացիական ինքնություն: Անկախության հաստատումից ի վեր Ղազախստանում ընդունվել է երկու պետական հիմներ՝ 1992 թ. և 2006 թ.: Առաջին ընդունված հիմնը առավել նման էր հետզադրության տեքստի, որտեղ անցյալի դժվարությունների հաղթահարման և «*պայծառ սպասալի*» տեսլականը կարևոր էթնիկ տարբերակիչի (*մարկերի*)՝ մայրենի լեզվի ժառանգության մեջ է<sup>22</sup>: Սակայն հաշվի առնելով Ղազախստանի բազմաէթնիկ հասարակության շրջանում պետական խորհրդանիշների նկատմամբ ինքնանույնացման գործընթացների անհրաժեշտությունը՝ 2006 թ. Զ. Նաժիմեդենովի «*Իմ Ղազախստանը*» երգի հիման վրա Նազարբաևը խմբագրեց և ընդունեց նոր հիմնը<sup>23</sup>: Լրամշակված տարբերակում արդեն նկատելի են

<sup>21</sup> Официальный Сайт Президента Республики Казахстан, Государственный Флаг Республики Казахстан, [http://www.akorda.kz/en/category/kazakhstan\\_flag](http://www.akorda.kz/en/category/kazakhstan_flag)

<sup>22</sup> Kazakhstan Discovery, <<Kazakhstan National Anthem, 1992-2006>>, [http://www.kazakhstan.discovery.com/kazakhstan-national-anthem.html#.UXKiya1\\_s9A](http://www.kazakhstan.discovery.com/kazakhstan-national-anthem.html#.UXKiya1_s9A) (հոկտեմբեր, 10, 2013):

<sup>23</sup> Официальный Сайт Президента Республики Казахстан, Государственный Гимн Республики Казахстан [http://www.akorda.kz/ru/category/kazakhstan\\_gimn](http://www.akorda.kz/ru/category/kazakhstan_gimn)

քաղաքացիական արտահայտություններ, ինչպես, օրինակ, «*իմ ղազախական ժողովուրդը ամուր*» կամ «*իմ հայրենիք, իմ Ղազախստան*»<sup>24</sup>: Այս հիմնը միտված է միավորելու բոլոր էթնիկ խմբերին *իրենց հայրենիքի՝ Ղազախստանի հովանու ներքո*:

Ինչպես Էրիկ Հոբսբաումն է նկատում՝ պետական գերբը համարվում է այն առանցքային խորհրդանիշներից մեկը, որը վկայում է պետության անկախությունն ու ինքնիշխանությունը<sup>25</sup>: Ղազախստանի պետական գերբը, ըստ էության, պետական կարևորագույն գաղափարների արտացոլում է: Գերբն ունի կապույտով և ոսկեգօծ արևի ճառագայթներով պարուրված շրջանի տեսք՝ *շարինակի* (ղազախական ավանդական յուրտի գմբեթ) պատկերով, որի աջ և ձախ կողմերում դիֆչադական առասպելաբանության թևավոր ձիերն են<sup>26</sup>: Կարելի է պնդել, որ գերբի պարագայում հստակորեն ներառված են ղազախական ազգային և ավանդական սիմվոլներ: Հարկավ, սա հոգեբանական բավարարվածության հնարավորություն էր տալու տիտղոսային ազգի ներկայացուցիչներին: Սակայն նշենք նաև, որ գերբում ակնհայտ է ռուսականության առկայությունը. գերբի ստորին հատվածում սլավոնական կիրիլիցա այբուբենով գրված է Ղազախստան բառը<sup>27</sup>: Ի մի բերելով ղազախական պետական խորհրդանիշների քննարկումը՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ առկա է ոչ միայն ազգային, այլև քաղաքացիական խորհրդանիշների ներմուծման միտում, որոնց ազդեցությամբ ռուսը, գերմանացին կամ կորեացին կինքնանույնացվեն Ղազախստան պետության հետ:

### **Միջէթնիկ հարաբերությունների կառավարումը**

Պետք է փաստել, որ քաղաքացիական ազգաշինության գործընթացը չէր սահմանափակվում բացառապես խորհրդան-

<sup>24</sup> Государственный Гимн Республики Казахстан.

<sup>25</sup> Eric Hobsbawum, *The Invention of Tradition*. Cambridge University Press, 1992, p. 11.

<sup>26</sup> Официальный Сайт Президента Республики Казахстан, Государственный Герб Республики Казахстан, [http://www.akorda.kz/ru/category/kazakhstan\\_gerb](http://www.akorda.kz/ru/category/kazakhstan_gerb) Ի հավելումն, նշենք, որ ձիաբուծությունը համարվում էր Կենտրոնական Ասիայի ժողովուրդների հասարակական, տնտեսական և քրջվորական մշակույթի անբաժան մասը, որի արդյունքում ձին վերածվեց իբրև շքեղության, ազնվականության և հզորության խորհրդանիշի:

Stu Alibiy *Mukhamejanov*, *Natural life and the manmade habitat in Central Asia*, In *History Of Civilizations Of Central Asia*, Vol. 4, Part 2, Bosworth, C. E., Asimov, M. S. (Eds.), UNESCO publishing, 2003, p. 286-287.

<sup>27</sup> Официальный Сайт Президента Республики Казахстан, Государственный Герб Республики Казахстан, [http://www.akorda.kz/ru/category/kazakhstan\\_gerb](http://www.akorda.kz/ru/category/kazakhstan_gerb)

շային տիրույթում: Էթնիկ խմբերի միջև ներհանրութենական համաձայնության ձեռք բերման գործում հստակ ներգործություն ունեն պետական կառույցները, մասնավորապես՝ էթնիկ հարաբերությունների կառավարման մշակութային և քաղաքական կառույցները, հանրային կառավարման կառույցը, բանակը և նախագահի խարիզմատիկ իշխանությունը: Բազմաէթնիկ Ղազախստանի պարագայում ազգաշինության գաղափարը էականորեն տարբերվում է Նորմանի սահմանաց ազգաշինության կատեգորիայից՝ *ազգաշինություն՝ ի հաշիվ էթնիկ փոքրամասնությունների ազգայնացման*<sup>28</sup>: Ղազախստանի կողմից պետական կառույցների օգտագործումը բնավ նպատակ չունի ապակառուցելու էթնիկ խմբերի էթնոմշակութային և լեզվական պատկանելությունները, այլև ընդհակառակը՝ խրախուսել և վերահսկել նրանց ներկայացուցչությունը տվյալ կառույցներում: Ի տարբերություն նախկին խորհրդային այնպիսի պետությունների՝ ինչպիսիք են Լատվիան և Էստոնիան՝ Ղազախստանը չսահմանափակեց ոչ տիտղոսային էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիության իրավունքները և ավելին՝ նրանց համար հիմնեց կառավարության կողմից հովանավորվող նոր ազգային-մշակութային կենտրոններ:

1995 թ. միջէթնիկ հարաբերությունների կարգավորման և էթնիկ խմբերի շահերի արտահայտման նպատակով ստեղծվեց Ղազախստանի *ժողովուրդների* ասամբլեան<sup>29</sup>: Վերջինս, լինելով նախագահին առընթեր խորհրդակցական կառույց, լիազորված է Մեջլիսում՝ խորհրդարանի ստորին պալատում ներկայացնելու 9-հոգանոց պատգամավորական խումբ, որը զբաղվելու է էթնիկ խմբերի իրավունքների պաշտպանության, մշակույթի և պատմության զարգացման հարցերով<sup>30</sup>: Վերջիններիս իրականացման ճանապարհին գործուն մասնակցությունն են ցուցաբերում մշակութային, հասարակական և կրթական կառույցները. հատկապես ասամբլեայի հովանու ներքո գործող մոտ 500 ազգային-մշակութային կենտրոնները, որոնք էթնիկ խմբերի հնարավորություններ են ընձեռում հրատարակելու իրենց լրատվական և մշակութային պարբերականները, հեռարձակելու իրենց

<sup>28</sup> Wayne Norman, *Negotiating Nationalism: Nation-building, Federalism, and Secession in the Multinational State*, New York: Oxford Univ. Press, 2006, p. 39.

<sup>29</sup> Ассамблея Народа Казахстана, Деятельность Ассамблеи Народа Казахстана, <http://www.Assembly.Kz/50/>, (հոկտեմբեր, 2, 2013):

<sup>30</sup> Ariel Cohen, “Kazakhstan: The Road to Independence, Energy Policy and the Birth of a Nation”, Singapore: Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2008, p. 24.

լեզուներով ռադիո և հեռուստատեսային հաղորդաշարեր<sup>31</sup>: Շնորհիվ ասամբլեայի՝ Ղազախստանում գործում է 6 ազգային թատրոն (ղազախական, ռուսական, կորեական, ուզբեկական, գերմանական և ույգուրական), ինչպես նաև 100 ազգային և 170 կիրականօրյա դպրոց, որտեղ դասավանդում են 23 այլազգի լեզուներով<sup>32</sup>: Անշուշտ, այս քաղաքականության ենթատեքստում կարելի է գտնել նաև ռուսական լեզվական գերիշխանության հակազդման միտումներ: Նազարբանի վարչակարգի քաղաքականության կենտրոնում է տարբեր էթնոսների ներկայացուցիչների շրջանում ղազախստանցու տեսակի ձևավորումը: Համաձայն Նազարբանի 2002 թ. Ղազախստանի ժողովուրդների ասամբլեայի նոր ռազմավարության հրամանագրի՝ ասամբլեան պարտավորվում է իր գործողությունները կենտրոնացնել ղազախական ինքնության, հայրենասիրության, մշակույթի, պատմության, պատմական ժառանգության և ազգային ավանդույթների հետագա զարգացմամբ բազմաէթնիկ հասարակության հոգևոր միասնության շուրջ<sup>33</sup>:

Վերջինիս էր միտված նաև 2007 թ. սահմանադրական վերափոխումները, որոնց արդյունքում Ղազախստանի *ժողովուրդների* ասամբլեան վերանվանվեց Ղազախստանի *ժողովրդի* ասամբլեա<sup>34</sup>: Այսպիսով՝ քաղաքացիական ազգաշինության համապատկերում Ղազախստանը տարբեր էթնիկ խմբերի համար՝ մեդիա, մշակութային, հասարակական և քաղաքական ոլորտներում ներկայանալու հնարավորությունն է ստեղծում:

### **Ամփոփում**

Անկախությունից ի վեր Ղազախստանը թևակոխեց ազգային ինքնագիտակցության զարգացման նոր շրջափուլ: Սա, ըստ էության, ղազախների համար քաղաքակրթական նոր տեսակի և ազգային ինքնության նոր հարացույցի ձևավորման ժամանակաշրջան է, որի շարժիչ ուժը նախագահ Նազարբանի խարիզ-

<sup>31</sup> *Исмаил Агакишиев*, Казахстан на пути к межнациональной гармонии, Ярослав Бутаков, Дмитрий Верхотуров, Путь к лидерству: социально-экономические и политические реформы в Казахстане, Бослен, 2007, стр. 124.

<sup>32</sup> Official Internet-Resource of Almaty City Mayoralty, “Summary of Information on Kazakhstan People Assembly”, [http://www.almaty.kz/page.php?page\\_id=1698&lang=2](http://www.almaty.kz/page.php?page_id=1698&lang=2) (մարտ, 22, 2013):

<sup>33</sup> Տե՛ս Ariel Cohen, նշված աշխ., էջ 24:

<sup>34</sup> Ustina Markus, DidarKassymova, Zhanat Kundakbayeva, Historical Dictionary of Kazakhstan, Scarecrow Press, 2012, p. 35.

մատիկ իշխանությունն է: Այսպիսով՝ Նազարբակի վարչակարգի լեզվական, էթնոմշակութային և նորարարական քաղաքականությունները, հիմնված լինելով էթնիկ և քաղաքացիական ազգաշինության սկզբունքների վրա, նպատակ ունեն հաղթահարելու ռուսականության ժառանգության դրսևորումները և ձևավորելու նոր հետխորհրդային ազգային ինքնություն: Այս գործընթացում անհրաժեշտություն է դառնում ազգային լեզվի զարգացումն ու հանրայնացումը: Պետք է ընդունել, որ ռուսերենի արմատները բավականին խորն են, և Նազարբակի լեզվաքաղաքականությունը միայն կարելի է համարել երկար տևողության *«գերիշխանական հակազդման պայքարի»* սկիզբը, որը դեռևս պարզ չէ, թե ինչպես կավարտվի:



## ՌԱԶՄԱՎԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային գլոբալ զարգացումների համատեքստում ակնհայտ է, որ այլևս աշխարհի ուժային հավասարակշռությունը Արևմուտքից տեղափոխվում է Եվրասիա, ռազմական ուժի տեսանկյունից փոխվում է մոտ 100-ամյա իրողությունը: Անգամ *սառը պատերազմի* տարիներին Վարշավայի պայմանագրի պետությունները միասին վերցրած ռազմական ներուժով զիջում էին ՆԱՏՕ-ին, հատկապես ռազմավարական սպառազինությունների հզորությամբ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մոտ 15 տարի այդ առավելությունը, չնայած արևմտյան շատ երկրների շեշտակի կրճատումներին, ակնհայտորեն պատկանում էր դեռ Արևմուտքին: Այդ ամենը, իհարկե, նախ և առաջ գերազանցապես իրականացվում էր թիվ մեկ գերտերության՝ ԱՄՆ-ի միջոցով, որն իր ռազմատեխնիկական գերազանցությամբ հետ է թողնում մնացած երկրներին: Այսօր, սակայն, ռազմական ոլորտում կան հետաքրքիր զարգացումներ:

Վերջին 5-10 տարիների ընթացքում բավական մեծացել է ասիական այն երկրների թիվը, որոնք ակտիվորեն մեծացնում են իրենց զինված ուժերը, սպառազինության քանակը, արդիականացնում դրանք, ձեռք բերում ավելի ու ավելի գերժամանակակից տեխնիկական միջոցներ: Բացի ՌԴ-ից և արդեն գերտերություններ դարձած Չինաստանից ու Հնդկաստանից՝ աշխարհի հզորագույն բանակների շարքին են պատկանում Պակիստանի, Հարավային Կորեայի, Ինդոնեզիայի, Իրանի, Թուրքիայի բանակները: Օրինակ՝ վերջինի զինված ուժերի կատարելագործման ու արդիականացման միտումներն աննախադեպ են!՝ Հզորանում են արաբական երկրների բա-

<sup>1</sup> Մանրամասն տես Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, Եր., 2010:

նակները, որոնք մշտապես նոր ու թանկարժեք զինտեխնիկա են գնում: Ներկայում Արաբական Միացյալ Էմիրությունների բանակը ամենաշատ նորագույն հարձակողական հեռահար զինատեսակներ ձեռք բերող բանակն է Եվրասիա մայրցամաքում: Բավական է միայն նշել, որ վերջին պայմանագրերից մեկով ԱՄԷ-ն ԱՄՆ-ից ձեռք է բերում ավելի քան 11 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ ավելի քան 2000 միավոր օպերատիվ հեռահարության խոցման միջոցներ և բազում այլ սպառազինություն<sup>2</sup>: Մինչ այդ կնքվել էր նաև հակահրթիռային համալիրների մեծ քանակի ձեռքբերման պայմանագիր, որն ամենամեծն էր աշխարհում: Աշխարհի ավանդական հզորների շարքին է պատկանում Իսրայելի ՑԱՀԱԼԸ, որը, չնայած որոշակի կրճատումներին, ձեռք է բերում նորանոր հարձակողական գերժամանակակից միջոցներ և այլ սպառազինություն: Այս առումով հատկապես հետաքրքիր են երբեմնի բանակ չունեցող Ճապոնիայի քայլերը: Այս պահին արդեն Ճապոնիայի նավատորմն իր ներուժով երկրորդն է Խաղաղ օվկիանոսում և իր հիմնական նավատեսակների որակով կարող է մրցել աշխարհում ընդհանրապես երկրորդը լինելու համար: Ճապոնական նավատորմն ունի գերժամանակակից ականակիր դասի ավելի շատ նավեր, որոնք, ի դեպ, այսօր դառնում են վերջրյա հիմնական նավերը ողջ աշխարհում, քան բրիտանական և ֆրանսիական նավատորմերը<sup>3</sup>: Ճապոնական նավերը նաև զինված են ավելի ժամանակակից հարձակողական և պաշտպանողական հրթիռային համակարգերով, քան թվարկված երկրները: Ծագող արևի երկիրն իր նավատորմում մեծ տեղ է հատկացրել նաև դեսանտային նավերին, ինչպես նաև որոշակի թռչող սարքեր կրողներին: Ճապոնական նավատորմն այսօր արդեն իր հնարավորություններով գերազանցում է ռուսական նավատորմին Խաղաղ օվկիանոսում: Հզոր են նաև Ճապոնիայի այլ զորատեսակներ, որոնց ներուժը ևս արագ է աճում: Ճապոնիան վերջինն է աշխարհում ստեղծել նոր սերնդի հրասայլ, հստակ քայլեր է ձեռնարկում նոր սերնդի կործանիչների ստեղծման կամ դրանց մեծաքանակ ձեռքբերման

<sup>2</sup> Саудовская Аравия и ОАЭ заказали американского оружия на 11 миллиардов долларов, <http://lenta.ru/news/2013/10/16/weaps/>.

<sup>3</sup> Вооружённые силы зарубежных стран. Япония // “Зарубежное военное обозрение”, № 7, 2007, С. 95, <http://www.mod.go.jp/msdf/formal/english/index.html>

գործում<sup>4</sup>: Ճապոնական նավատորմն ի վիճակի է իրակա-նացնելու նաև մարտավարական ծովային ու օդային համա-տեղված դեսանտ և նման գործում լայնորեն համագործակցում է ամերիկյան ուժերի հետ ու մարզվում: Այս առումով նշանա-կալի է վարչապետ Սինձո Աբեյի ներդրումը<sup>5</sup>: 2014 թ. արդեն Ճապոնիայի ռազմական ծախսերն աշխարհում վեցերորդ տե-ղից կարող են հասնել միանգամից չորրորդ տեղը: Ներկայումս Ճապոնիան ստեղծում է սեփական ծովային հետևակ, որոնք սպառազինված են լինելու ամենաժամանակակից ամերիկյան սարքավորումներով, նրանք արդեն ունենին հիանալի ծովային փոխադրամիջոցներ այս գործի համար: Ինչպես հայտնի է, այս զորատեսակը հիմնականում հարձակողական խնդիրներ է լուծում: Այս քայլի դեմ արդեն բողոքել է Չինաստանը: Նմա-նատիպ բանակով Ճապոնիան կարող է ոչ միայն վարել ժա-մանակակից պատերազմներ, այլև կունենա հզոր ու ճկուն քաղաքական գործիք:

Ասիական նշված երկրների զգալի մասը ներկայում ակտի-վորեն զարգացնում է սեփական ռազմաարդյունաբերական հա-մալիրը: Եթե 1990–ականների կեսերին անգամ Չինաստանը և Հնդկաստանը զինված էին բավական հին զինտեխնիկայով և մեծապես կախված էին արտասահմանյան սպառազինության ներկրումներից, ապա այսօր իրավիճակը կտրուկ փոխվել է: Այդ և նշված այլ երկրներ հիմնականում զինվել են ժամանակակից զենքերով, իսկ ինքնուրույնության մակարդակը կտրուկ բարձ-րացվել է ու շարունակում է բարձրանալ: Սպառազինման հարցը նախ և առաջ վերաբերում է սովորական զենքերին՝ հրթիռներ, ինքնաթիռներ, հրասայլեր, հրետանի և այլն:

Խաղաղության խնդիրների ուսումնասիրության Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների համաձայն՝ 2005-2009 թթ. աշխարհում վաճառված մարտական ինքնաթիռների քանակն ավելացել է. դրանք հիմնականում թանկարժեք չոր-րորդ սերնդի կործանիչներ են, որոնց դերակատարությունը օր օրի մեծանում է: Ինքնաթիռների հիմնական գնորդներն են Հնդկաստանը, ԱՄԷ-ն և Իսրայելը: Նման ինքնաթիռներ ար-տադրում են 11 պետություններ, իսկ որպես գնորդներ հանդես են գալիս 44 երկրներ: Այս վաճառքները կազմում են նույն ժամա-

<sup>4</sup> Fisher R., Japanese Jr. , Military Technology Advances, [http://www.strategycenter.net/research/pubID.173/pub\\_detail.asp](http://www.strategycenter.net/research/pubID.173/pub_detail.asp)

<sup>5</sup> Борзяков С., Япония готовится к войне, <http://www.vz.ru/world/2013/12/18/665038.html>

նակահատվածում վաճառված համաշխարհային ողջ սպառազինության մեկ երրորդը: Սրանք հիմնականում բազմագործառույթ ինքնաթիռներ են, որոնք լուծում են և պաշտպանողական, և հարձակողական խնդիրներ: Նշված ինքնաթիռները, որոնք, ի դեպ, հիմնականում կործանիչներ են, նախ հարձակման միջոցներ են, ավելին, դրանք որպես օդային հարձակման միջոցներ (ՕՀՄ-ներ) շատ ճկուն են և կարող են գործել բավական մեծ խորությունների վրա: Փաստը հիմնավորվում է նրանով, որ ՕՀՄ-ներն իրենց գերակայող դերն են գտնում նաև ասիական երկրներում: Արևմտյան այս մոտեցումն իր հաստատուն տեղն է գտնում նաև ասիական զարգացող երկրներում, այսինքն՝ ասիական բանակները ևս դառնում են ժամանակակից՝ իրենց սպառազինությամբ և կազմակերպչական շատ լուծումներով: Մինչև վերջերս ժամանակակից կործանիչներ հիմնականում ստեղծում էր երկու եվրոպական և մեկ ասիական երկիր, իսկ այժմ իրադրությունը փոխվում է: Այս պատվավոր ակումբին են միանում նաև Չինաստանը և Հնդկաստանը, Ճապոնիան վաղուց է պատրաստ ստեղծել նման ինքնաթիռ, եթե չլինեն ամերիկյան սահմանափակումները և ճնշումները: ԱՄՆ-ը վաղուց է ամեն գնով Ճապոնիային գերծ պահում սեփական կործանիչ արտադրելու հնարավորությունից: Նման ինքնաթիռներ են գնում նաև Ինդոնեզիան, Մալայզիան և այլն: Դրանց դիմաց ժամանակակից կործանիչներով զինվում են նաև Ավստրալիան, Ճապոնիան, Հարավային Կորեան և այլն: Այդ երկրները հավակնում են գնել ամերիկյան հինգերորդ սերնդի նորագույն կործանիչներ, ինչով տարածաշրջանում սպառազինությունների մրցավազքն ավելի կթեժանա:

Հետաքրքիր կարգավիճակ է նաև տարատեսակ հրթիռների առումով: Բազմատեսակ հրթիռների ստեղծումն արդեն չի զարմացնում շատերին՝ հակատանկային հրթիռներ, տարբեր հրետանահրթիռային համալիրներ, մարտավարական հրթիռներ և այլն: Իրանը, Իսրայելը, Պակիստանը, Հյուսիսային Կորեան, Չինաստանը, Հնդկաստանը արդեն ստեղծել են ավելի քան 2000 կմ հեռահարությամբ բալիստիկ հրթիռներ և աշխատում են ավելի հզորների ու հեռահարների ստեղծման ուղղությամբ, իսկ շատ այլ երկրներ արդեն ունեն մինչև 1000 կմ հեռահարությամբ հրթիռներ<sup>6</sup>: Այդ հրթիռային տեխնոլոգիա-

<sup>6</sup> “Iran-bound Mystery Freighter Carried Parts for Missiles”, The Washington Times, 16, July 1992, p. A3; Gertz, Bill, “U.S.: Iran Fired Ballistic Missile,” The Washington Times, 24, May 1991, p. A5.

ները շատ ժամանակ մեկը մյուսին կրկնում են, սակայն տարածվում են մեծ արագությամբ: Եվրասիայում է տեղակայված մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռների համաշխարհային քանակի մոտ 65-70 տոկոսը, համաշխարհային զրահատեխնիկայի 70-75 տոկոսը, օդուժի 50-60 տոկոսը և այլն<sup>7</sup>: Այդ քանակությունը օր օրի ավելի ժամանակակից և արդիական է դառնում:

Ասիական այդ երկրներից շատերը իրար հետ որոշակի տարածքային խնդիրներ ունեն, կան սառեցված հակամարտություններ, ինչպես, օրինակ, չին-թայվանյան հակամարտությունը, Չինաստանի, Ճապոնիայի և Թայվանի հակամարտությունը Սենկակու կղզիների համար և այլն: Երկու Կորեաների հիմնախնդիրը, Հնդկաստանի և Պակիստանի հակամարտությունը, Կուրիլյան կղզիների հարցը, բազում արևելյան չլուծված հիմնախնդիրներ: Ակնհայտ է ամերիկա-ավստրալական նոր, խորացված ռազմական համագործակցությունը, որը նախ և առաջ ուղղված է չինական գերակայության դեմ<sup>8</sup>: Այդ համագործակցությանը միանալու միտումներ կան նաև Ֆիլիպինների կողմից: Սրանք դեռ բոլորը չեն, կան նաև լարման այլ օջախներ: Այսինքն՝ տարածաշրջանում մեծ կուտակում և լարում կառաջանա, որի նախապատրաստությունը բոլոր կողմերից ընթանում է մեծ տեմպերով:

Չինաստանի օրեցօր աճող տնտեսական ներուժը, բնականաբար, ուղղակի ազդեցություն ունի ռազմական բաղադրիչի վրա, և պատահական չէ, որ մասնագիտական քննարկումները ողողված են այն հարցերով, թե Չինաստանը, երբ կարող է ուղղակի հակադրվել ամերիկյան ռազմական գերակայությանը: Շատ փորձագետներ փորձում են ուղղակի կռահել, թե այդ արդեն փաստացի կյանք ունեցող հակամարտությունը որ ուղղությամբ կընթանա, ինչ թատերաբեմերում կարող են առճակատվել կամ մրցակցել ամերիկյան և չինական ռազմական մեքենաները: Հիմնական ուղղություն նշվում է Համաշխարհային օվկիանոսը: Այլ մասնագետներ խոսում են չինական ռազմական մեքենայի գործածության այլ ուղղության մասին՝ դեպի հյուսիս կամ հյուսիս-արևմուտք՝ ՌԴ, Ղազախստան, չի բացառվում նաև դեպի հարավ-արմուտք ուղղությունը՝ Հնդկաստան:

<sup>7</sup> Հաշվարկը կատարված է The Military Balance 2011, 2012 և Зарубежное военное обозрение 2010, 2011, 2012 հրատարակությունների տվյալներով:

<sup>8</sup> Игнатченко И., Антикитайская стратегия Вашингтона. Баррель нефти правит миром. 2012-04-27/ [http://nvo.ng.ru/wars/2012-04-27/10\\_antichina.html](http://nvo.ng.ru/wars/2012-04-27/10_antichina.html)

Չինաստանը զարգացնում է իր ՁՈՒ-ի բոլոր զորատեսակները, և շեշտադրումը կատարվում է ցամաքային զորքերի վրա, որոնք, բնականաբար, նախատեսված են հենց վերջին երկրների հետ հնարավոր պատերազմների համար:

Նշված ուղղությունները կախված են չինական ազդեցության տարածման, արտաքին քաղաքականության և տնտեսական շատ հարցերից: Չինական տնտեսության սնուցումը հիմնականում կախված է ոչ արևելյան ուղղությունից, սակայն մյուս կողմից էլ՝ այդ սնուցմանը խանգարող հիմնական գործոնը Չինաստանից արևելք գտնվող առայժմ աշխարհի ամենահզոր տերությունն է՝ ԱՄՆ-ը: Մասնագիտական շրջանակներում գնալով ավելի շատ է խոսվում այն մասին, որ ԱՄՆ-ը իր հիմնական ուշադրությունը սևեռում է խաղաղօվկիանոսյան ավազանին և ասիական թատերաբեմին:

Չինաստանը տարածքային խնդիրներ ունի իր հարևանների՝ Հնդկաստանի, ՌԴ-ի, Վիետնամի և այլ երկրների հետ: Չինաստանը սպառազինվում և բանակը կատարելագործում է արագ տեմպերով: Չինված ուժերի թվաքանակը մոտավորապես 2-3 մլն է, ռազմական բյուջեն պաշտոնապես ավելի քան 70 մլրդ դոլար է, ինչն ավելի է ռուսական ռազմական բյուջեից: Ոմանք պնդում են, որ անգամ այս թիվը շատ քիչ է իրականից: Մեծ տեղ է հատկացվում մինչև 1000 կմ հեռահարությամբ գործող հրթիռներին, որոնց քանակն արդեն հասնում է 1000-ի: Ներկայում չինական բանակի սպառազինության մեջ են մտնում ժամանակակից հրետանային միջոցներ, աշխարհի ամենահեռահար և հզոր համազարկային հրթիռային համալիրները՝ «WS-2D», նոր հետևակի մարտական մեքենաներ ու աշխարհում ամենավերջինը ստեղծված հրասայլերից մեկը՝ «Type 99», որոնց քանակը շատ արագ աճում է՝ հասնելով մոտ 2000 միավորի<sup>9</sup>: Դրանցից բացի՝ կան նաև մոտ 6000 ավելի հին նմուշներ: Դրանով ներկայումս չինական բանակը ամենաշատ հրասայլեր ունեցող բանակն է աշխարհում: Արագորեն աճում է բոլոր զինատեսակների քանակը, որոնցից շատերը համարվում են նորագույն<sup>10</sup>:

Չինական բանակն արագորեն կատարելագործում է իր դեկավարման համակարգերը, համառորեն փորձում է ստեղծել

<sup>9</sup> Храмчихин А., Феномен китайской военной мощи пока еще недооценен, [http://nvo.ng.ru/forces/2011-12-30/1\\_china.html](http://nvo.ng.ru/forces/2011-12-30/1_china.html)

<sup>10</sup> Annual report to congress. Military and Security Developments Involving the People's Republic of China 2013, Office of the Secretary of Defense. Washington, p. 29-45.

սեփական արբանյակային ղեկավարման համակարգ: Երկրի կենտրոնական շրջանում տեղակայված 38-րդ բանակը ժամանակակից զինտեխնիկայի, կառավարման և այլ ցուցանիշներով համարվում է չինական բանակի «հայելին»: Չինական բանակի հետ շփված մասնագետների պնդմամբ<sup>11</sup> այս բանակի բարձրակարգ հրետանին իր կրակի դիպուկությամբ զիջում է միայն ամերիկյան բանակին<sup>12</sup>:

Չինաստանի օպերատիվ մարտավարական հրթիռային ուժերը, որոնք ամենամեծն են աշխարհում և իրենց քանակով աշխարհում երկրորդ ծովային հետևակը, կենտրոնացված են Թայվանի սահմանի մոտակայքում, այդ հատվածում է նաև օդուժի ժամանակակից միավորների զգալի մասը: Չորքերի այս տեսակն ու դասավորությունը նշված քանակով փաստում է կղզի ներխուժելու չինական բանակի անթաքույց ցանկությանը, որը նրանք երբեք չեն թաքցրել և միշտ նշել են, որ միայն ամերիկյան գործոնն է նրանց խանգարում այդ գործում: Չորքերի տեղաբաշխման և դրանցում որոշակի ուժերի կենտրոնացման առումով ամենահետաքրքիրը, սակայն, այն է, որ իր յոթ ռազմական օկրուգներից երեքն են հատկապես հագեցած հրասայլերով, հրետանիով և մոտոհետևակով: Ռուսական սահմաններին հարակից այդ երեք ռազմական շրջաններում տեղակայված են չինական բանակի ինը տանկային դիվիզիաներից հինգը և մեկ բրիգադ՝ վեցը մեքենայացված, այսինքն՝ առավել շարժունակ, դիվիզիաներից չորսը: Հիմնական պահեստային ուժերը ևս այս հատվածի համար են<sup>13</sup>: Այսինքն՝ այդ բոլոր ուժերը, որոնք փաստորեն ողջ չինական բանակի հիմնական միջուկն են, նախատեսված են գործելու ՌԴ-ի և Ղազախստանի դեմ: Այդ օկրուգներում են նաև հիմնականում նոր հրասայլերը: Հնդկական սահմանի մոտ են տեղակայված ամենաթույլ ուժերը, որոնց կազմում չկա անգամ տանկային դիվիզիա, որն ինչ-որ առումով բնական է, քանի որ միջակայքում բարձրադիր լեռնային գոտի է: Հնդկաստանի հատվածի զորքերը նաև կատարելագործվելու առումով են զիջում մնացած հատվածի զորքերին: Ահա այսպիսին է չինական

<sup>11</sup> Այդ թվում նաև տողերի հեղինակի անձնական շփումները չինական բանակի սպաների հետ:

<sup>12</sup> Эксперт: Китай нападёт на Россию с вероятностью 95%-99% Это лишь вопрос времени, <http://www.nr2.ru/moskow/331405.html>

<sup>13</sup> Храмухин А., Пекинский тигр изготовился к прыжку. Китай не собирается обороняться. Он собирается нападать, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1245988620>

բանակի հիմնական ուժերի դասավորությունը: Չինական բանակի զորատեսակների զարգացումից և դասավորությունից կարող ենք եզրակացնել, որ ներկայումս չինական բանակի երկու նախնական խնդիրներն են.

- ցամաքային մասսայական ներխուժում դեպի Սիբիր և /կամ Ղազախստան,
- հզոր հրթիռային հարվածից հետո ծովային դեսանտ դեպի Թայվան:

Սրանով հանդերձ չինական բանակն ավելի մեծ ու հատկապես ճկուն աշխարհաքաղաքական գործիքի վերածվելու հնարավորություն քիչ ունի: Վաղուց հայտնի է, որ նման գործիք կարող են դառնալ միայն օդուժը և նավատորմը, մանավանդ երկուսի միացությունը, այսինքն՝ ավիակիրներն իրենց աջակցող խմբերով: Ահա այստեղ է, որ չինական բանակաշինության մոդելը, որը ռազմավարական առումով տիպիկ խորհրդային է, այնքան էլ արդյունավետ չի կարող լինել:

Չինական ռազմաօդային ուժերն (ՌՕՈՒ) իրենց սպառազինության մեջ ունեն մոտ 2000 մարտական ինքնաթիռ, որից միայն 500-ը կարելի է համարել ժամանակակից: Դրանք հիմնականում ռուսական «Cy-27»-«Cy-30» շարքի մեքենաներն են, ինչպես նաև մասամբ այդպիսին կարելի է համարել չինական արտադրության «J-10» կործանիչները, որոնք ստեղծված են խորհրդային և իսրայելական տեխնոլոգիաների սինթեզմամբ: Չինական կործանիչները կարող են տեղակայվել միայն ավամերձ օդանավակայաններում, քանի որ խորքում ավելի առաջավոր ռազմաբազաներ չկան, հետո էլ սահմանափակ են օդում վերալիցքավորվելու հնարավորությունները: Չինական օդուժն ունի օդային լիցքավորման տեխնիկական խնդիրներ, ժամանակակից ղեկավարվող հրթիռների և էլեկտրոնային կառավարման համակարգերի կիրառության խնդիրներ: Վերջնական չի հաջողվում գործարկել սեփական արբանյակային կառավարման համակարգը:

Չինական նավատորմը ներկայումս հիմնականում ավամերձ շրջաններում գործելու ներուժ ունեցող զորատեսակ է: Նախ նավատորմը չունի ավիակիրներ. միակ, դեռ ոչ լիովին գործարկվող օրինակը դեռ բավարար չէ<sup>14</sup>, բազմաքանակ սուզանավերը հիմնականում հին են և որպես ռազմաքաղաքական գործիքներ

<sup>14</sup> Annual report to congress. Military and Security Developments Involving the People's Republic of China 2013, Office of the Secretary of Defense. Washington, p. 29-45.



այնքան էլ արդյունավետ չեն: Վերջոյա նավերից չինական նավատորմը հիմնականում սպառազինված է ականակիրներով և ֆրեգատներով՝ ընդհանուր մոտ 100 միավոր<sup>15</sup>: Դրանցից մի քանիսն են, որ ունեն նավարկության մեծ հնարավորություն և համեմատաբար նոր սպառազինություն: Հիմնական նավերի միայն 20-25 տոկոսը կարող է գործել հեռավոր ծովերում և օվկիանոսներում: Բոլոր տեսակի նավերի նույնքան տոկոսն է համարվում նորակառուց: Չինական նավատորմը խորհրդային նավատորմի նմանությամբ հիմնականում սպառազինված է հականավային սպառազինությամբ, իսկ հակասուզանավային և ՀՕՊ հնարավորությունները սահմանափակ են:

Չինական ողջ ծովային ավերը 500-700 կմ հեռավորությամբ փակված են կորեական, ճապոնական, ֆիլիպինյան և այլ կղզիների ու թերակղզիների շարքով՝ Օկինավա, Բատան, Թայվան և այլն: Նախ դրանցից գրեթե բոլորի վրա կան ամերիկյան ռազմաբազաներ, սակայն դրանք դեռ ամբողջը չեն: Սրանք, այսպես կոչված, առաջին օղակող սահմանն են չինական նավատորմի ազատ գործողությունների համար: 500-1000 կմ հեռավորության վրա կա ևս մեկ օղակ՝ Կարոլինյան, Մարիանյան և այլ կղզիախմբերը, որոնց վրա տեղակայված են ավելի մեծ ամերիկյան ռազմաբազաներ: Ահա թե ինչու չինական բանակն ակտիվ արտաքին քաղաքականության գործիք չի կարող լինել՝ բացի անմիջական ցամաքային հարևանների վրա ազդելուց: Ներկայում, երբ օրեցօր լարվում են Ճապոնիայի և Չինաստանի հարաբերությունները, Արևելաչինական ծովում նավատորմերի բախման հարցն ավելի արդիական է դառնում: Ահա այստեղ է, որ համեմատելով ճապոնական և չինական նավատորմերը՝ ակնհայտորեն կարելի է ասել, որ վերջինս շեշտակի գիջում է ճապոնական նավատորմին: Ճապոնական նավատորմի հիմքը կազմում են բազմատեսակ գերժամանակակից ամերիկյան և սեփական արտադրության ականակիր նավերը, որոնք զինվածության մակարդակով հավասար են ամերիկյան նավերին՝ գերժամանակակից բազմատեսակ հրթիռներ, հակահրթիռային «Aegis» համակարգերով<sup>16</sup>: Բացի դրանից՝ ճապոնական նավատորմն ունի նաև ուղղաթիռակիրներ

<sup>15</sup> Ведерников Ю.В., Китайские Эсминцы: общие и частные аспекты эволюции, [http://abirus.ru/user/files/Military/DDG\\_China.pdf](http://abirus.ru/user/files/Military/DDG_China.pdf)

<sup>16</sup> Toppan A., Hirao K., World Navies Today: Japan. 23 March 2002, <http://www.hazegray.org/worldnav/>

և բավականին արդիական սուզանավեր<sup>17</sup>: Այդ բոլոր նավերի տեխնիկական մակարդակը և ինքնուրույնությունը զգալիորեն բարձր են չինական նավերից<sup>18</sup>: Ճապոնական բանակը, բացի հզոր նավատորմից, կարող է նաև օդուժով այդ ուղղությամբ կենտրոնացնել նաև 100-ից ավելի ժամանակակից կործանիչներ և ունի լավ պատրաստված ենթակառուցվածքներ՝ ընդամենը 300-500 կմ հեռավորության վրա:

Ասիական տարածաշրջանում հետաքրքիր է նաև կորեական թերակղզին, որտեղ ավելի քան 60 տարի է՝ գոյություն ունի նույն ազգի միջև ընթացող հակամարտություն: Հյուսիսային Կորեան վաղուց համարվում է փակ երկիր, որի ռազմականացումը կրում է անկանոն ու հախտուն բնույթ: Այդ երկիրը, չնայած նրան, որ աշխատում է միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ, դեռ բազում խնդիրներ ունի տեխնիկական մակարդակի հետ: Նախ այդպես էլ չի ստեղծվում այդ միջուկային մարտագլխիկն իր նպատակին հասցնող հեռահար միջոցը՝ բալիստիկ հրթիռը, փորձերի զգալի մասը դատապարտվում է անհաջողության<sup>19</sup>: Այստեղ ավելի շատ քաղաքական շահարկումներ են, քան կոնկրետ գործ: Իսկ զինված ուժերի սովորական սպառազինությունը բավական հնացել է, որի կիրառությունը ժամանակակից պատերազմում քիչ հավանական է:

Հարավային Կորեայի դեպքում ամեն ինչ այլ է. երկիրը զարգանում է մեծ տեմպերով. արդյունաբերությունը աշխարհի առաջատարներից է, և զինված ուժերը ևս համապատասխան կերպով արտացոլում են իրականությունը: Կորեական բանակն ունի ամերիկյան մոդել, ռազմաարդյունաբերությունը մեծապես ինտեգրված է ամերիկյանին, տեխնիկապես լավ զինված է և հզոր: Կորեական արտադրության ռազմական տեխնոլոգիաները տարեցտարի ավելի մեծ ճանաչում և համբավ են ձեռք բերում և տարածվում են աշխարհում: Նավատորմը և օդուժը ևս մարտունակ ու ժամանակակից են, տարածաշրջանում համարվում են կարևոր ռազմական և քաղաքական գործոն: Կորեական նավատորմի հիմնական նավերն են էսկադրային ականակիրները, որոնք բավականին ժամանակակից են, զինված են արևմտյան

<sup>17</sup> Koda Y., “Jieikan no Genyu Seiryoku to Shyorai Tenbo” [The Present and Future of JMSDF Ships], in Sekai no Kansen (January 2009), p. 129.

<sup>18</sup> Japanese security. Wide-mouthed frog The country launches its biggest warship since the second world war. Aug 10th 2013. <http://www.economist.com/news/asia/21583292>; DDH-183 Izumo 22DDH Class, <http://www.globalsecurity.org/military/world/japan/22ddh.htm>

<sup>19</sup> Ванин В., Стратегический блеф. HBO, <http://nuclearno.ru/text.asp?10947>

տեխնոլոգիաներով ու սպառազինությամբ<sup>20</sup>: Նավատորմում կան նաև այլ նավեր, մասնավորապես փոքր սուզանավեր<sup>21</sup>: Օդուժն ունի ավելի քան 200 միավոր ժամանակակից կործանիչներ, որոնցից մոտ 55-ը «F-15» կործանիչներ են: Տարածաշրջանում հզոր բանակների են տիրապետում ԱՄՆ-ի մյուս դաշնակիցները՝ Ֆիլիպինները, Թայվանը և Ավստրալիան:

Հիշարժան է նաև Պակիստանի ռազմական ներուժը: Նախ թեկուզ միայն այն հանգամանքը, որ այս երկիրը միջուկային զինանոցի է տիրապետում, արդեն մեծ նշանակություն ունի: Պակիստանը, տիրապետելով բավականին հզոր ռազմական պոտենցիալի, ներքին անկայունության և արտաքին միջատությունների պայմաններում բավական թուլացրել է իր դիրքերը և ազդեցությունը: Բավական է ասել, որ Պակիստանի ողջ տարածքում ամերիկյան ուժերն առանց թույլտվության անց են կացնում տարբեր տեսակի պատժիչ գործողություններ և հարվածներ<sup>22</sup>: Պակիստանի բանակը, ունենալով բավականին հզոր հագեցվածություն, ներկայումս գրեթե մատնված է անգործության և մոռացության, միակ գործիքը մնում է միջուկային զինանոցը: Պակիստանին այդպես էլ չհաջողվեց բանակը լիովին զարգացնել արևմտյան մոդելով՝ չնայած ամերիկյան կողմից այդքան ահռելի ռազմական աջակցությանը: Պակիստանյան ուժերն աչքի չեն ընկնում ճկունությամբ, որը թույլ կտա բանակը որպես քաղաքական խաղաքարտ օգտագործել: Իսլամական ծայրահեղականության վտանգը մշտապես կանգնած է այս երկրի գլխին:

Սրան հակառակ՝ հնդկական բանակը զարգանում է առավելապես արևմտյան մոդելով<sup>23</sup>: Մեծ տեղ է հատկացնում օդուժին. մոտավորապես 1000 մարտական ինքնաթիռներից գրեթե 300-ը ժամանակակից ֆրանսիական և ռուսական կործանիչներ են՝ «Cy-30» և «Mirage-2000», իսկ բոլորովին վերջերս կնքվել է ևս մոտ 130 միավոր նորագույն ֆրանսիական «Rafale C1»

<sup>20</sup> Thomas B., Naval B., Leadership in Korea: The First Six Months. Naval Historical Center, 2012. p. 7-48.

<sup>21</sup> <http://www.navy.mil.kr/main/index/index.jsp?menuID=001>

<sup>22</sup> Isikoff Michael, U.S. official acknowledges drone strikes, says civilian deaths 'exceedingly rare'. [http://openchannel.msnbc.msn.com/\\_news/2012/04/30/11475659-us-official-acknowledges-drone-strikes-says-civilian-deaths-exceedingly-rare?lite](http://openchannel.msnbc.msn.com/_news/2012/04/30/11475659-us-official-acknowledges-drone-strikes-says-civilian-deaths-exceedingly-rare?lite); О. Носов. США удвоят парк БЛА Рипер. ЗВО. 4.2010, стр. 81.

<sup>23</sup> Indo-US Army Exercise Yudh Abhyas. Defence.pk. 14 March 2012. Retrieved 1 June 2012. P 2-47.

կործանիչների ձեռքբերման պայմանագիր<sup>24</sup>: Այդ գերպայմանագրի արժեքը մոտ 20 մլրդ դոլար է: Վերջերս հայտարարվեց նաև ամերիկյան «AH-64E» հարվածային ուղղաթիռների ձեռքբերման մասին<sup>25</sup>: Հնդկական օդուժը հիանալի փորձ ունի ամերիկյան, իսրայելական, ֆրանսիական և այլ երկրների հետ համագործակցության գործում: Հնդկական ռազմարդյունաբերական համալիրը նորանոր հաջողություններ է գրանցում. ստեղծվում են նոր ու հեռահար հրթիռներ: Արդեն յուրացվում է միջմայրցամաքային հեռահարությունը: Հնդկական նավատորմն աշխարհում երրորդ երկիրն է, որն ունի մեկից ավել միջինից մեծ ավիակիր նավ<sup>26</sup>: Դա կարող է նշանակել, որ Հնդկական օվկիանոսում հնդկական նավատորմը հստակ կարող է գերակայության պայքար մղել անգամ ամերիկյան նավատորմի դեմ: Իսկ ցանկացած այլ երկրի ուղղակի կարող է թույլ չտալ մտնել այդ օվկիանոս: Դրանցից բացի՝ ձեռք են բերվում ռուսական ժամանակակից՝ «K-152 Нерпа»<sup>27</sup>, և ստեղծվում են ռազմավարական սեփական նախագծի սուզանավեր՝ «Arihant class»<sup>28</sup>: Այսինքն՝ հնդկական զինված ուժերը ներկայումս ասիական ամենաճկուն գործիքն են ռազմաքաղաքական դաշտում: Հնդկական տնտեսությունը ևս ներկայումս շեշտակի աճում է և քաղաքական ազդեցության տարածման համար ստեղծում լուրջ հիմքեր:

Ռուսական բանակն այս առումով բավական հետ է մնում, վաղուց արդեն ռուսական բանակը ճկուն գործիք չէ, որը կարելի է ծառայեցնել քաղաքականությանը: Ռուսական քաղաքական դեկավարության համար վաղուց հիմնական քաղաքական գործիք է դարձել միջուկային զինանոցը, որը թերևս միակն է, որը դեռ ազդեցություն թողնում է որոշակի հարցերում: Պատահական չէ, որ ներկայումս ցանկացած խոշոր քաղաքական հարցադրումների ժամանակ ռուսական ռազմավարական օդանավերը և հրթիռները օդ են բարձրացվում: Հենց միջուկային զինանոցն

<sup>24</sup> Индия купит французские истребители Rafale на \$20 млрд. “Коммерсантъ-Online”, 01.02.2012. <http://www.kommersant.ru/doc/1863220/print>

<sup>25</sup> МО Индии хочет закупить 22 вертолета AH64D “Longbow Apache”, <http://www.warandpeace.ru/ru/news/view/72232/>

<sup>26</sup> Справочные данные. Вооружённые силы зарубежных стран. Индия // Зарубежное военное обозрение. -№ 7, 2007, с. 70.

<sup>27</sup> АПЛ “Нерпа” передана представителям ВМС Индии, <http://lenta.ru/news/2012/01/23/nerpa/>

<sup>28</sup> Arihant - Advanced Technology Vessel (ATV), <http://www.globalsecurity.org/military/world/india/atv.htm>

է ասիական նոր գերտերությունների քաղաքականության հիմնական գործիքը, իսկ սովորական զինված ուժերն իրականում դրանց աճանցյալն են, նախատեսված են սահմանափակ, զուտ ռազմական խնդիրներ լուծելու համար:

Շատ երկրներ, ստեղծելով միջուկային սպառազինություն, վստահ են, որ իրենց ապահովագրում են որևէ հարվածից: Փորձագետներից շատերի պնդմամբ հենց նման սպառազինությունն է տվյալ երկրներին վերջնական ապահովագրում որևէ մի գերտերության հարվածներից: Որպես վառ օրինակ է Հյուսիսային Կորեան: Առաջին հայացքից սա շատ խելամիտ է, քանի որ վերջին 20 տարում ԱՄՆ-ի հակառակորդներից, որոնք հայտնվել են հարվածի տակ, ոչ մեկը չի ունեցել միջուկային սպառազինություն: Արևմուտքում ընդհանրապես չեն պատկերացնում մեծ զոհերով որևէ պատերազմ. դա կարող է քայքայել ցանկացած պետական համակարգ և առաջացնել հեղափոխություններ: Այդ պատճառով, բնականաբար, նրանք կխուսափեն միջուկային զինանոց ունեցող երկրների հետ պատերազմել: Վերջին պատերազմները Արևմուտքը վարում է ավելի ու ավելի հեռահար՝ նվազագույնի հասցնելով զինվորների մասնակցությունը: Ներկայում շրջանառության մեջ է դրվում այլոց արյունով պատերազմներ վարելու տեսությունը, ինչպես եղավ Աֆղանստանում և Լիբիայում:

Ահա ընդհանուր այս դատողության մեջ նայելով իրերին՝ տեսնում ենք, որ կա մի էական նրբություն: ԱՄՆ-ը փորձում է շտկել նաև այս իրավիճակը, որպեսզի ոչ մի երկրի միջուկային զինանոց իրեն չապահովագրի: Նախ պետք է հասկանալ, թե ինչով է աշխարհի ամենահզոր բանակը գոնե տեխնիկապես տարբերվում «վառողի տակառի» վերածվող ասիական երկրների բանակներից:

ԱՄՆ բանակը ներկայում միակն է, որն ի վիճակի է առանց միջուկային զինանոցի լուծելու քաղաքական-ռազմավարական խնդիրներ: Ասել է թե ամերիկյան բանակն առանց միջուկային սպառազինության կարող է լուծել նաև ռազմավարական խնդիրներ: Հենց այս առարկայական տարբերությունն է, որ ԱՄՆ-ին հնարավորություն է տալիս քաղաքական հարթության մեջ, շնորհիվ բանակի, ունենալու բոլորովին այլ գործիք: Փորձենք մանրամասն ներկայացնել սա և հասկանալ, թե ինչու մենք խնդիրը, ինչպես ստացվեց այնպես, որ ԱՄՆ-ին հաջողվեց, միջուկային սպառազինությունից բացի, ստեղծել նաև լրացուցիչ և ավելի

ճկուն ռազմական-ռազմավարական գործիք, որի կիրառությունն ավելի արդյունավետ է: Ամերիկյան զինված ուժերը շնորհիվ իրենց տեխնիկական գերազանցության, ռազմաբազաների լայն ցանցի, հզոր օդուժի և ծովուժի կարողանում են մոլորակի ցանկացած կետում կարճ ժամանակում (24-48 ժամ) կենտրոնացնել ռազմական այնպիսի ներուժ, որը գերազանցում է սովորաբար արդեն քաղաքական մեկուսացման մեջ հայտնված ցանկացած երկրի ներուժին: Սա կոչվում է զուտ արագ կուտակում, ինչը բացի զուտ ռազմական նշանակությունից ունի նաև քաղաքական ազդեցություն: Արևմտյան դաշնակիցները սովորաբար արդեն վարում են նոր՝ հինգերորդ սերնդի, գերտեխնիկականացված պատերազմ, որը դեռ լիովին չի յուրացվում ոչ մի այլ ասիական երկրի կողմից, իսկ տարբեր սերունդների պատերազմներում, անշուշտ, հաղթում է ավելի զարգացած նորը: Այս զուտ ռազմական բաղադրիչներին պետք է գումարենք նաև քաղաքական դաշնակիցների մեծ բանակը, տվյալ երկրի տեղեկատվական, քաղաքական ու տնտեսական մեկուսացումը և այլն: Այս ամբողջ արդյունավետ փաթեթում կա առաջին հայացքից փոքրիկ մեկ առանձնահատկություն, որը, սակայն, առանցքային դեր է խաղում: Այդ հինգերորդ սերնդի պատերազմներում ամերիկյան զինված ուժերն առաջին և անպայման ավելի արագ հարվածը հասցնում են գերճշգրիտ զենքերով: Նման զենքերի մասսայական կիրառությունը, որը ներկայումս միայն իրենք կարող են իրենց թույլ տալ, անխուսափելիորեն հանգեցնում է գոնե տեխնիկական հաղթանակի, որն էլ խելամտորեն զուգորդվում է այլ բաղադրիչներով, ու վերածվում ռազմաքաղաքական հաղթանակի: Գերճշգրիտ զենքերի այդ ճնշող գերակայությունը տեխնիկական այլ առավելությունների հետ միասին նրանց թույլ է տալիս միշտ հարվածը հասցնել առաջինը և զերծ մնալ պատասխան հզոր հարվածից: Ահա այս պարզ իրողությունն է, որ տարբերում է ամերիկյան զինված ուժերն ամբողջ աշխարհի զինված ուժերից, և սա է, որ նրանց հնարավորություն է տալիս առանց միջուկային զինանոցի ավելի ճկուն գործելու և ավելի ազդեցիկ լինելու: Փաստորեն ամերիկյան ռազմական մեքենան ներկայումս կարող է ցանկացած երկրի ռազմուժին առանց միջուկային սպառազինության հասցնել կործանարար հարված և շարքից հանել անգամ միջուկային զինանոցը: Հենց դրա մասին էին ահազանգում նաև

որոշ ռուս փորձագետներ<sup>29</sup>: Իհարկե այս մոդելն արդեն մի քանի անգամ փորձարկվել է, ոչ ոք չի կարողացել հակահարված տալ և դիմակայել: Սակայն տվյալ իրավիճակում, երբ դրված է միջուկային զինանոցի հարցը, նրանց հարկավոր է բացատել անգամ մեկ փոքր հակահարվածի հնարավորությունը:

Ահա այս տեսանկյունից է հարկավոր քննել ամերիկյան նոր հայեցակարգը և համընդհանուր հակահրթիռային պաշտպանության խնդիրը:

Տվյալ պահին այդ պաշտպանությունը դեռ գործում է սահմանափակ հնարավորություններով և լիարժեք գործարկման կարող է հասնել ոչ շուտ, սակայն պլանների համաձայն՝ վերջում այն պետք է կարողանա ապահովել ԱՄՆ-ի և դաշնակիցների լիարժեք պաշտպանությունը բալիստիկ հրթիռների հարվածներից: Լիարժեք համակարգն իր մեջ պետք է ներառի հսկողության լայն ցանց, բազում տեսակի հակահրթիռներ, որոնք կարող են տեղակայվել աշխարհի տարբեր հատվածներում: Դրանք կարող են լինել մինչև մի քանի հազար հակահրթիռներ, որոնց մի մասը կունենա ցամաքային, մնացած մասը՝ ծովային տեղակայում: Այստեղ հատկապես հետաքրքիր է հենց ծովային տեղակայումը, որը կարող է միանգամից լուծել մի քանի խնդիրներ: Ծովային բաղադրիչը կարևոր է նրանով, որ նավերը կարող են շարժվել ջրերով, ուր կամենան, և միաժամանակ կլուծեն նաև այլ խնդիրներ՝ Համաշխարհային օվկիանոսում ծովային գերակայության հաստատման համար: Ըստ պլանի՝ մի քանի տարի անց ծովային պաշտպանության «Aegis» համակարգով կարող են զինված լինել ավելի քան 100 միայն ամերիկյան հաժանավեր ու ականակիրներ՝ չհաշված դաշնակիցների նավերը: Յուրաքանչյուր նման նավ կարող է կրել մինչև 90-100 միավոր հակահրթիռ<sup>30</sup>: Եթե Համաշխարհային օվկիանոսում միաժամանակ լինեն մոտ 100 նման նավեր, որոնց ընդհանուր համագարկի պաշարը կազմի մոտ 10 000 հակահրթիռ, նշանակում է՝ Ասիայից պետք է արձակվի առնվազն 5000-ից ավելի մեծ հեռահարության բալիստիկ հրթիռ, որպեսզի գոնե մեկը հնարավորություն ունենա հասնելու ԱՄՆ-ի տարածք: Եվ սա այն դեպքում, եթե չենք հաշվում ամերիկյան ցամաքային տեղակայման այլ համալիրների

<sup>29</sup> Криницкий Ю.В., Тикшаев В.Н., Проблемы организации ПВО подвижных объектов государственного значения. Военная Мысль, 6/2010, с. 41-46.

<sup>30</sup> Navy Aegis Ballistic Missile Defense Program. Background and Issues for Congress. Congressional Research Service. Washington, April 19, 2011, p. 2.

հակահրթիռները: Ցամաքային բաղադրիչների (հակահրթիռներ, ռադիոտեղորոշման կայաններ և այլն) տեղակայման աշխարհագրությունը խոսում է միայն այն մասին, որ այդ համակարգը նախատեսված է ասիական ողջ տարածաշրջանից արձակված հրթիռների խոցման համար: Դրանք բոլորը տեղակայվում են ասիական խոշոր երկրների շրջակայքում, օվկիանոսներում և վտանգավոր այլ ուղղություններում: Առաջին հայացքից մասսայական հրթիռարձակումների դեպքում ոչ մի հակահրթիռային համակարգ չի կարող արդյունավետ գործել. դա հին արքիոմ է: Թեմայի շուրջ բանակցությունների ժամանակ ամերիկյան կողմը ևս պնդում է և փորձում ներկայացնել, որ այդ համակարգը, օրինակ, նախատեսված չէ ռուսական կամ չինական հրթիռների խոցման համար: Նրանք ևս պնդում են, որ իրենց համակարգը չի կարող մասսայական հրթիռների արձակման դեպքում արդյունավետ գործել: Սակայն, ինչպես նշեցինք, ամբողջ նրբությունն այն է, որ ամերիկացիներն ունեն իրենց թակարդը. նման հրթիռների մասսայական արձակումներին նախորդում է ամերիկյան ՕՀՄ-ների մասսայական ու գերճշգրիտ հարվածները, որոնցից հետո կփրկվեն բախստիկ հրթիռների նշված քանակի 10-20 տոկոսը: Հենց այդ քանակին էլ հակահրթիռային պաշտպանությունը կարող է չեզոքացնել: Վերը նշվածը հենց այն մասին էր, որ առաջին իսկ հարվածով ամերիկյան ՕՀՄ-ները կարող են շարքից հանել այդ 5000 հրթիռների մինչև 90 տոկոսը: ԱՄՆ-ը այսօր արդեն ի վիճակի է մեկ հարվածով արձակելու ավելի քան 10 000 գերճշգրիտ հրթիռներ: Կրկնակի հարվածների դեպքում դրանք կարող են լինել մինչև 20-30 հազար: Միայն 2013 թ. Վաշինգտոնը պատվիրել է ավելի քան 10 000 միավոր գերճշգրիտ հարվածային միջոցներ՝ ավելի քան 10 մլրդ դոլար արժողությամբ<sup>31</sup>: Որպես համեմատություն նշենք, որ 2003 թ. Իրաքյան պատերազմում ամերիկյան ՕՀՄ-ները ընդհանուր արձակել են մոտ 20 000 գերճշգրիտ հարվածային միջոց<sup>32</sup>:

Բոլոր ասիական երկրների բանակները, միասին վերցրած, չունեն 2000–3000 կմ և ավելի հեռահարության 5000 միավոր

<sup>31</sup> Washington Beef up the Gulf States with 10,000 Strike Weapons Worth US\$10 Billion, OCTOBER 17, 2013BY. [http://defense-update.com/20131017\\_gulf\\_states\\_strike\\_weapons.html](http://defense-update.com/20131017_gulf_states_strike_weapons.html)

<sup>32</sup> Белкин В., Мухаметжанова А.. Является ли высокая точность оружия «Абсолютной»? . Вестник Воздушного Флота. май-июнь. 2003, стр. 58-61; Сидорин А.Н.и др. ВС Зарубежных гасударств. М.,2009, с. 93.



հրթիռներ, որոնք ի վիճակի են հասնելու ԱՄՆ կամ նրա բազաներին: Նման հրթիռների քանակի ավելացումն էլ այնքան դյուրին գործ չէ, և արագորեն հնարավոր չէ դրանք արտադրել: Իսկ, ինչպես նշեցինք, հակահրթիռային պաշտպանությունը կարող է ունենալ ավելի քան 10 000 հակահրթիռ:

ՕՀՄ-ների մասսայական հարվածից հետո ասիական երկրների ունեցած անգամ 5000 հրթիռներից կարող են փրկվել ոչ ավելի քան 1000-ը: Իսկ ամերիկյան հակահրթիռային լիարժեք գործարկված համակարգը արդեն կարող է չեզոքացնել այդ 1000-ին, որոնք որպես պատասխան կարծակվեն դեպի ԱՄՆ կամ նրա դաշնակիցների ուղղությամբ: Ամերիկյան լիարժեք հակահրթիռային պաշտպանությունը նույնիսկ կարող է չեզոքացնել այդ 1000 հրթիռների մարտագլխիկները, չնայած ամերիկյան նավերի վրա տեղակայված համակարգերը վտանգավոր են հենց նրանով, որ այդ 1000 հրթիռներին կարող են խոցել մինչև մարտագլխիկների անջատումը: Սա այն դեպքում, եթե անգամ չհաշվենք.

- ՕՀՄ-ների կրկնակի հարվածների գործոնը, երբ արդեն չեն մնա 1000, այլ ավելի քիչ,
- արդեն ԱՄՆ-ի տարածքի պաշտպանությունը, որը կարող է խոցել անկում ապրող մարտագլխիկներին,
- տիեզերական նախագծերը, որոնք մարտագլխիկներին կարող են խոցել տիեզերքում և այլն:

Ահա և առանց ամերիկյան միջուկային պոտենցիալի ասիական միջուկային պոտենցիալի չեզոքացման բանաձևը: Բնականաբար իրական կյանքում ՕՀՄ-ներով մասսայական հարվածը լավագույն դեպքում կիրառվելու է մեկ երկու պետության նկատմամբ, որի դեպքում պատկերը ավելի տխուր կարող է լինել: Ողջ ասիական տարածքը միաժամանակ չի պատերազմելու ԱՄՆ-ի դեմ, իսկ այդ տարածքում նրանք միշտ էլ դաշնակիցներ կունենան:

Վերը շարադրվածը նշանակում է, որ ասիական գերուզմականացումը շարունակվում է. այն ցանկացած պահի կարող է վերաճել պատերազմի տարածաշրջանում: Սակայն այդ ռազմական ներուժը մեծ հաշվով մրցակից չէ Արևմուտքի համար, որը դեռ պահում է հատկապես տեխնիկական գերակայությունը: Համաշխարհային օվկիանոսի և օդատիեզերական հարթության հսկողության դեպքում Արևմուտքը շարունակելու է ապահովել իր համաշխարհային ռազմական գերակայու-

թյունը: Իսկ այդ հարթություններում գերակայության ապահովումն ընթացքի մեջ է: ԱՄՆ-ը ողջ Ասիայի շրջակայքում ստեղծում է հարյուրավոր նոր ռազմակայաններ, Չինաստանի շրջակայքում ամենուր ծովային և օդային ռազմաբազաներ են, անգամ վերադառնում են Վիետնամ: Օդային գերակայությունը առհասարակ բացառիկ է. ամերիկացիները ստեղծում են կրկնակի օդային գերակայություն՝ անօդաչուների և հիմնական<sup>33</sup>: Անօդաչուների միջոցով ստեղծված օդային գերակայությունը նոր երևույթ է ընդհանրապես: Դրանց միջոցով ամերիկացիները ողջ աշխարհում ստեղծել են հետախուզադիվերսիոն գործողությունների մի համընդհանուր դաշտ, որը կիրառելի է աշխարհի երկրների գերակշիռ մասի նկատմամբ: Երբ, որտեղ հարկավոր է, մեկ հարվածով ոչնչացնում են անցանկալի անձանց և թույլ չեն տալիս կոնֆլիկտների ավելի մեծ հասունացում: Այսինքն՝ անարյուն պատերազմները դառնում են կիրառելի: Ասիական երկրների համար միջուկային սպառազինությունը, մնալով որպես անգերազանցելի զինատեսակ, այնուամենայնիվ կորցնում է իր բացարձակ զենք լինելու հնարավորությունը և չի ապահովում ո՛չ անպարտելիություն, ո՛չ պաշտպանվածություն նոր ամերիկյան համակարգի դեմ:

---

<sup>33</sup> Այս եզրույթները զուտ ռազմական բացատրություն ունեն և դուրս են տվյալ նյութի քննարկման թեմայից:

# ԿՈՎԿԱՍ

---

*ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

## **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՅՈՒՍԻ-ՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ: ՀԱՅՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԸ**

The North Caucasus remains one of the volatile regions of the Russian Federation. Political, ethnic, sectarian and social divisions define the reality on the ground. According to the population census of 2010, there are 1.2 mln Armenians who live in the Russian Federation and more than 630.000 Armenians live in the region which is largely referred as the North Caucasus although, in administrative terms, the region is divided into two Federal okrugs, republics, regions and krais. From time to time, the security issues of Armenian population make the local and Armenian headlines. The article addresses a set of urgent questions dealing with political, social and ethnic complexities of Armenians living the region. It also brings up a few challenges which require both vigilance and actions.

Հյուսիսային Կովկասը եղել և շարունակում է մնալ ՌԴ-ի կարևորագույն նշանակություն ունեցող տարածաշրջաններից մեկը, և այնտեղ տեղի ունեցող ցանկացած խորքային զարգացում ունենում է համառուսաստանյան հետևանքներ: Հս. կովկասյան հանրապետությունները և վարչատարածքային միավորները (երկրամասեր, շրջաններ) կառավարչական նպատակով ներառված են ՌԴ-ի Հյուսիսկովկասյան և Հարավային դաշնային օկրուգներում:

Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և դավանաբանական գործընթացներն իրենց ազդեցությունն են թողնում նաև այդ տարածաշրջանում ապրող հայության վրա: 2010 թ. համառուսաստանյան մարդահամարի տվյալներով նշված դաշնային օկրուգներում (Դերբենդից Ռոստով և Աստրախանից Սոչի) ապրում է առավել քան 630.000 հայ<sup>1</sup>, և սա այն դեպքում, երբ մարդահամարի մասնակիցները, ռուսաստանյան օրենսդրության համաձայն, ազգային պատկանելիությունը նշել են ըստ ցանկության: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ սակայն այդ թիվը հարկ է առնվազն կրկնապատկել, հետևաբար իրական թվաքանակի վերաբերյալ մեր պատկերացումները բավական մոտավոր են: Եթե անգամ ուղղորդվենք 2010 թ. մարդահամարի տվյալներով, ապա խնդրո առարկա տարածաշրջանում բնակվում են Ռուսաստանում ապրող հայության կեսից ավելին<sup>2</sup>: Ավելին, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում հայերը բնակության քանակով ռուսներից հետո երկրորդն են (համապատասխանաբար՝ 281.680 և 161.324 բնակիչ), Ռոստովի շրջանում՝ երրորդը՝ 110.727-ով, Հս. Օսիայում՝ չորրորդը՝ 16.235-ով, Վոլգոգրադում՝ հինգերորդը՝ ավելի քան 27.000 բնակչությամբ: Մինչդեռ Չեչնիայում, Ինգուշեթիայում և Կալմիկիայում հայերի թվաքանակի մասին ոչ մի նշում չկա<sup>3</sup>:

Տարբերվում է նաև հայերի սոցիալական ինտեգրման աստիճանը: Ավելին, որոշ ուսումնասիրողներ առանձնացնում են 5 խումբ հայերի: Առաջինը Հայաստանից մեկնած հայերն են, որոնք պահպանում են հայրենիքի հետ կապը, դրա շնորհիվ՝ նաև լեզուն և ավանդույթները, արդյունքում այս խումբն առանձնանում է մյուս խմբերից, ինչպես ընդունված է կոչել՝ «մյուս հայերից»: Երկրորդ խումբը, որն ընդունված է կոչել «բաքվեցի հայեր», ներառում է Ադրբեջանի տարածքից բռնագաղթածներին, որոշ դեպքերում այս խմբի հետ են ինքնանույնականացվում նաև ԼՂԻՄ-ի տարածքից բռնագաղթածները, անգամ Վրաստանից և Հյուսիսային Կովկասի այլ հանրապետություններից

<sup>1</sup> Информационные материалы об окончательных итогах Всероссийской переписи населения 2010 года, Федеральная Служба Государственной статистики, [http://www.gks.ru/free\\_doc/new\\_site/perepis2010/perepis\\_itogi1612.htm](http://www.gks.ru/free_doc/new_site/perepis2010/perepis_itogi1612.htm)

<sup>2</sup> Ըստ 2010 թ. մարդահամարի տվյալների՝ ՌԴ-ում ապրում է 1.184 մլն հայ:

<sup>3</sup> Информационные материалы об окончательных итогах Всероссийской переписи населения 2010 года, Федеральная Служба Государственной статистики, [http://www.gks.ru/free\\_doc/new\\_site/perepis2010/perepis\\_itogi1612.htm](http://www.gks.ru/free_doc/new_site/perepis2010/perepis_itogi1612.htm)

տեղափոխվածները: Այս խմբի բնութագրական կողմերից են հայերենի ոչ բավարար իմացությունը, գերազանցապես ռուսերենով շփումը, ավելի խորքային ինտեգրումը, անգամ ձուլումը տեղական սոցիումին, թեև Գանձակի (Կիրովաբադի), Գետաշենի հայությունն առավելապես բնակվում է համատեղ: Երրորդ խումբը «միջինասիական հայերն» են, որոնք գերազանցապես տեղափոխվել են Ղազախստանից, Թուրքմենստանից և Տաջիկստանից: Այս խմբի անդամների մոտ հայ ինքնության հետ ինքնանույնականացումը թույլ է արտահայտված. նրանք բավական արագ են ինտեգրվել Ռուսաստանի հարավային տարածքների բազմաէթնիկ իրականության մեջ: Չորրորդ խումբը «ռուսահայերն» են, որոնց նախնիներն այս տարածաշրջանում հաստատվել են 18-19 դդ., և շատ հաճախ ներկայանում են որպես այդ տարածքների տեղաբնակներ: Նրանք խորությամբ ներթափանցած են ռուսական մշակույթի մեջ, և որոնց մոտ երկար ժամանակ հայկական ինքնությունը դեր չի խաղացել: Վերջին շրջանում, սակայն, այս խմբին պատկանող ընտանիքներում նկատվում է վերադարձ դեպի ինքնության ակունքներին, որն արտահայտվում է հայոց լեզվի և մշակույթի նկատմամբ հետաքրքրության տեսանելի աճով: Վերջին՝ հինգերորդ խումբը, «աշխատանքային ներգաղթյալներն» են, որոնք նպատակ չունեն այս կամ այն կերպ ինտեգրվելու տեղական գործընթացների մեջ, նրանց ներկայությունը ժամանակավոր բնույթ է կրում, սակայն թվաքանակի մեծությունը թույլ չի տալիս այս խմբին անտեսել<sup>4</sup>:

Տարածաշրջանում հայտնի են մի շարք գյուղեր, որոնք գերազանցապես հայկական են. օրինակ՝ Ստավրոպոլի երկրամասի հայկական Եդեսիա, Կույբիշևո, Լիսոգորսկայա, Նեզլոբնայա, Կրասնոկոմսկայա և Շահումյան գյուղերը: Մի շարք քաղաքներում կան հայկական թաղամասեր (Պյատիգորսկ, Կիսլովոդսկ): Որոշ դեպքերում էլ, ապրելով գերազանցապես իսլամադավան հասարակություններում և համայնքներում, անգամ գերազանցապես ռուսաբնակ երկրամասերում, հայերը դեմ հանդիման են կանգնում կրոնական, էթնիկական և քաղաքական բնույթ ունեցող բախումների, խնդիրների:

Հյուսիսային Կովկասում ապրող հայերի անվտանգության

<sup>4</sup> Армяне Юга России: Опыт Социологического Исследования, ред. Волков Ю. Г., 2011, Ростов-на-Дону-Москва, Социально-гуманитарные науки, с. 17-20.

խնդիրները ժամանակ առ ժամանակ սրվում են՝ կապված ազգամիջյան և դավանաբանական հարաբերություններում լարվածության ալիքների և տազնապային տրամադրությունների հետ: Թեև հայերի նկատմամբ խտրականության և բռնության դրսևորումների առումներով իրավիճակն այժմ ընդհանուր առմամբ կայուն է, սակայն, հաշվի առնելով իսլամական ծայրահեղականության վերելքի համառուսաստանյան ընդգրկումը, կազակական շարժումների ժամանակ առ ժամանակ ակտիվացումը, ապա Հյուսիսային Կովկասում ապրող հայության անվտանգության ապահովման մեխանիզմների շուրջ անհրաժեշտ են գործուն բանաձևերի մշակում: Ավելին, Լիբանանյան պատերազմը, Սիրիայում շարունակվող ճգնաժամը ցույց տվեցին, որ իսլամադավան հասարակություններում ապրող հայությունը չափազանց խոցելի է, ուստի, հետագայում նմանատիպ զարգացումներից խուսափելու և համապատասխան հետևություններ անելու նպատակով անհրաժեշտություն կա վերլուծելու Հյուսիսային Կովկասում ապրող հայերին առնչվող անվտանգության որոշ խնդիրներ և առաջարկելու գործողությունների ծրագիր: Ավելին, Հյուսիսային Կովկասով (Հս. Օսեթիա) են անցնում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղիները (ռազմավարական, ռազմաօսական ճանապարհները), որոնք պահանջում են տարածաշրջանին հատկացնել հավելյալ ուշադրություն:

2014 թ. փետրվարին Սոչիի օլիմպիական խաղերը և այդ նպատակով տարածաշրջանում կատարված ներդրումները ևս որոշակի լարվածություն են հաղորդել, որոնք, քաղաքական ու տնտեսական ազդեցությունների բաժանման հարցերից բացի, առաջ են բերել նաև անվտանգության և հարակից բնույթի փոխլրացնող խնդիրներ: Գոյացած հակասությունները կարող են մերթ ընդ մերթ նոր սրությամբ դրսևորվել անգամ օլիմպիական խաղերի ավարտից հետո՝ տնտեսական և ազդեցության գոտիների բաժանումների հետ կապված:

### ***Մարտահրավերներ***

Էթնո-քաղաքական և սոցիալ-տնտեսական առումներով Հյուսիսային Կովկասը ՌԴ-ի ամենաբարդ տարածաշրջաններից մեկն է: Սոցիալ-տնտեսական և քաղաքական լարվածությանն ավելանում են նաև կառավարման մեխանիզմների

անարդյունավետ կիրառման խնդիրները, կոռուպցիան, ինչպես նաև հակաահաբեկչական գործողություններին հատկացվող դաշնային բյուջետային հատկացումները, որոնք ոչ միայն սոցիալական լարվածության պատճառ են դառնում, այլև ազդում տարածաշրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի ձևափոխումների վրա:

Վերջին տարիներին Հյուսիսային Կովկասում սկիզբ են առել մի շարք այլ պատմագաղափարախոսական բնույթի գործընթացներ, որոնք ունեն արտաքին ուղղորդում և միտված են Հյուսիսային Կովկասի ժողովուրդների համակեցության խթանումն<sup>5</sup>: Մի շարք երկրներ (ԱՄՆ, Թուրքիա, Սաուդյան Արաբիա, Քաթար), միջազգային կազմակերպություններ, հիմնադրամներ տարածաշրջանում սկիզբ են դրել պատմության վերանայման գործընթացների, որոնք նպատակ են հետապնդում վեր հանելու վիճելի պատմաքաղաքական պատմություններ (ուբիխական հարց, ադիգեյների ցեղասպանություն և այլն) և ստեղծել կոնֆլիկտածին իրավիճակներ: Այս քննարկումների արդյունքում սրվել են Հյուսիսային Կովկասում ապրող ռուսների և տեղաբնակ այլ էթնիկ միավորումների միջև հակասությունները: Որպես հետևանք՝ նկատվում է ռուս ազգաբնակչության արտագաղթ, իսկ լեռնաբնակ բնակչությունը բնակություն է հաստատում քաղաքային և հարթավայրային շրջաններում:

Հաճախակի են դարձել միջէթնիկական բնույթի բախումները՝ չեչենների, թուրք-մեսխեթների, քրդերի, ադրբեջանցիների, հույների, ռուսների (կազակներ, սքինհեդներ) և հայերի մասնակցությամբ: Նմանատիպ բախումները ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում Հյուսիսային Կովկասի վարչատարածքային միավորների քաղաքներում (Կիսլովոդսկ, Եսենտուկի, Պյատիգորսկ):

Այսպիսով՝ Հյուսիսային Կովկասում կարող ենք առանձնացնել կոնֆլիկտների կամ կոնֆլիկտածին իրավիճակների մի քանի մակարդակ՝ ա) կրոնական-դավանաբանական (իսլամադավաններ ընդդեմ քրիստոնեաների, որոնք երկուսն էլ իրենց հերթին բաժանվում են տարաբնույթ կրոնադավանա-

<sup>5</sup> Матишов Г. Г., Батиев Л. В., Пашченко И. В., Атлас социально-политических проблем, угроз и рисков юга России, Том 4: Специальный Выпуск. Причины и обстоятельства роста напряженности, поиск путей стабилизации на Северном Кавказе, РАН Южный научный центр, Ростов-на-Дону, 2010, с. 34-36.

բանական շերտերի՝ սուննի-շիա, սալաֆիական-վահաբիական և այլն, իսկ քրիստոնեության պարագայում՝ ուղղափառ և առաքելական), բ) սոցիալ-տնտեսական (Սոցիի օլիմպիական խաղերի պատճառով տարածաշրջանում ոչ միայն լարվածության օջախներ ստեղծվեցին, այլև սկսվեցին ժողովրդագրական բնույթի տեղաշարժեր դեպի Հս. Կովկասի արևելյան հատված, գ) էթնիկական, դ) ազգային, ե) աշխարհաքաղաքական և այլն:

### **Իսլամական ծայրահեղականության վերելքը**

Թեև ՌԴ-ի իշխանությունները հավաստիացնում են, որ Հյուսիսային Կովկասում ահաբեկչությունն ամբողջությամբ արմատախիլ է արված, սակայն իրականությունն այլ է: Իսլամական ծայրահեղական շարժումները շարունակում են անարգել գործել ու ընդլայնվել Հյուսիսային Կովկասի հանրապետություններում: Դադստանը շարունակում է մնալ ահաբեկչությունների էպիկենտրոնը, ավելի նվազ թվով ահաբեկչություններ տեղի են ունենում Չեչնիայում, ապա Ինգուշեթիայում, Կաբարդին-Բալկարիայում, Հս. Օսիայում, Ստավրոպոլի երկրամասում, Կարաչան-Չերկեսիայում: Միայն 2011 թ. Հս. Կովկասում տարվող գործողությունների, որը բնութագրվում է նաև զինված հակամարտություն, հետևանքով 750 մարդ սպանվել է, 628-ը վիրավորվել: 2012 թ. զոհվել է 700 մարդ (404-ը՝ ահաբեկչական խմբավորումների մասնակիցներ, 209-ը՝ իրավապահներ, 87-ը՝ խաղաղ բնակիչներ)<sup>6</sup>, 2013 թ. վեց ամիսների ընթացքում՝ 242-ը: Ծայրահեղ սալաֆիական ուղղությունը վերջին տարիներին մեծ ներուժ է կուտակել՝ մարդկային և ֆինանսական մեծածավալ ռեսուրսներ, որն իր հերթին հանգեցրել է հանրային վայրերում կրոնական կենսակերպի, կրոնական բնույթի հավաքների, ցույցերի և ծիսակարգերի տեսանելի աճի<sup>7</sup>:

Հարկ է նշել, որ միայն Հս. կովկասյան հանրապետություններում չէ, որ տեղի են ունենում ահաբեկչական գործողություններ, դրանք ստեպ-ստեպ տեղ են գտնում նաև Հյուսիսային Կովկասի, առավելապես, «ռուսական» երկրամասերում և համայնքներում՝ Ստավրոպոլ, Դոնի Ռոստով, Կրասնոդար,

<sup>6</sup> В ходе вооруженного конфликта на Северном Кавказе в 2012 году погибли и были ранены 1225 человек, <http://www.kavkaz-uzel.ru/articles/218940/>

<sup>7</sup> Ավելի մանրամասն տե՛ս Матишов Г. Г., նշվ. աշխ., էջ 94-96:



Վոլգոգրադ և այլն: Այս հանգամանքը նպաստում է Մոսկվայի երբեմն անհամաչափ, երբեմն՝ անհամապատասխան արձագանքին: Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած ցանկացած լայնամասշտաբ ահաբեկչական գործողությունից հետո ոտքի է հանվում Մոսկվայի և ՌԴ-ի այլ մեծ քաղաքների ամբողջ իրավապահ համակարգը, որն իր հերթին հասարակության շրջանում հանգեցնում է «հակակովկասյան» տրամադրությունների հերթական ալիքին:

2014 թ. փետրվարին Սոչիում նախատեսվում են օլիմպիական խաղերի անցկացումը, որը, սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական խնդիրներից բացի, տարածաշրջանում արդեն ստեղծել է բավական լարված միջէթնիկ մթնոլորտ: Հայտնի է, որ ինքնահռչակ «Կովկասյան էմիրության» ղեկավարը՝ էմիր Դոկու Ումարովը, կոչ է արել վերսկսելու ահաբեկչությունների շարքը Ռուսաստանում՝ օլիմպիական խաղերին վնասելու կամ դրանց նախապատրաստման ընթացքը խաթարելու նպատակով<sup>8</sup>: Թեև ՌԴ-ի իշխանություններն առանձնահատուկ ուշադրություն են հատկացնում հակաահաբեկչական միջոցառումներին, սակայն թեկուզ և մեկ նման գործողություն կարող է բացասական ալիքի պատճառ դառնալ:

Սոչիում և օլիմպիական տարածքներում ապրող և աշխատող մեծաթիվ հայ բնակչության շրջանում կարող են խորանալ խուճապային տրամադրությունները: 2010-12 թթ. ընթացքում լարվածության պատճառ դարձավ Սոչիի բնակիչների և Հյուսիսային Կովկասի այլ հանրապետություններից ժամանած աշխատանքային ներգաղթյալների միջև ծագած բախումները, որոնք ոչ միայն չնվազեցին, այլև սկսեցին առավել լայն ընդգրկում ստանալ: Այս տարի գարնանը հայերի և տեղաբնակ կամ Հյուսիսային Կովկասի արևելյան հանրապետություններից ժամանածների միջև տեղի ունեցած բախումների հետևանքով տեղի ոստիկանությունը ձերբակալեց շուրջ 200 հայ երիտասարդի, որոնց թվում էին նաև մարմնամարզիկներ և համայնքի ազդեցիկ անդամներ<sup>9</sup>: Ձերբակալված հայերից մի քանիսը հետագայում դատապարտվեցին ազատազրկման:

<sup>8</sup> Доку Умаров угрожает терактами во время Олимпиады в Сочи: Террорист призвал к срыву «сатанинских» игр, <http://www.kommersant.ru/doc/2369628>, 16.12.2013

<sup>9</sup> Кто разжигает конфликт между армянами и дагестанцами в Сочи?, [http://www.miacum.am/gazeta/2012/05/28/draka\\_v\\_sochi](http://www.miacum.am/gazeta/2012/05/28/draka_v_sochi)

ՌԴ-ի հայկական շրջանակներում աճում է դժգոհությունը նաև Ռուսաստանի հայերի միության նկատմամբ: Վերջինիս ղեկավարությունը քննադատվում է իշխող «Միացյալ Ռուսաստան» կուսակցության հետ սերտաճելու, հայությանը, հատկապես Հյուսիսային Կովկասում ապրող հայերին հուզող խնդիրների նկատմամբ անտարբերություն ցուցաբերելու համար:

### **Հայադյացության դրսևորումները**

Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունների խորապատկերին առանձնանում են այլատյացության և անհանդուրժողականության դրսևորումներն ընդդեմ տեղաբնակ, ոչ տեղաբնակ և ոչ իսլամադավան ժողովուրդների: Արդյունքում, մեծ թիվ են կազմում ներքին տեղահանվածները, որոնք լքել են մշտական բնակության վայրերը՝ տեղի տալով անվտանգության սպառնալիքներին: Հյուսիսային Կովկասում ապրող հայության համար այս խնդիրն առավել էական է, քանի որ առկա է օտար և վտանգավոր տարր ընկալվելու նախադեպերի կրկնությունը: Օրինակ՝ 2000-ականներին բազմաթիվ էին դեպքերը, երբ հայերը հարձակումների ենթարկվեցին հանցագործ խմբավորումների, անձանց և տխրահոշակ «սքինհեդների» կողմից: Քիչ չէին նաև պատերի վրա գրված հակահայկական կարգախոսները, հայկական գերեզմանների, խաչքարերի, մշակութային օջախների անարգման դեպքերը: Հարկ է փաստել, որ երկրամասից երկրամաս, հանրապետությունից հանրապետություն, քաղաքից քաղաք հայության անվտանգության և էթնիկ համակեցության իրավիճակները տարբեր են: Եթե Ռոստովի շրջանում և Ստավրոպոլում միջէթնիկական բախումները, կենցաղային բնույթի հակասությունները լայն ընդգրկում չունեն, ապա Կրասնոդարի երկրամասը ժամանակ առ ժամանակ աչքի է ընկնում ամենատարբեր հակասություններով, հայության դեմ ուղղված կոչերով, հայտարարություններով և ինֆորմացիոն հարձակումներով<sup>10</sup>:

Վերջին անգամ 2012 թ. օգոստոսին այլատյացություն սերմանող հայտարարությամբ հանդես եկավ Կրասնոդարի երկրամասի ղեկավար Ա. Տկաչովը: Նա կոչ արեց վտարելու կովկասյան հանրապետությունների քաղաքացիներին և, ձևավորելով «կա-

<sup>10</sup> Армяне Юга России: Опыт Социологического Исследования, նշվ. աշխ., էջ 47-52:

զակական զորագնդեր», երկրամասում կարգ ու կանոն հաստատել<sup>11</sup>: Այս հայտարարությունն առաջ բերեց հակազդեցություն հայերի և տեղաբնակ այլ ժողովուրդների կողմից: Կրասնոդարի երկրամասի Հայկական համակարգող խորհուրդն անգամ հանդես եկավ հայտարարությամբ՝ դատապարտելով Տկաչովի հակասահմանադրական նախաձեռնությունը:

Վերջին շրջանում ՌԴ-ում մեծ ընդգրկում է ստացել փախստականների դեմ բացասական տրամադրությունների տարածումը, որոնք հիմնականում սկիզբ են առնում Մոսկվայից և հատկապես՝ քաղաքապետ Սոբյանինի հայտարարություններից: Հասկանալիորեն Սոբյանինը արտացոլում է ՌԴ-ի քաղաքական վերնախավի առնվազն մի հատվածի տրամադրությունները, և այդ հայտարարությունները հիմնականում դրական արձագանք են ստանում հասարակության կողմից: Պետության քաղաքական կենտրոնում առկա նման տրամադրությունների այլընտրանքային մեկնաբանությունները շրջաններում շատ ավելի արմատական ու ապակառուցողական դրսևորումներ կարող են ստանալ (և ստանում են), որոնցից կարող են տուժել մեր հայրենակիցները: Քաղաքական գործիչներից հետ չեն մնում նաև հրապարակախոսները և լրագրողները, օրինակ՝ 2012 թ. ընթացքում նմանատիպ քայլերով աչքի ընկավ քաղաքական մեկնաբան, լրագրող Մակսիմ Շևչենկոն, որի հասցեին հնչեցին մեղադրանքներ՝ կազակներին հայերի դեմ հանելու, Հյուսիսային Կովկասի պատմությունը խեղաթյուրելու և միջէթնիկական բախումներ հրահրելու:

Ակնհայտ է, որ Հյուսիսային Կովկասում հնարավոր խորքային ցնցումների հետևանքով հայությունը կամ կհեռանա դեպի ավելի հյուսիս, կամ կվերադառնա Հայաստան. անհնար է բացառել նաև կորուստների կամ այլ հնարավոր բացասական գործընթացների սցենարները: Նման մեծածավալ արտագաղթ արդեն առկա է Դերբենդից, որտեղ հայության թիվն էապես նվազել է: Այս առումով հարկ է հիշել, որ 2010 թ. հոկտեմբերին Ստեփանակերտում անցկացված լրագրողների համահայկական 5-րդ համաժողովի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել առավել հետևողական լինել Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ ու առավել հաճախ արձագանքել

<sup>11</sup> Ткачев фильтрует Кубань, [http://www.gazeta.ru/politics/2012/08/03\\_a\\_4709217.shtml](http://www.gazeta.ru/politics/2012/08/03_a_4709217.shtml)

ընթացիկ գործընթացներին: Հյուսիսային Կովկասից ժամանած հայազգի լրագրողներն անգամ զուգահեռներ անցկացրին 1975-90 թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի, դրա պատճառով դատարկված հայկական համայնքի և Հյուսիսային Կովկասում աճող իսլամական ծայրահեղականության հնարավոր հետևանքների միջև<sup>12</sup>:

### **Հնարավոր զարգացումներ**

Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի շրջանում, ինչպես նաև Հս. Կովկասյան հանրապետություններից յուրաքանչյուրում առկա խնդիրները տարբերվում են մյուսներից: Ավելին, համայնքից համայնք, երկրամասից երկրամաս, հանրապետությունից հանրապետություն տարբեր է թե՛ հայության ինքնանույնականացումը, թե՛ հայության տարբեր խմբերի միջև հարաբերությունները, թե՛ հայության ընկալումը տեղաբնիկների և ներգաղթյալ այլ էթնիկ խմբերի կողմից, թե՛ հայության հարաբերությունները տեղաբնիկ և ոչ տեղաբնիկ էթնիկ միավորների հետ: Ուստի, մեկ բանաձևի մշակումն անկարող է լուծել առկա խնդիրները: Անհրաժեշտություն կա հետևողականորեն մշակելու և իրականացնելու այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք ունենան միջնաժամկետ և երկարաժամկետ բաղադրիչներ և պարունակեն արդյունավետության ստուգման չափորոշիչներ:

Խնդրո առարկա տարածաշրջանում գործում են ՀՀ երկու հյուպատոսություններ Սոչիում և Ռոստովում: Նպատակահարմար է ՀՀ դիվանագիտական կամ պետական ներկայացուցչության ինչ-որ ձև գտնել նաև Հյուսիսային Օսիայում, որը կապահովի ՀՀ քաղաքացիների կապը և տրանսպորտային միջոցների անխափան աշխատանքը: Այդ ներկայացուցչությունն աշխարհագրական առումով առավել մոտ կլինի Հս. Կովկասի արևելյան հանրապետություններում տեղի ունեցող իրադարձություններին և հնարավոր կլինի առավել օպերատիվ կերպով արձագանքել զարգացումներին: Հյուսիսային Օսիայում նման ներկայացուցչության առկայությունը հնարավորության կտա նաև աշխարհագրորեն առավել մոտ գտնվելու Հվ. Օսիային և դրա շնորհիվ տեղում ինտենսիվ (տեսանելի կամ ոչ այնքան) աշխատանքներ տանելու պաշտոնական Ցիսինվալու հետ:

<sup>12</sup> Հյուսիսային Կովկասի հայության խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պետք է լինեն, <http://www.panarmenian.net/arm/world/details/55347/>

Համագործակցության ուղիներից կարող է լինել կապերի հաստատումը Հյուսիսային Օսիայի և ՀՀ պետական մարմինների միջև, կառավարական այցելությունները և ակտիվ շփումները: Դա բարենպաստ ֆոն կստեղծի նաև տեղի հայության համար: ՀՀ-ի կողմից նման քայլերի ձեռնարկումը, բարոյական աջակցությունը մեծապես կդյուրացնեն մի շարք նախաձեռնությունների ընթացքը և կամրապնդեն համայնքի հեղինակությունը:

Նպատակահարմար է նաև նպաստել հայերի մասնակցությանը այն տեղական ինքնակառավարման մարմիններում և ընտրովի պաշտոններում, որտեղ այն առաջ չի բերի դժգոհություն համայնքների ոչ հայ բնակիչների կողմից: Միևնույն ժամանակ հայության մասնակցությունը քաղաքական գործընթացներին կամ անդամակցությունը ընդդիմադիր կուսակցություններին պետք է տարվեն հնարավորինս հմուտ և ուղղորդված կերպով:

Էական խնդիր է նաև Հայաստանից մեկնող հայերի (թե՛ սեզոնային, թե՛ աշխատանքային, թե՛ մշտական) սոցիալական խնդիրների լուծումը, որոնք շատ դեպքերում հայտնվում են մարգինալացված սոցիալական կարգավիճակում, չեն կարողանում ձեռք բերել «սոցիալական լեգիտիմություն»: Այդ խնդրի լուծման ուղղությամբ հարկավոր է շոշափելիորեն բարձրացնել հանրային իրազեկվածություն երկրի ներսում:

Տարածաշրջանի մի շարք մշակութային հուշարձանների անվտանգությամբ պետք է զբաղվեն պետական մարմինները՝ թույլ չտալու համար նրանց անարգման դեպքերի կրկնությունը: ՀՀ մշակույթի նախարարությունը կարող է այս հարցում լինել առավել հետևողական և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների օգնությամբ կարող է համակարգել այդ հարցի առաջնությունը: Ընդ որում՝ առաջ քաշելով փլուզվող կամ վերանորոգման կարիք ունեցող եկեղեցիների (Սբ. Կարապետը՝ Նեսվիտայում, Սբ. Գևորգը՝ Սուլթան-Սալիում և այլն) կամ մշակութային այլ կոթողների հարցը՝ հնարավոր կլինի տրամադրությունների և ընկալումների փոփոխություն կատարել տեղի և դաշնային իշխանությունների մոտեցումներում:

Տեղական մարզպետարաններում և վարչական կենտրոններում կարող են գործել տեղեկատվական կենտրոններ (օր.՝ American Corners) հայության տեղեկատվությունը ավելացնելու նպատակով: Հետապնդելով նույնատիպ նպատակ՝ Հայաստա-

նում գործող «Ռուսաստանի մշակույթի տան» օրինակով Հս. Կովկասի մի քանի հայահոծ բնակավայրերում կարող են գործել «Հայաստանի մշակույթի տներ»:

Հայաստանի բուհական և հետբուհական համակարգը, գիտական և ակադեմիական շրջանակները կարող են փոխգործակցության եզրեր գտնել Հս. Կովկասում ապրող ժողովուրդների հետ ուսումնասիրությունների իրականացման նպատակով: Այն նպատակով ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում կարող են տարեկան 1-2 գիտահետազոտական թեմա հաստատել, որոնք նվիրված են Հս. Կովկասում հայության խնդիրներին: Սույն ուսումնասիրությամբ զբաղվողները հնարավորություն կստանան առավել խոր ծանոթանալու Հս. Կովկասում ապրող հայությանը հուզող խնդիրներին:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

***Ներածություն***

Թեև Եվրոպական միությունը (ԵՄ) համեմատաբար երիտասարդ արտաքին քաղաքական դերակատար է, դրա արտաքին քաղաքականության առանձնահատկությունները տարբերակադեմիական-փորձագիտական շրջանակների ուշադրության կենտրոնում են: Այս համատեքստում ԵՄ-ն հաճախ բնորոշվում է «փափուկ ուժ», «փոխակերպող ուժ» և «նորմատիվային դերակատար» արտահայտություններով՝ հիմք ընդունելով դրա արտաքին քաղաքականության ոճային և բովանդակային որոշ առանձնահատկություններ: Միաժամանակ, հիմք ընդունելով վերջին շրջանում Կասսյան-սևծովյան մեծ-տարածաշրջանում ԵՄ-ի ակտիվության աճը, խնդիր է առաջանում պարզել, թե որքանով են նշյալ բնորոշումները կիրառելի այս տարածաշրջանում և, մասնավորապես, դրանում կամրջող նշանակություն ունեցող Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքականության բնութագրման համար:

***Եվրոպական միությունը՝ որպես «փափուկ ուժ» և «նորմատիվային» դերակատար***

Հարևան երկրների ու տարածաշրջանների հետ փոխհարաբերություններում ԵՄ-ն բնութագրվում է առավելապես որպես «փափուկ ուժ», որը, ըստ Ջ. Նայի, ենթադրում է, որ այդ դերակատարի գործողությունները հենվում են երեք «գրավչություն-

ների» վրա՝ նրա մշակույթը, քաղաքական արժեքները և գործընկերների կողմից լեգիտիմ ընկալվող արտաքին քաղաքականությունը<sup>1</sup>: Գործնականում սա դրսևորվում է նրանում, որ, մի կողմից, ԵՄ-ի «ներքին կյանքի» հիմքում ընկած են որոշակի նորմեր և սկզբունքներ, որոնց շնորհիվ ԵՄ-ն ընկալվում է որպես «անվտանգության ընկերակցության», խաղաղության և բարեկեցության տարածություն, իսկ, մյուս կողմից, իր արտաքին հարաբերություններում ԵՄ-ն չի կիրառում «կոշտ ուժին» բնորոշ գործիքներ և խուսափում է ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից\*։ Փոխարենը ԵՄ-ն ձգտում է «համոզել», «զայթակղել» իր գործընկերներին՝ գործել որոշակի ձևով։ Այդ նպատակով որպես հիմնական գործիք ԵՄ-ն կիրառում է երկու մեթոդների համակցություն՝ փոխալսմանավորումը՝ պետական իշխանության ինստիտուտներին առաջարկելով ֆինանսատնտեսական և տեխնիկական «քաղցրահաց»՝ որոշակի նորմատիվ-իրավական և ինստիտուցիոնալ փոփոխությունների դիմաց, և սոցիալականացումը՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով հասարակության ներսում խթանելով որոշակի սոցիոմշակութային փոփոխություններ<sup>2</sup>:

Վերոնշյալի համատեքստում ԵՄ-ն դիտարկվում է նաև որպես «նորմատիվային դերակատար», այսինքն՝ ԵՄ-ն առավելապես նորմատիվային, այլ ոչ թե ռացիոնալ արտաքին քաղաքական դերակատար է։ Ըստ այդմ, ԵՄ-ի հիմքում ընկած են անդամ-երկրների համար ընդհանրական արժեքներ ու նորմեր (խաղի կանոններ), և այդ ներքին նորմատիվային էությունն արտացոլվում է նաև ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ<sup>3</sup>:

Հարկ է հիշատակել արտաքին քաղաքականության տիպավորման մի մոտեցում՝ հիմնված միջազգային դերակատարների արտաքին քաղաքական նպատակների ու դրանց իրագործման

<sup>1</sup> S. Nye, J. S. The Future of Power. New York: Public Affairs, 2011, p. 84:

\* Այս հանգամանքը չի կարելի ընկալել որպես ԵՄ-ի «բարի կամքի» դրսևորում, քանի որ նրա մի շարք անդամներ հաճախ են ներգրավված լինում ուժի կիրառում և սպառնալիք ներառող միջազգային ռազմական օպերացիաներում։ Սա կարող է նշանակել, որ ԵՄ-ն կամ պարզապես նախընտրում է այլ կերպ գործել, կամ էլ, ինչ-ինչ ներքին ու արտաքին գործոնների պատճառով, ի վիճակի չէ գործելու «կոշտ ուժի» նման:

<sup>2</sup> S. Schimmelfennig F., Sedelmeier U. (Eds.), The Europeanization of Central and Eastern Europe, pp. 1–28:

<sup>3</sup> S. Mann, I. The normative power of the European Union in a Globalised World, in Laïdi Z. (Ed.), EU Foreign Policy in a Globalized World Normative power and social preferences, Routledge, 2008, pp. 23–28:



համար կիրառվող միջոցների հարաբերակցության վրա (տե՛ս աղյուսակ):

*Նորմատիվային* արտաքին քաղաքական տիպը ենթադրում է նորմատիվային արտաքին քաղաքական նպատակի և դրա իրագործման նորմատիվային միջոցների առկայություն, իսկ դերակատարի քաղաքականությունն, ըստ այդմ, ուղղված կլինի միջազգային իրավունքի ու ինստիտուտների ամրապնդմանը:

**Արտաքին քաղաքականության տիպերը<sup>4</sup>**

|                                    |                        | Արտաքին քաղաքական նպատակներ |                        |
|------------------------------------|------------------------|-----------------------------|------------------------|
|                                    |                        | <i>Նորմատիվային</i>         | <i>Ոչ նորմատիվային</i> |
| Արտաքին քաղաքականության միջոցներ   | <i>Նորմատիվային</i>    | Նորմատիվային                | Ստատուս քվո            |
|                                    | <i>Ոչ նորմատիվային</i> | Կայսերական                  | Realpolitik            |
| <b>Արտաքին քաղաքականության տիպ</b> |                        |                             |                        |

*Realpolitik* տիպի դեպքում դերակատարն իր արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար օգտագործում է ողջ «զինանոցը», ներառյալ՝ հարկադրանքի մեթոդները: *Կայսերական* տիպի դեպքում դերակարն իբր հանդես է գալիս նորմատիվային նպատակներով, սակայն դրանցով չի սահմանափակվում և միջազգային նորմերի փոխարեն օգտագործում է իր արտաքին քաղաքական ողջ «զինանոցը» նորմեր ներմուծելու համար, եթե անգամ դա հակասում է միջազգային իրավունքին: *Ստատուս քվո* տիպի դեպքում դերակատարը գործում է առկա միջազգային համակարգի շրջանակներում, իրականացնում իր ներքին ու միջազգային պարտավորություններին համապատասխան քաղաքականություն: Նա չունի նորմատիվային արտաքին քաղաքական նպատակներ, այլ ընդամենը պահպանում է առկա միջազգային ստատուս քվոն: Սակայն հեղինակները նկատում են, որ արդյունավետ նորմատիվային արտաքին քաղաքականության համար նպատակի ու միջոցների համապատասխանությունը դեռ բավարար չէ, և դերակատարը պետք է նաև ունենա որոշակի նորմատիվային ազդեցություն: Վերջինս պետք է լինի *ակնկալվող*, իսկ հակառակ դեպքում՝ քաղաքականության արդյունքները կլինեն *չակնկալված*<sup>5</sup>:

<sup>4</sup> Աղյուսակն ըստ՝ Tocci N. (Ed.). Who is a Normative Foreign Policy Actor? The European Union and its Global Partners, CEPS, Brussels, 2008, p. 12:  
<sup>5</sup> Tocci N. (Ed.), նշվ. աշխ., էջ 5-8:

Նկատելի է, որ ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ գնալով մեծ նշանակություն են ստանում որոշակի նորմերի արտահանումն ու միջազգայնացումը: Անգամ տարբերում են արտահանման «փափուկ» և «կոշտ» տեսակները: Առաջին դեպքում ԵՄ-ն առաջարկում է վարքի այլընտրանք, որն այնքան հրապուրիչ է, որ այլ դերակատարներ որոշում են ընդօրինակել այն, իսկ երկրորդը ենթադրում է ունակություն՝ խթանելու նորմատիվային փոփոխություններ՝ օգտագործելով միջազգային հարաբերությունների ավանդական մեթոդները, ներառյալ՝ ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումը<sup>6</sup>: Ակնհայտ է, որ ԵՄ-ն առավել արդյունավետ է նորմերի «փափուկ» արտահանման հարցում, որն արտահայտվում է անդամակցության թեկնածու, իսկ որոշ դեպքերում՝ նաև գործընկեր պետությունների նորմատիվային փոխակերպման՝ եվրոպականացման գործում: Այս համատեքստում էլ հենց ԵՄ-ն դիտարկվում է նաև որպես իր անդամ և հատկապես թեկնածու պետությունների քաղաքականությունը («վարքը») փոփոխելու ունակ «փոխակերպող ուժ»<sup>7</sup>:

ԵՄ-ի՝ որպես «նորմատիվային դերակատարի» դիտարկման քննադատները նկատում են, որ միջերկրծովյան տարածաշրջանում ԵՄ-ի ժողովրդավարացման ու ազատականացման ձգտումներն իրականում ուղղված են ընդամենը տեղի ավտորիտար վարչակարգերի «զսպմանն» ու դրանց տարածաշրջանում ԵՄ-ի աշխարհատնտեսական քաղաքականության վրա հնարավոր բացասական ազդեցությունը սահմանափակելուն<sup>8</sup>: Որոշ հեղինակներ էլ նկատում են, որ ԵՄ-ի պետությունները բոլոր-

<sup>6</sup> Տեն, օրինակ, Cavatorta F., Tonra B. Normative Foundations in the EU Foreign, Security and Defence Policy. The Case of the Middle East Peace Process: A View from the Field, School of Law and Government, Dublin City University, Glasnevin, Dublin 9, Ireland, 2007, pp. 4-5:

<sup>7</sup> Տեն, օրինակ, Grabbe H., The EU's Transformative Power. Europeanization Through Conditionality in Central and Eastern Europe, Palgrave Studies in European Union Politics, 2006, p. 231, Leonard M., Europe's transformative power, 01 February 2005 <http://www.cer.org.uk/publications/archive/bulletin-article/2005/europes-transformative-power>

Որոշ հեղինակներ էլ ուշադրությունը կենտրոնացնում են եվրոպականացման սահմանների ու սահմանափակումների վրա: Տեն, օրինակ, Börzel T.A., The Transformative Power of Europe Reloaded. The Limits of External Europeanization, KFG Working Paper Series, No. 11, February 2010, Kolleg-Forscherguppe (KFG) „The Transformative Power of Europe“, Freie Universität Berlin; Popescu N., The limits of EU's transformative power, <http://blogs.euobserver.com/popescu/2009/07/23/on-eus-transformative-power/>

<sup>8</sup> Տեն մասնավորապես՝ Samir A., Kenz A. E. Europe and the Arab World: Patterns and Prospects for the New Relationship. New York, NY: Zed Books, 2005:

վին էլ չեն հրաժարվել իրենց ազգային արտաքին քաղաքականությունից, իսկ ԵՄ-ի ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը շարունակում է մնալ միջկառավարական համագործակցության հարթակ: Այս իմաստով ԵՄ-ն ո՛չ նորմատիվային և ո՛չ էլ տնտեսական դերակատար չէ, այլ, ավելի շուտ, ոչ տիպիկ դերակատար է, որը ծառայում է անդամ պետությունների հավաքական (հաճախ՝ հակասական) շահերի առաջխաղացմանը<sup>9</sup>:

Բնականաբար, նշյալ արտաքին քաղաքականության տիպերն իդեալական են, և իրականում կարելի է խոսել միայն դերակատարի վարքում այս կամ այն տիպի գերակայության մասին: Ավելին, նորմատիվային բաղադրիչի վրա շեշտադրումը դեռ չի խոսում դերակատարի հզորության մասին. այդպիսի տիպը կարող է լինել նաև ներքին սահմանափակումների, հարաբերական թուլության արդյունք, կամ էլ այդ քաղաքականության անբավարար արդյունավետությունը կարող է լինել «անբարենպաստ միջավայրի» հետևանք (օրինակ՝ ազդեցիկ այլ դերակատարների հետ մրցակցությունը կամ անկառավարելի տարածաշրջանային իրադրությունը):

### ***ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության պարճառականները և հակասականությունը***

Փորձենք պարզել՝ ԵՄ-ի վերոնշյալ բնութագրումները որքանով են կիրառելի Հարավային Կովկասում նրա քաղաքականության համատեքստում: Անշուշտ, այս տարածաշրջանի նշանակությունը ԵՄ-ի արտաքին և անվտանգային քաղաքականության մեջ գնալով աճում է, ինչի մասին վկայում են տարածաշրջանի երկրների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի քանակական աճն ու բովանդակային ընդլայնումը: Դրանցից հատկապես նշանակալի են Եվրոպական հարևանության քաղաքականությունն (ԵՀՔ) իր «Արևելյան գործընկերություն» ծրագրով, «Հարավային գազային միջանցքը», ինչպես նաև Սևծովյան սիներգիան: Հարավային Կովկասը՝ որպես կամուրջ տարածաշրջան, հատուկ դերակատարում ունի նաև ԵՄ-ի կենտրոնաասիական ռազմավարության, ինչպես նաև խոշոր էներգետիկ-հաղորդակցային ծրագրերի՝ ԻՆՕԳԵՅԹ-ի և ՏՐԱՍԵԿԱ-յի իրականացման գործում:

<sup>9</sup> Տե՛ս Adrian H.-P. «Normative» Power Europe: a Realist Critique. Journal of European Public Policy, 13.2, March 2006, pp. 220, 231:

ԵՄ-ն մեծ կարևորություն է տալիս հարևան տարածաշրջաններում էներգետիկ-հաղորդակցային ծրագրերի ներդրմանն ու անխափան աշխատանքին, տարածաշրջանային կայունության և համագործակցության ապահովմանը, միգրացիոն հոսքերի կառավարմանն ու ներպետական բարեփոխումների իրականացմանը: Անվտանգության այդ չափումներն ամրագրված են նաև 2003 թ. ընդունված Եվրոպական անվտանգության ռազմավարության (ԵԱՌ)<sup>10</sup> մեջ, և վերը հիշատակված ծրագրերն ուղղակիորեն կամ միջնորդված կերպով ուղղված են ռազմավարության մեջ նշված անվտանգային սպառնալիքների (ահաբեկչություն, միջազգային կազմակերպված հանցավորություն, ԶՈԶ տարածում, տարածաշրջանային հակամարտություններ, «չկայացած պետություններ»<sup>\*</sup>) հաղթահարմանը: Ըստ այդ փաստաթղթի՝ ԵՄ-ի գլխավոր խնդիրներից մեկը միության շուրջ անվտանգության ապահովումն է՝ անվտանգ հարևանության կառուցումը: Իսկ դրան հասնելու համար ԵՄ-ը պետք է նպաստի, «որպեսզի ԵՄ-ից արևելք և Միջերկրական ծովում նրա սահմանների երկայնքով գոյություն ունենա լավ կառավարվող պետությունների գոտի»<sup>11</sup>:

Արդեն իսկ ԵՀԲ տարածությունում ԵՄ-ի գործունեության մեջ հստակ երևում է ԵԱՌ-ի գլխավոր նպատակադրությունը՝ «բարեկամների գոտու» ստեղծումը, որն արտացոլված է և ԵՀԲ ռազմավարական փաստաթղթում, և Բարսելոնայի հռչակագրում, և «Արևելյան գործընկերության» մեկնարկային գագաթնաժողովի համատեղ հայտարարության մեջ<sup>12</sup>: Այստեղ, ըստ էության, ԵՀԲ-ն հանդես է գալիս որպես «շինհրապարակ» հարավային և արևելյան տարածաշրջաններում ԵՄ-ի անվտանգության քաղաքականության համար, որի վրա հետագայում կառուցվեցին

<sup>10</sup> Տե՛ս A Secure Europe in a Better World - European Security Strategy. Brussels, 12 December 2003.

<sup>#</sup> ԵԱՌ ներդրումից հինգ տարի անց ներկայացվեց նաև դրա հաշվետվությունը, որում սպառնալիքների ցուցակին ավելացվել էին նաև էներգետիկ և կիբերանվտանգության ապահովումն ու կլիմայի փոփոխությունը: Տե՛ս Report on the Implementation of the European Security Strategy, Brussels, 11 December 2008, S407/08, p. 5

<sup>11</sup> Տե՛ս A Secure Europe in a Better World, նշվ. աշխ., էջ 7-8:

<sup>12</sup> Տե՛ս Wider Europe — Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours, Brussels, 11.3.2003, COM(2003) 104 final, Barcelona Declaration and Euro-Mediterranean partnership [http://europa.eu/legislation\\_summaries/external\\_relations/relations\\_with\\_third\\_countries/mediterranean\\_partner\\_countries/r15001\\_en.htm](http://europa.eu/legislation_summaries/external_relations/relations_with_third_countries/mediterranean_partner_countries/r15001_en.htm), Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, Prague, 7 May 2009

«Միջերկրծովյան միությունը»՝ հարավային, և «Արևելյան գործընկերությունը»՝ արևելյան ուղղություններով<sup>13</sup>:

Սակայն ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության համատեքստում տեսանելի է նաև որոշակի հակասություն՝ հայտարարված նորմատիվային արժեք-նպատակների և դրանց ուղղված գործնական քաղաքականության միջև: Արևելյան չափմամբ ԵՄ-ի առանցքային ծրագրերում (ԵՀԲ, ԱԳ, Հարավային միջանցք, Սևծովյան սիներգիա) նկատելի է երեք փոխկապակցված և ծրագրերից յուրաքանչյուրում տարբեր աստիճանակարգություն ունեցող նպատակների առկայություն՝ էներգետիկ համագործակցություն, տարածաշրջանային կայունություն ու համագործակցություն, արդյունավետ պետության կառուցում: Սրանք կարելի է դիտարկել որպես ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության *պարճառականներ*: Մասնավորապես, Եվրոպան կասսայան և կենտրոնաասիական էներգետիկ տարածաշրջաններին կապակցող Հարավային Կովկասում ԵՄ-ի առաջնորդություններից են 1. անդրտարածաշրջանային *էներգետիկ և հաղորդակցային ուղիների կառուցումը*, 2. դրանց անխափան գործառնության համար անհրաժեշտ է ապահովել *տարածաշրջանային կայունություն և համագործակցություն*, 3. իսկ դրան կարելի է հասնել տարածաշրջանի երկրների ու նրանց փոխհարաբերությունների *եվրոպականացման* միջոցով՝ ենթադրելով, որ այդ տնտեսաքաղաքական արդիականացման ուղղությամբ կատարված ցանկացած քայլ կնվազեցնի տարածաշրջանային լարվածությունն ու ռազմական բախման հավանականությունը:

Սակայն այս հարցում ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը դրսևորում է ներքին հակասականություն: ԵՄ-ի էներգետիկ աշխարհաքաղաքականությունն իրականացվում է առավելապես **Real Politik**-ի, այլ ոչ թե նորմատիվային սկզբունքով: Տարածաշրջանային կայունության և համագործակցության խթանումը ևս հեռու է նորմատիվայնությունից և գերազանցապես կառուցված է **ստատուս քվոյի** սկզբունքի վրա. այս հարցում ԵՄ-ը նախընտրում է գործել առկա միջազգային-իրավական շրջանակներում, քան փոխակերպել տարածաշրջանի

<sup>13</sup> ԵՄ-ի արտաքին անվտանգության քաղաքականության առանձնահատկությունների վերաբերյալ հեղինակի դիտարկումների մասին տես Галстян Н. С., Детерминанты и особенности политики Европейского союза на Южном Кавказе. Доклад. Международная конференция “Восточное партнерство: цели – практика – вызовы. Анализ процесса имплементации в государствах, включенных в программу”, Краков, Польша, 19 ноября, 2013 г., с. 2-5 <http://www.academia.edu/5176299/>:

աշխարհաքաղաքական իրողությունները: Եվ միայն երրորդ՝ պետական կառավարման բարեփոխումների ոլորտում է ԵՄ-ն հանդես գալիս իսկապես որպես **նորմատիվային** դերակատար: Սակայն այդ ուղղությամբ էլ ԵՄ-ի ջանքերը կարելի է արդյունավետ համարել տարածաշրջանի ոչ բոլոր երկրներում:

Ակնհայտ է, որ առաջին երկու պատճառականների հարցում ԵՄ-ն Հարավային Կովկասում չի իրականացնում «նորմատիվային առաքելություն»: Ավելին, ԵՄ-ի՝ առավելապես ռաջիոնալ-ռեալիստական էներգետիկ աշխարհաքաղաքականությունը՝ զուգորդված տարածաշրջանային կայունության ապահովման հարցում փաստացի ստատուս քվո դիրքորոշմամբ, հակասում է իր իսկ հոչակած նորմատիվային նպատակներին: Մասնավորապես, Ադրբեջանին ռազմավարական գործընկերոջ կարգավիճակ տալը, նրա հետ էներգետիկ համագործակցության ընդլայնումն այն դեպքում, երբ դրանից ստացվող եկամուտներն Ադրբեջանն օգտագործում է իր սպառազինական ներուժն ավելացնելու համար, հակառակ ազդեցություն ունեն տարածաշրջանային կայունության վրա: Իսկ այդ համագործակցության խորացումը «Սաֆարովի դեպքի» և այդ երկրում եվրոպականացման անհաջողության ֆոնի վրա նշանակալիորեն վնասում է ԵՄ-ի՝ «ազնիվ միջնորդի» և «փափուկ ուժի» համբավը: Այստեղ հարկ է հիշատակել նաև ԵՄ-ի կողմից նրան անդամակցության թեկնածու և 1995 թ-ից նույն մաքսային միության մեջ մտնող Թուրքիայի՝ Հայաստանի նկատմամբ քաղաքականությունն ու մոտեցումը փոխակերպելու անկարողությունը, ինչպես նաև վրացական հակամարտությունների գոտում ԵՄ-ի իրականացրած վերակառուցման ու ֆինանսատնտեսական աջակցության ֆոնին<sup>14</sup> արցախյան հակամարտության տարածքում նմանատիպ ծրագրերի բացակայությունը:

<sup>14</sup> ԵՄ-ն ֆինանսավորել է Հարավային Օսիայի և Աբխազիայի հետպատերազմական վերականգնման ու բարեփոխումների աշխատանքները: Ընդհանուր առմամբ, 1997-2006 թթ. ընթացքում ԵՄ-ը տրամադրել է մոտ 33 մլն եվրոյի աջակցություն: Տե՛ս Summary on EU-Georgia Relations [http://eeas.europa.eu/georgia/eu\\_georgia\\_summary/index\\_en.htm](http://eeas.europa.eu/georgia/eu_georgia_summary/index_en.htm)

## Եզրակացություն

Կարծում ենք՝ պետք չէ ո՛չ իդեալականացնել, ո՛չ էլ թերագնահատել ԵՄ-ի նորմաստեղծ ունակությունը: Իրականում ԵՄ-ի նորմատիվային ուժը՝ եվրոպականացման ունակություններն ունեն իրենց սահմաններն ու սահմանափակումները, և եթե այն բավական արդյունավետ է անդամ ու թեկնածու-երկրների դեպքում, ապա անդամակցության հեռանկար չունեցող գործընկեր-երկրների համար այդ էֆեկտը բավական սահմանափակ է: Ավելին, կախված ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականության նպատակներից՝ կոնկրետ տարածաշրջանի երկրների ու նրանց փոխհարաբերությունների եվրոպականացումը կարող է ծառայել այլ՝ առավել ռացիոնալ կամ պրագմատիկ շահերի:

Կարելի է արձանագրել, որ ԵՄ-ի «նորմատիվային աշխարհաքաղաքականությունն» արևելյան ուղղությամբ ունի մի շարք ներքին և արտաքին սահմանափակումներ: Մասնավորապես

- Այն առավել արդյունավետ է թեկնածու և, այսպես կոչված, «եվրոպական հեռանկար» ունեցող երկրների դեպքում, մինչդեռ այդպիսի նպատակ կամ հեռանկար չունեցող պետությունների դեպքում եվրոպականացման արդյունքներն անկանխատեսելի են: Ավելին, եվրոպականացման էֆեկտն անհամեմատ թույլ կամ բացակայում է այն երկրների դեպքում, որոնք դրանում քիչ շահագրգռված են, իսկ փոխարենը ԵՄ-ն ինքն ունի այդ երկրներից կախվածություն:

- ԵՄ-ի «նորմատիվային աշխարհաքաղաքականությունը» ներսից թուլացնում են նաև կոնկրետ տարածաշրջաններում անդամ-պետությունների ունեցած գերակայությունների, մոտեցումների տարբերություններն ու նրանց շահերի մրցակցությունը<sup>15</sup>:

- Լուրջ սահմանափակող դեր ունի նաև այն հանգամանքը, որ արևելյան ուղղության վրա ակտիվ խաղացողներ են նաև այնպիսի տարածաշրջանային ու արտաքին դերակատարներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, ՌԴ-ն, Թուրքիան, Իրանը:

<sup>15</sup> ԵՄ-ի անդամ պետությունների արտաքին քաղաքական նախապատվությունների, ինչպես նաև Հարավային Կովկասի ընկալման տարբերությունների մասին տես մասնավորապես՝ Łapczyński M., The European Union's Eastern Partnership - Chances and perspectives, CRIA, VOL. 3 (2) – Spring, 2009, pp. 144-146, Ghazinyan A. (Ed.), EU's Foreign and Security Policy in the South Caucasus, Interdisciplinary Research, CELI, 2010, pp. 44-47, 54-56, Hahn I., Schuch G. (Ed.), German Foreign Policy and Eastern Partnership. Position Paper of the Eastern Partnership Task Force, DGAPstandpunkt Februar 2012 N° 1, p. 2:

• Իրենց ազդեցություն են թողնում նաև տարածաշրջանի «փոքր» խաղացողների արտաքին քաղաքական և տարածաշրջանային միմյանցից տարբերվող նախապատվությունները:

Քանի որ ԵՄ-ին հեռանկարային անդամակցությունը՝ որպես գլխավոր «քաղցրահաց», այդքան էլ կիրառելի չէ Հարավային Կովկասի համար, ԵՄ-ն պետք է կարողանա առավել արդյունավետ օգտագործել համագործակցության առկա ծրագրերը՝ դրանք դարձնելով ոչ պակաս հրապուրիչ ու շահեկան: Ակնհայտ է, որ ԵՄ-ի ներկայիս էներգետիկ աշխարհաքաղաքականությունը և տարածաշրջանային կայունության ապահովման հրամայականն այսօր հակասության մեջ են: Բացի դրանից՝ աճող կախվածությունը տարածաշրջանի տարանցիկ ուղիներից ու պաշարներից նվազեցնում է ԵՄ-ի կարողությունը՝ նորմատիվային «ճնշում» գործադրել տարանցիկ երկրների վրա և փոխակերպել ոչ միայն տեղի երկրների տնտեսաքաղաքական համակարգերը, այլև նրանց ներկայիս հակամարտային հարաբերությունները:

Հակամարտությունների հարցում ԵՄ-ն պետք է հրաժարվի «անատամ» հայտարարությունների և պարիտետի պահպանման քաղաքականությունից՝ քննադատությունը ոչ միայն դարձնելով հասցեական, այլև դրանք զուգորդելով կոնկրետ գործողություններով:

Հաշվի առնելով տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրողությունները՝ ԵՄ-ն պետք է գտնի իր գործընկեր-երկրների ու նրանց խնդիրների նկատմամբ անհատական և տարածաշրջանային մոտեցումների միջև ճիշտ բալանս՝ մի կողմից, արձագանքելով այդ երկրների անհատական պահանջմունքներին, մյուս կողմից՝ նրանց ներգրավելով տարածաշրջանային փոխգործակցության մեջ: Դրա համար կարող են հարթակ ծառայել ինչպես տարածաշրջանային նպատակային նոր ծրագրերը, այնպես էլ մերձսահմանային համագործակցության խթանումը: Զուգահեռաբար ԵՄ-ն պետք է շարունակի շեշտադրել վարչական և ինստիտուցիոնալ բարեփոխումները գործընկեր երկրներում՝ այդպիսով նպաստելով նաև ներպետական ժողովրդավարացման էֆեկտի մեծացմանը նրանց միջպետական հարաբերություններում:



## ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

### **Արաքս Փաշայան, պ. գ. թ., դոցենտ**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է արաբական երկրների ներքին և արտաքին հիմնախնդիրների, «Իսլամական համագործակցություն» կազմակերպության, ինչպես նաև «քաղաքական իսլամի» ուսումնասիրությամբ:

### **Վահրամ Պետրոսյան պ. գ. թ., դոցենտ**

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ է: Զուգահեռաբար վարում է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչի պաշտոնը: Զբաղվում է քրդագիտական հիմնախնդիրներով, Թուրքիայի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքական խնդիրների ուսումնասիրությամբ:

### **Նատալյա Սլաբոդյան պ. գ. թ.**

Տ. Շևչենկոյի անվան Կիևի ազգային ինստիտուտի ռազմական և միջազգային հումանիտար իրավունքի խնդիրների գիտահետազոտական բաժնի ավագ գիտաշխատող է: Զբաղվում է մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ և Ռուսաստանի արտաքին քաղաքականության գործիքակազմի ուսումնասիրությամբ, ինչպես նաև գլոբալացման պայմաններում Պարսից ծոցի երկրների ներքին և արտաքին խնդիրների հետազոտությամբ:

### **Աղավնի Հարությունյան, պ. գ. թ.**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների բաժնի ավագ գիտաշխատող է: Զբաղվում է Մերձավոր Արևելքի և եվրասիական և ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքականության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

### **Նարեկ Մկրտչյան**

Երևանի պետական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ է: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է Միջին Ասիայի՝ մասնավորապես Ղազախստանի,

հետխորհրդային ազգաշինության և արդիականացման գործընթացների համեմատական ուսումնասիրությունը:

### **Արծրուն Հովհաննիսյան**

ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար, ռազմական վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ, զբաղվում է ռազմարվեստի պատմության և տեսության, սպառազինությունների զարգացման հարցերով, ինչպես նաև տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների ուսումնասիրությամբ:

### **Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր Արևելքի տարածաշրջանային միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող է: Զբաղվում է Թուրքիայի նորագույն պատմության և տարածաշրջանային անվտանգության խնդիրներով:

### **Նարեկ Գալստյան ք. գ. թ., դոցենտ**

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ է: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է եվրոպական ինտեգրման ռազմական և քաղաքական ասպեկտները, եվրոպականացումը, տարածաշրջանայնությունը, ՀՀ և ԵՄ-ի արտաքին և անվտանգային քաղաքականությունը:

## AUTHORS

### **Araks Pashayan (PhD), assoc. prof.**

Senior Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include domestic and foreign political issues of Arab Countries, Organisation of Islamic Cooperation, as well as “political Islam”.

### **Vahram Petrosyan (PhD)**

Associate Professor of the Department of International Relations and Diplomacy of the Faculty of International Relations of the Yerevan State University (YSU). He is also the head of the Department of Armenian-Kurdish Relations at the Institute of Armenian Studies, YSU. Main fields of his research include the problems of Kurdish studies and the Turkish and U.S. foreign policy issues.

### **Natalia Slobodyan (PhD)**

Senior Research Fellow at the Department of the problems of Military and International Humanitarian Law at the Military Institute of T. Shevchenko, National University of Kiev. Main fields of her research include the study of U.S. and Russia foreign policy instruments in the Middle East region as well as the domestic and foreign policy issues of Persian Gulf countries in the context of globalization.

### **Aghavni Harutyunyan (PhD)**

Senior Research Fellow at the Department of Eastern Asian Studies at the Institute of Oriental Studies, NAS RA. Main areas of her research include China’s foreign policy in the Middle Eastern, Eurasian and Asia-Pacific regions.

### **Narek Mkrtchyan**

PhD student at YSU, Department of World History. The scope of his research refers to the comparative analysis of Post-Soviet nation building of Inner Asia and especially that of Kazakhstan.

### **Artsrun Hovhannisyan**

Press Secretary of MoD of RA, defense analyst. The main fields of his research include the warfare and defense theories, armament technologies, regional military-political issues.

**Vahram Ter-Matevosyan (PhD)**

Senior Research Fellow of the Department for Regional International Relations Studies of the Middle East at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include the modern history of Turkey and regional security issues.

**Narek Galstyan (PhD)**

Associate Professor at the Chair of Political institutions and processes of the Faculty of International Relations of YSU. His professional interests include political and military-political aspects of European integration, Europeanization, Regionalism, Foreign and Security policy of RA and EU.

## АВТОРЫ

### **Аракс Пашаян к.и.н., доцент**

Старший научный сотрудник отдела Арабских стран Института востоковедения НАН РА. Занимается внутренними и внешнеполитическими проблемами арабских стран, изучением вопросов организации “Исламского сотрудничества ” и политического ислама.

### **Ваграм Петросян к. и. н.**

Доцент кафедры международных отношений и дипломатии Факультета международных отношений Ереванский государственный университет (ЕГУ). Заведующий отдела армяно-курдских отношений Института Армяноведческих исследований ЕГУ. Занимается изучением проблем курдоведения, а также внешней политики Турции и США.

### **Наталья Слободян к.и.н.**

Старший научный сотрудник, научно-исследовательского отдела проблем военного и международного гуманитарного права, Военный институт Киевского национального университета им. Т. Шевченко. Занимается изучение инструментов внешней политики США и России в ближневосточном регионе, исследует внутренние и внешнеполитические проблемы стран Персидского залива в условиях глобализации.

### **Агавни Арутюнян, к. и. н.**

Старший научный сотрудник отдела Стран Восточной Азии Института востоковедения НАН РА. Изучает вопросы политики КНР в ближневосточном, евразийском и азиатско-тихоокеанском регионах.

### **Нарек Мкртчян**

Аспирант ЕГУ, кафедры всеобщей истории. Сфера его исследований включает сравнительный анализ постсоветского государственного строительства Центральной Азии, в особенности Казахстана.

### **Арцрун Оганесян**

Пресс Секретарь МО РА, военный аналитик. Занимается вопросами военного искусства, военной теории и развития военной техники, изучает региональные военно-политические процессы.

**Ваграм Тер-Матевосян, к. и. н.**

Старший научный сотрудник отдела Исследований региональных международных отношений Ближнего Востока Института востоковедения НАН РА. Занимается изучением новейшей истории Турции и вопросами региональной безопасности.

**Нарек Галстян к.п.н.**

Доцент кафедры Политических институтов и процессов факультета Международных отношений ЕГУ. Профессиональные интересы включают политические и военно-политические аспекты европейской интеграции, европеизацию, регионализм, внешнюю политику и политику безопасности РА и ЕС.

ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԽԱՉՍԵՐՈՒԿՆԵՐ.  
ՆՈՐ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՀԱՏՈՐ II (2)

Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x100 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 8 տպ. մամուլ:

•

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am

